





ՀԱՔԻՆ

ԺԱ. ՏԱՐԻ 1972 ՍԵՊՏԵՄԲԵՐ

ԹԻԻ 9

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

*	Ի մտույ
Թ. ԴԱՐԲԻՆԵԱՆ	Կեանքիս գրքին (հատուած)
Ա. ՀԱՅԿԱԶ	Անաճօքը
Ա. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ	Արմատ եւ Հալիւն
Յ. ԿԱՐԱՊԵՆՅ	Կարքազէնի դուստրը (հատուած)
Ա. ԱՐՓԻՆԷ	«Ինծի նայէ, Սեդա...»
Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ	Կիցը՝ նման ծառի
»	Դուռ
»	Աղջիկը, որուն աչքերը
Յ. ՉՈՐԵՑԻ	Հայկական աղիւսքովէս
Ք. ՃԻՆՊԱՇԵԱՆ	Արձանը
*	Մահ՝ Նշան Պէշիկթաշլիանի
Լ. ՄԿՐՏՁԵԱՆ	Մասնակիւն եւ ընդհանրականը
Ն. ՉԱՐԿՈՒՏԵԱՆ	Ժերար տը Ներվալ
Ա. ՏՕՆՈՅԵԱՆ	Տագնապահար երիտասարդութիւնը
ՄԱՐԹԻՆ ԷՍԼԻՆ	Ժամ ժրմէ (Հայացուց՝ է. Սարահեան)
*	Կոչ՝ Արամ Հայկազի յորելիանին առիթով



159-2000

Բազմ

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒՐԵԱՆ ԵՎ ԱՐՈՒԵՍՏԻ

ԺԱ. ՅԱՐԻ, ԲԻԻ Ծ

ՅԵՊԵՏՄԱՆ 1972

ՊԵՏՐՈՒՐ

Ի Մ Օ Տ Ո Յ

Ի ծառայ, հայ ընթերցողին կը մատուցուին հասարակ տեղանք հինգ նոր գործեր, Համազգայինի տպարանին՝ երկու հատոր, երկու հատոր՝ Առաջին եւ հետ մը՝ Անթիլիանին, հետեւեալ խորագրերով եւ ստորագրութիւններով:

Գեորգի Գրիգոր, Ռ. Դարբինեան,
Եփրատիստանի լեռներուն մէջ, Ա. Հայկազ,
Եփրատ եւ Եւփրիս, Ա. Կիրակոսեան,
Գարշապէթի զուտը, Յ. Կարապէտ,
Էջմիածնի քարին, Ա. Արփին:

Հատորները լոյս կը տեսնեն Պէտրոսի տպարաններէն, քայքայ հեղինակները, ինչպէս կը տեսնէք, որոնք ալ ամերիկահայ շրջաններ են: Եւ մասնակ առկային, որ ամերիկահայ մեր շրջաններուն այս տարի մամուլին յանձնած գործերուն լրիւ ցանկը չէ տարի: Պահ եւ ուրիշներ: Մենք կրցանք արագորէն այս հինգը յիշել եւ միաժամանակ լուրը հաղորդել ընթերցողին պարզ այն պատճառով, որ անոնց խմբագրական աշխատանքներուն մէջ զբաղուինք թերաւ իր որոշ մասնակցութիւնը:

Այս հինգը կը բաւեն սակայն, անգամ մը եւս ընդդէմէս այն հանրայայտ իրադրութիւնը, որ Ամերիկայի մեր զաւուսը, հակառակ հայ ժողովուրդի տարագիր բնիւթները բնականօրէն ընդ տարակայան պայմաններուն, իր տաղանդաւոր զաւակներուն երկունքով եւ նոյնպէս անուանի իր մամուլին էջերուն արձանագրեց պատմական, մշակութային ու գրական մեծ նուաճումներ:

Հատորներէն երկուքը վերահասարակութիւններ են, միւսները նոր գրութիւններով ամբողջացած կամ բարելոմներ նոր տեսլականներով լեռներ են:

Փաղափար մը տալու համար միաժամանակ լոյս տեսնող այդ հինգ հատորներուն մասին, յաջորդող էջերուն վրայ կու տանք իրենց մեծ յետադիմութիւնը, որոնք իւրաքանչիւր պատկերներ կը պարզեն ընթերցողին աչքին. Ռ. Դարբինեան՝ կը բերէ մտայնութիւն մը եւ նոր առաջնաւորութիւն վարժը, Ա. Հայկազ՝ իրարու բախող զորաւոր բարձր, Ա. Կիրակոսեան՝ հին արժանաւորութիւն վրայ նախադրեց իրենց մը նոր բողոքները, Յ. Կարապէտ՝ արդէ քաղաքապետութեան վաղեմի հակադրուող յանձնարարական մեծագործութիւններուն շունչը, Ա. Արփին՝ վերաւոր հոգիներուն թախիծը նախ եւ ապա անոնց բուժման բերկրանքը:

Հինգ նոր գրութիւններ, Կարգադրութիւն: ...

569-139



Ռ. ԴԱՐԲԻՆԵԱՆ

ԿԵԱՆՔԻՍ

Գ Ր Ք Է Ն

•

Պժրագրական «կուլեդիա» կոչուած ինն հոգիներ մարմնի ժողովները տեղի կ'ունենային ամիսը մէկ անգամ միայն: Այդ ժողովներուն ես զեկուցում կու տայի առաջիկայ թիւին համար ընտրած նիւթերու մասին: Այս կտմ տյն նիւթին դէմ երբ առարկութիւն ըլլաք, բնականաբար տեղի կ'ունենար վիճարանութիւն: Կրնամ ըսել, սակայն, թէ ես գրեթէ միշտ կը յաջողէի պաշտպանել եւ ընդունիլ տալ իմ ընտրած բոլոր նիւթերը:

Հետաքրքրական է, որ ստացուած բանաստեղծութիւններուն դէմ ամէն անգամ շատ բուռն առարկութիւններ կ'ընէր Սրուանդ Թադիանոսեանը, եթէ նոյնիոկ անոնց հեղինակները Յովհ. Թումանեանի կամ Վահան Տէրեանի նման տաղանդաւոր բանաստեղծներ ըլլային:

Օր ժը, Կ. Կրասիլնիկեանը, ինքն ալ բանաստեղծ, հարցուց, թէ ինչո՞ւ են հակառակ էր բանաստեղծութիւններուն: Եւ Եր. Թադիանոսեանը, անոր պատասխանելու համար, վերցուց «Գործ»-ի մէկ թիւին մէջ տպուած բանաստեղծութիւններէն մէկը եւ, տալով անոր, ըսաւ.

— Կարդացէ՛ք, խնդրեմ:

Երբ Կ. Կրասիլնիկեանը կարդաց, Եր. Թադիանոսեանը ըսաւ.

— Այժմ էլ յետեւից, այսինքն՝ տակից կարդացէ՛ք:

Երբ այդ ալ ըրաւ Կ. Կրասիլնիկեանը, Եր. Թաղիանոսեանը դարձաւ մեղի եւ բացառանչեց.

— Այս ի՞նչ տեսակ գրութիւն է, որ երբ առջեւից էլ կարդաս, յետեւից էլ կարդաս, միեւնոյն բանն է դուրս գալիս:

Բաւոյր ալ խնդացինք՝ անդամ մը եւս համոզուելով, որ անիմաստ էր Եր. Թաղիանոսեանի հետ վիճելը բանաստեղծութեան մասին: Ան իր երկ-տասարդ ժամանակին իւրացուցած էր նշանաւոր ռուս քննադատ Պիտաբեւի բացատրական վերաբերումը զէպի քանոնադրները, Պիտաբեւի, որ նոյնիսկ մեծադոյն ռուս բանաստեղծ Ալ. Պուշկինին խորհուրդ տուած էր կօշկակա-րութիւն ընել, փոխանակ քանոնադրութիւն գրելու: Եւ այդ՝ ա՛յն պատ-ճառաբանութեամբ, որ կօշկկը պէտք է մարդուս, իսկ բանաստեղծութիւնը ոչ մէկ բանի համար պէտք է:

Հարկաւ ես որեւէ կարեւորութիւն չէի տար Եր. Թաղիանոսեանի կար-ծիքներուն եւ կը հրատարակէի մեր ստացած բոլոր արժէքաւոր բանաստեղ-ծութիւնները: Եւ ամէն անգամ, երբ «Գործ»ի թիւը լոյս կը տեսնէր, Եր. Թաղիանոսեանը կը մոլղէր մօտօ եւ վրդովուած կ'ըսէր.

— Նորի՞ց այդ անպէտք բաները թիմել էք: Մեզք չէ՞ թուղթին, ծախ-սին: Ո՞վ է կարգադրը:

Եւ ամէն անգամ ալ կը հանգստացնէի զինք՝ բացատրելով, որ բաց պզտիկ տեղեր կային մեծ նիւթերու միջեւ եւ պէտք էր բանով մը լեցնել այդ բացերը:

Եր. Թաղիանոսեանը, որ մասնաւոր տկարութիւն մը ունէր ինծի հան-դէպ եւ ինծի կը ներէր այն, ինչ որ ուրիշներու պիտի շնորհէր երբեք, ժպտե-լով կ'ըսէր.

— Լաւ, լաւ, բայց միւս անգամ այդ չանէք այլեւս:

Բայց ամէն անգամ նոյնը կը կրկնուէր եւ, Եր. Թաղիանոսեանը, թէեւ միշտ ալ շատ կը նեղուէր, բայց կը հաշտուէր ի վերջոյ, «այդ անխուսափելի չարիքին» հետ:

«Գործ» ամսագրի հայ մամուլի պատմութեան մէջ բերած մեծագոյն նորութիւնը՝ բոլոր աշխատակիցներուն տրուած աննախընթաց վարձատրու-թիւնն էր:

Այսպէս, այն ատեն, երբ Բազումի ռուսերէն թերթերուն խմբագիրնե-րը ամսական 500-600 ռուբլի հազիւ կը ստանային, «Գործ»ի հրատարակիչ հայ մեծահարուստները խմբագրին ատկէ երեք անգամ աւելի ռոճիկ կը վը-ճարէին: Ատկէ զատ, խմբագիրը ատանձին կը վճարուէր նաեւ իր յօդուած-ներուն համար:

Յօդուածագիրներուն ամէն մէկը պրակին (16 էջ) համար կը վճարուէր 150 ռուբլի նուազագոյնը, իսկ դեղատուեստական դրուածքներուն համար ատոր կրկնապատիկը:

Հրատարակիչներու հաւանութեամբ՝ խմբագրական «կոյնքիան» որո-ւեց խոշոր կապիտալիստներ ընել բոլոր աշխատակիցներուն՝ անմիջապէս, որ անոնք ընդունէին աշխատակցելու մեր հրաւերը: Իսկ մեր նշանաւոր գրող-ներէն ոմանց ալ, որոնք նեղութեան մէջ էին, կանխավճար զրկուեցաւ, ա-ռօնաց սպասելու «Գործ»ին աշխատակցելու անոնց հաւանութեան: Այսպէս, հետագայում 1000ական ռուբլի զրկեցինք Յովհ. Թումանեանին, Ալ. Շիրվան-պաղէին, Վահան Տէմեանին եւ քանի մը ուրիշներու:

Յովհ. Թումանեան, դրամը եւ մեր հրուէրը քտանայէ ետք, պատա-

խանեց իրեն յատուկ խանդավառութեամբ երկար հեռադրով մը, որով՝ կը հաղորդէր, թէ հարկաւ պիտի աշխատակցէր, քանի որ իր կեանքին մէջ առաջին անգամ էր, որ նման սքանչելի բան մը կը պատահէր, եւ թէ՛ հայ մամուլի պատմութեան մէջ փառաւոր դարադուր մը կը բանար «Գործ»ը հայ դրագլանները այդքան աննախընթաց առատութեամբ վարձատրելու նոր ցրութեամբ:

Միւս բոլոր հայ գրողները, որոնց դիմում ըրինք աշխատակցելու համար, նոյնքան խանդավառ պատասխաններ տուին: Միակ բացառութիւնը կաղմեց Աւետիս Աւարտեանը, որ չպատասխանեց իսկ: Բայց երբ քանի մը ամիս ետք թիֆլիսէն եկաւ Բաղաս եւ ես հարցուցի իրեն իր այդ վերաբերման պատճառը, վրդովուած ըսաւ.

— Ինչպէ՞ս ես կարող եմ աշխատակցել մի պարբերաթերթի, որ հազարաւոր անգամ քիչ է:

Երբ իրեն բացատրեցի, որ «Գործ»ը հազարաւոր անգամ քիչ է եւ իր կրթարդիւնը երբեք, որքան որ ես եմ անոր պատասխանատու խմբագիրը, բացառանշէց.

— Բայց չէ՞ որ ձեր խմբագրական մարմնի բոլոր անդամներն էլ հազարաւոր անգամ քիչ են: Դուք ինչպէ՞ս պիտի կարողանաք նրանց հետ միասին ոչ-հազարաւոր անգամ քիչ խմբագրել:

«Գործ» թիւթի տեսնէ՞ք, եթէ մինչեւ այժմ լոյս տեսած թիւերից տեսած չէք ինչ արդէն, — պատասխանեցի:

Բարեբախտաբար, «Գործ»ը ո՛չ միայն հազարաւոր անգամ քիչ չէր, այլեւ անոր հազարաւոր անգամ քիչ չէր ինչպէս, որքանից, Դուք ինչպէս, որ խմբագրական մարմնի ալ անդամ էր եւ Բաղաս ինքնանշէր՝ Դաշնակցութեան ջերմ բարեկամներ դարձան ու Հայաստանի Հանրապետութեան օրերուն Դաշնակցական կառավարութեան ամենէն վստահելի եւ ջերմ պաշտպանները եղան:

Հետաքրքրական է, որ ընթերցողներու մտքին վրայ «Գործ» ամսագիրը ա՛յն տղաւորութիւնն էր ձգած, որ Դաշնակցական օրդան մըն էր: Եւ այդ նախնական, որ տարիներ յետոյ, երբ Վահան Նաւասարդեանի ներման ընթերցող մը անգամ Հ. Յ. Դաշնակցութեան 60ամեակի առթիւ ցուցադր կը կազմէր Դաշնակցութեան հրատարակած բոլոր թերթերուն, կը մասնակցէր «Գործ»ին՝ այն մտքով այդ ցանկին մէջ եւ պէտք տեսաւ ինծի հարցնելու անոր: Բարեբախտաբար, խորհուրդ չտուի ընելու այդ, քանի որ «Գործ» թիւթի ինչպէս իր բովանդակութեամբ կրնար նկատուիլ Դաշնակցական թերթ չէ, «Գործ» Դաշնակցութեան հրատարակութիւնը չէր:

Գնդակի դիպակուն

Գանաւ մուգ մտաւոր

Այդ օրերուն էր, որ օր մը Պերլինի իմ բնակարանը ինծի այցելութեան հարկաւ պիտի մտնէր (ետքը եղիսկոպոս) իր տիկնոջ հետ: Ինքզինքը՝ Գեորգի Գեորգիւի մարտիկական մարտիկ հայերէնով եւ շարունակեց հետս խոսիլ հայերէնով դեռ ինչ:

— Եւ, ամեն ինչից անտարբեր լինելու եւ ինչպէ՞ս էր այդքան լաւ հայերէն սորվել, որպէս ինչպէս Պերլինի մարտիկական մարտիկ Գեորգի Գեորգիւի մարտիկ հայերէնով եւ շարունակեց հետս խոսիլ հայերէնով դեռ ինչ:

Որքան դարձանալի գիտելիքն էր հաճելի էր այդ տիպար զերմանացիին հայերէնը: Գեորգի Գեորգիւի հարազատ էր, որ եթէ զայն չտեսնէի եւ

մարտիրոսի մը հետեւէն միայն լսէի իր ձայնը, պիտի կարծէի, թէ խօսողը հայ մտաւորական մըն է :

Մեր դերմուն թարեկամներէն իմացած էր իմ հասցէն եւ եկած մօտս, անսպասելի խնդրանքով մը: Ըսաւ.

— Տոբթ. Լոհմունի հետ նոր ենք վերադարձած երկար եւ խիստ հետաքրքրական պատյոյտէ մը Թրքահայաստանի գաւառներուն մէջ: Ինչէն տեղ պատահութիւն ունեցանք ծանօթանալու նաեւ ձեր յեղափոխական ընկերներուն: Թէեւ շատ ուշագրաւ եւ սպաւորիչ բաներ շատ տեսանք, բայց ամէնէն աւելի խորունկ կերպով տպաւորուեցանք մա'նաւանդ. ձեր ղեկավար ընկերներէն, անոնց զմայելի զոհաբերող ոգիէն, անոնց պարզ, նահապետական կենդանի, անոնց անհաւատարի աշխարհայեցողութիւնն եւ ինքնամոռացումէն: Մեր ճամբորդութեան ընթացքին յաճախ մեղի կը թուէր, թէ ինկած ենք քրիստոնէութեան առաջին դարերու միջով: Եւ մեր առջեւ կը դառնային այդ երանելի օրերու իրական քրիստոնեաները: Արդարեւ, ոչ թէ մենք՝ քրիստոնէական միախոնարհներ ենք իրական քրիստոնեաները, այլ անոնք. թէեւ մենք քրիստոնէութիւնը կը քարոզենք, բայց անոնք, յեղափոխական ըլլալով հանդերձ, կ'ապրին քրիստոնէական կեանքով, ինչպէս կ'ապրէին քրիստոնէութեան առաջնայինները եւ ուրբերը, ինչպէս եւ պէտք է ապրին իսկական քրիստոնեաները, եթէ հաւատարիմ են քրիստոնէական կրօնի ոգիին, սկզբունքներուն եւ աւանդութիւններուն:

— Կրնա՞ք յիշել անունները մեր ընկերներուն, որոնցմով այդքան հիացած էք, — հարցուցի՝ ընդմիջելով Տոբթ. Զոմմէրի մեղի համար այնքան սրտապնդիչ խօսքերը:

— Այո՛: Կը յիշեմ Արամը, Իշխանը, Սարգիսը, Վասմեանը, Տոբթ. Զաւրիւրը եւ ուրիշներ: Տոբթ. Լոհմանը եւ ես մեր ճամբորդութենէն վերադարձանք այն համոզումով, որ ոչ թէ մենք՝ եւրոպական միախոնարհներս պէտք է Թուրքիա կամ Հայաստան երթանք՝ քրիստոնէութիւն սորվեցնելու. ձեր ժողովուրդին, այլ ձեր՝ Դաշնակցական դործիչները պէտք է գան Եւրոպա՝ իրենց կենդանի օրինակով իրական քրիստոնէութիւն սորվեցնելու. մեր ժողովուրդին: Եկած եմ այժմ ձեր մօտ՝ խնդրելու, որ յանձն առնէք Հայթայթի մեղի կենսադրականները ձեր այն անձնագրէն ընկերներուն, որոնք այսօր, ձգած իրենց շատ աւելի հանդիսա կեանքը Կովկասի մէջ, զայսած են Թրքահայաստան եւ կը գործեն Հոն: Այդ կենսադրականները մենք կ'ուզենք հրատարակել մեր միախոնարհական պարբերաթերթին մէջ: Անոնց օրինակելի կեանքէն շատ բան կրնան սորվիլ մեր ընթերցողները:

Դժբախտաբար, այն ատեն ես ի վիճակի չէի անձամբ կատարելու իր խնդրանքը: Տուի Ժընեւի մեր հասցէն՝ բռնիով, թէ Վերջապահ խմբագրութիւնը կրնայ դէժ հափով մը գոհացում տալ իրենց, որով՝ լաւագոյնն է Վերջապահի դիմել:

Շատ ուշ միայն իմացայ, որ Տոբթ. Զոմմէր դիմած էր, եւ այնտեղէն ալ դրկած էին քանի մը պղտիկ կենսադրականներ, որոնք հրատարակուեցան Տոբթ. Լոհմանի միախոնարհական կազմակերպութեան պարբերաթերթին մէջ:

Ռ. ԳԱՐԲԻՆԵԱՆ

(«Կեանքիս գրքի») ,

ՆԱԽԱՐԱՐԱՆԱՆՈՒՄ



ԱՐԱՄ ՀԱՅԿԱՋ

ԱՆԱՄՕՐԸ

Սով էր: Ահաւոր սով: Իսկ ձմեռը... Ո՛վ չէ տեսած Քիւրախասանի լեռներուն երկարատեւ ձմեռը, ձմեռ չէ տեսած:

Դժուար, շատ զգուար այդ օրերուն, Թուրքիա դեռ կը յաճառէր մնալ պատերազմի մէջ, ա՛յլ աւելի թշուառացնելով արդէն իսկ թշուառ ու հաշտկարօտ իր բնակչութիւնը:

Պետութեան պահանջները՝ իր պատերազմական ճիգին համար, վերջ չունէին: Ուտելիք, կաշի, բուրդ, միս ու իրրիւ փոխադրական միջոց պարծածուելու համար՝ անտեսէն:

«Նազլիէ քաղութիւն» կոչուած շալակաւորներ, անգլուներու մէջ ուտելիք շտամայով, կը դողնային բանակին համար ուսմանուած իրենց շալակի սննդե-

ղէներէն: Մաքուր ցորենը, Երզնկա հատնելէ առաջ, հողի եւ յարդի անսրա-կելի խառնուրդի մը կը վերածուէր՝ պողպատէին տեղ աւելցուած այդ օտարոտի նիւթերով:

Կենդանիները կմախք կը դառնային. ու ձիերը, անօթի մնալով, կը կրծէին իրենց բնկերներուն պոչերը:

Սով էր: Ահաւոր սով: Ու ձմեռ: Քիւրախասանի լեռներուն ձիւնով ու մըր-րիկներով հարուստ ձմեռը:

Ու դեռ Փետրուար չէր: Ամէն մարդ գիտէր, թէ այդ ամսուն էր, որ զայլիւրը, կրծելու բան մը գտնելու համար՝ դիւղ իջնել կը յանդգնէին:

Մեր բնական տունը, դիւղի ծայրին, տուներու հասած տեղը շինուած էր, եւ կամուրջին ու իր ետեւ տարածուող ըն-

զարձակ ամայութեանց, ձորերուն ու արօտատեղիներուն վրայ էր, որ կը նայէր:

Ուշ գիշերով, ու հրացանը միշտ ձեռքս պտտարարող ու մատս բլթակին վրայ, երբ դուրս ելլէի բուքը անտեսելով, ոտքիս տակ ճզճզացող առանձնիկ աղմուկէն սարսափած, պայլերը խուժով կը փախէին ամէն ուղղութեամբ: Իրենց ետեւէն արձափած բազմաթիւ գրնդակներէս ոչ մէկը օր մը յաղողեցաւ մէկը վար բերել... Թերեւս ալ բերաւ, ու անոնք վերադառնալով լափեցին իրենց ընկերք: ո՛վ գիտէ...

Գայլերու վտանգէն զատ, կար նաեւ Էջֆրաններու վտանգը: Մեր բարեկամ Հասանի սպանութեամբ, մենք խոցելի էինք դարձած: Ու եթէ անոնք օր մը յանկարծ մեր դիւղը արշաւելու որոշում տային ու պայլն հիւսիսէն, ինչ որ անհաւանական էր, պէտք էր նախ մեզ ընտելէին կամ մեր դիրքերը գրուէին: Այս բաները նշկատի ունենալով պատարաստուած էինք, հակառակ անոր, որ դիտէինք, թէ մեր արհամարհելի ուժով կէս ժամ իսկ չէինք կրնար պահել մեր դիրքերը: Օգուտը այն էր, որ կրնէր իրենք դիրքէն ապահովել արշաւանքներէ ու անհանգումներէ պաշտպանուած կը զգային եւ այդ ալ քիչ օգուտ մը չէր: Այդ հաւատքը անասան պահելու եւ մեր շուրջիներն ալ տպաւորելու համար, գիշեր-ցերեկ, մանաւանդ գիշերները, մեր ձեռքերէն մէկն ու մեր աչքերը պատէն կախուած հրացաններուն ու փամփշտակալներուն վրայ էին. մէկ խօսքով՝ օրը քսանընթաց ժամ պատերազմական դիմակի մէջ կ'ապրէինք: Ես, զէնքը բարձր բաժ, տան կից գոմին մէջ սաքու մը շինած, միւս Խիւրին սքանչելի ձիուն քովը կը քնանայի: Սպասաւորներէն Պոզնի գրան առնելը կը ննջէր եւ Հասանը՝ յարգանքի մէջ: Վտանգի կամ ահապանքի պարագային, մեր ամէն մէկուն բռնելիք դիրքը կանխորոշուած էր, ինչպէս կանխորոշուած էին նաեւ մեր անքուն հսկողութեան պահերը:

Գիշեր մը, երբ հիւսիսային օճախին մէջ բոցը կը ճարճատէր եւ դուրսը սառնորդ քամին սարսափողաբանութեամբ ունի կը պատմէր, մտահոգ միւտիւրը իր ընտանիքը Ելլիճէ փոխադրելու մասին խօսք բացաւ.

— Գա'րը (կին), — ըսաւ, — կարծեմ լաւ կ'ըլլայ, որ դուք Ելլիճէ շէնլիֆի (բաղմունի) մէջ փոխադրուիք: Հոն նուազագոյնը 400 ընտանիք կայ եւ աւելի ապահով է, այստեղի պէտքէ տասը հոգի կրնան դրուել այս դիւղը: Հոն, գիւղի կեդրոնական մասին մէջ, բնակարան մը կը վարձեմ ձեզի համար:

— Աղէ'կ, ենթադրենք, թէ փոխադրուեցանք, բայց հոն ո՞վ պիտի մնայ մեր քովը, ո՞վ պիտի հսկէ մեր վրայ, ո՞վ ըլլայ մեզի...

— Միւսլիմը:

— Միւսլիմն:

Երկար լռութենէ մը ետք՝

— Ես ալ կու գամ բերեմ:

— Բայց մեզի հետ չեղած բոլոր ժամերուդ պիտի մտածենք քու ապահովութեանդ մասին եւ, փոխադրեալուդ, դուն ալ՝ մեր: Դուն ո՛ր, մենք ալ հոն:

— Այո՛, ի՞նչ ընենք, Երզնան հոս է. ես չեմ կրնար այս տեղէն հեռանալ, չեմ կրնար շուրջ ժամ հեռուէն այս տեղի գործերը վարել. Աստուծոյ կամքը ինչ որ է ա՛ն կ'ըլլայ...

Այսպէս, մեր գործերն ու ապահովութիւնը Աստուծոյ մտահաճ՝ զացինք պատկելու: Ծառ էինք քնացած թէ քիչ, դժուար է ըսել, ահաւոր, սրտակեղծ կոչէ մը արթնցանք: Մատկեցի սաքուէս վար (պտուկած էի հազուադէպ), դուրան ետեւէն խնցի հրացանս ու ամէնէն առաջ նետուեցայ դուրս:

Բակին մէջ, տեղաւ սկսող միւսին տակ (դեռ ինքնընդեզ ճերմկի սկսած էին), մերկ, բոլորովին մերկ, մօրէ՛ մերկ կին մը կու լար, կը պալարուէր ու բաներ մը կ'ըսէր:

Մինչեւ միւսներուն ալ արթնանալ ու ահաբեկ դուրս նետուիլը, ես արդէն աղմուկարարին քովն էի:

— Ի՞նչ է, ի՞նչ պատահեցաւ:

— Տարին, տարա՛ւ... Խաղժմընէ, տարա՛ւ... երեխաներուն ղուրաաղը (հոգեպահուստը) տարա՛ւ, զողջա՛ւ... Միւտիւր բէկս, միւտիւր բէկս, բան մը ըրէ, բռնէ... տարա՛ւ...

— Ո՛վ տարաւ:

— Տագրս:

— Ո՛ր կողմը դնաց:

— Ձեմ գիտեր... Կէս քուն, կէս արթուն էի, աղմուկ մը լսեցի, բացի աշտըրս եւ տեսայ, որ դուռը բաց է եւ երկինքը կ'երեւի, ձիւնը ներս կու գայ: Նայեցայ քովիս անկողինը պարապ էր, հասկցայ, տագրս, ունեցած քիչ մը աշտըրս զողջեր-փախիւր էր:

Շարունակութիւնը եւ վայ-վայերը լսելու պէտք չունէի: Ենթադրելով, որ ան Ղանդաղի կողմէն է դացած, վազեցի դէպի կամուրջը եւ սպիտակ ձիւնին վըրայ շարժուն սեւ կէտ մը որոնեցի, աշտըրս խաւարին մէջ լայն բացած: Յանկարծ լսեցի միւտիւրին ձայնը, որ զիս կը կանչէր.

— Միւտիւր, օյամ Միւտիւր՝...

— Էֆէնտիւմ, Էֆէնտիւմ...

Հասայ իր քով:

— Կէլտիւմ:

— Ապո՛ւշ, օպտա՛լ, սերսերի՛...

Ձե՛ս տեսներ, որ առ տունին պաշտպանութիւնը չէզոքացնելու համար կատարւած խաղ մըն է եղածը...

— Խարուեցայ, կը ցուիմ...

— Խարուելիք բա՛ն է, խելք չունի՞ս, ա՛լ ես ինչպէ՞ս վրադ կրնամ վստահիլ... Վազեցի կանխորոշուած դիրքս, դիմացի տան ծխնկոյղին ետեւը եւ բուռի աչքերս յառեցի խաւարին:

Բան մը չպատահեցաւ: Ձայն-ձուն չկար: Ձիւնն էր, որ կ'իջնէր խաղաղ, խոշոր, օպիտակ փաթիլներով: Գետինները լաւ մը ճերմկեցան ու դիմացի սառը իր շրջագծերը խառնեց երկնքին: Ուսերուն ալ ձիւն իջաւ:

Վերջապէս, համոզուած, որ վտանգ մը չկայ, կանցեցին ներս:

— Կի՛լ ի՛շերի, պի՛ր շէ՛յ եօ՛ք:

Բայց քուն չունէինք:

Կրակը նորոգեցինք օձախին մէջ եւ շուրջը հաւաքուած՝ ուրախ-ուրախ սկըսանք խօսիլ:

— Տաքում, ինծի ռախի մը տուր,

— Ըսաւ միւտիւրը:

Տուի, խմեց:

— Հատ մըն ալ:

Հատ մըն ալ տուի:

Կնոջը ձեռքէն բռնեց եւ մեղի յանձնարարելէ ետք, որ մէնք ալ երթանք անկողին, զնաց պառկելու: Մնացինք եւ, Միւտիւրէն, Մեհրուզէն (միւտիւրին երկրորդ կինը) ու Գատրիէն:

— Բո՛ղը, քա՛ծը, անաճո՛թը, — բերանը բացաւ Մեհրուզէն, — մօրէ մերկ՝ եկեր միւտիւր կը կանչէ...

— Դուն անօթի մնացած ես, — հարցուցի:

— Ձե՛՛, չեմ մնացած, ատ ի՞նչ խօսք է...

— Ըսե՛լ ուզածս այն է, որ այդ ափ մը այլիւրը անոր ու իր զաւակներուն համար գոյութեան հարց էր, հետեւաբար ժամանակ չունեցաւ իր մերկութեան մասին մտածելու:

— Շատ միամիտ ես, ան հանուեցաւ, որ իմ մերկութիւնը ցոյց տայ միւտիւր բէկին:

— Ձեմ կարծեր, գիտեմ, թէ զըրմանները մօրէ մերկ կը պառկին:

— Ինչէ՞ն գիտես, — յանկարծ փըր-փըրեցաւ Գատրիէն:

— Ըսած են ինծի...

— Քաւ ինչո՞ւդ պէտք, որ նման բաներով կը հետաքրքրուիս...

— Մասնաւոր կերպով չեմ հետաքրքրուած, լուծ եմ սանկ, ի միջի այլոց...

— Ալլա՛հ, Ալլա՛հ... մօրէ մերկ պառկի՛լ... մօրէ մերկ փողոց իջա՛ւ... եւ գալ միւտիւրի դրան առջեւ օդնու-թի՛ւն պոռալ...

Եաջորդ առաւու, Գատրիէն բռնեց օձիքէս:

— Ծրէ՛կ գի՛շեր աղուոր մը նայեցա՞ր այդ կնոջ:

— Ըհը՛, — բարձրա՛հաս հաստատա-
կան ձեռով շարժելով։

— Խըյաննե՛ք։

— Խըյաննե՛ք ո՞րն է, Աստուած եր-
կու աշք է տուեր, որ նայինք, երկու
անգամ նայինք։

— Հետո մի խօսի՛ր, դուն անամօթ
ես։

— Ես ի՞նչ ըրի, ինչո՞ւ անամօթ պի-
տի ըլլամ... մերկ եղողը ես չէի՛...

— Նայելու՛հ համար։

— Կուգե՞ս որ ճշմարտութիւնը լու-
սեմ։

— Ըսէ՛։

— Նայելու ժամանակ չունեցայ։
զայի իր ալիւրը գողցողը փնտռելու։
Հայրդ էր, որ վախճալով, թէ եղածը
խաբէութիւն մըն է, ծուղակ մըն է, ետ
կանչեց զիս։ Երբ վերադարձայ, ան ար-
դէն դացած էր։

— Այո՛, անմեա վառեց զինք, «Ու-
թանմազ, անամօթ, կորսուէ՛ ասկէ», ը-
սաւ։ Յետոյ ըսէ ինծի, թէ ինչո՞ւ այդ-
քան անհամբեր էիր այդ կնոջ ծառայե-
լու...

— Որովհետեւ ազգատ է, խեղճ է,
որբեր ունի։

— Որբերուն հայրը դո՞ւն ես. իրենց
հայրը քեզի շափ եռանդ ցոյց պիտի չը-
տա՞ր։

— Ատանկ բաներ մի՛ բեր... Քեզի
պէս աղուորին՝ նման անսրտութիւն չի
վայելիր...

— Ամէն բանի պատասխան ունիս,
ամէն բանի մէջէն կ'ելլե՛ս, կը մաքրը-
ւի՛ս, կ'իսկալե՛ս...

— Հիմա եթէ մուծ ըլլար, քեզ կ'առ-
նէի թեւերուս մէջ ու կը համբուրէի այդ
կեանքուս ըսող բերանդ։

— Ես ալ կը ձգէի՛...

— Անշուշտ կը ձգէիր։

— Ձէի ձգեր։

— Կը ձգէիր։

— Ձէի ձգեր։

— Իրիկունը, այո՞։

Գլխով «այո» ըսաւ եւ երջանկօրէն
թռվումով փախաւ ներս։

Կէսօրէ ետք, դացի այդ դժբախտ
կիներ տեսնելու։

Իր բնական տան մէկ անկիւնը փափ
էր ու ձիւնը կու գար ներս։ Օճախին մէջ
թաց փայտի երկու ծայրեր կը մխային։
Ինք, ծուկները դրկած՝ անկիւն մը նստեր
էր ու ետ առաջ կը շարժէր։ Մինչեւ այդ
օր, ուշադրութիւն չէի ըրած. նկատեցի,
որ սիրուն կիւն մըն էր եւ դունաառութիւ-
նը շատ կը վայելէր իրեն։ Իր երեք որ-
բերը՝ Չ, Է եւ Յ տարեկան, կատուի մը
ձողը գտած կը խաղային հետը։ Գրեթէ
մերկ էին։ Անօթի։ Կանոնաւոր դիմազը-
ծերով ու ձուածեւ դէմքով։ Մայրերնին,
զիս տեսնելով, սկսաւ լալ։ Երբ քիչ մը
ալ յառաջացայ, ելաւ ոտքի, ափով իր-
րեւ թէ լորցուց արցունքները ու դիմա-
ւորեց զիս։ Ձէր լար, բայց արցունքները
մեղրի դոյն աշտերուն վրայէն կ'որ-կ'որ
կը հոսէին վար։ Հանրմները իրաւունք
ունէին նախանձելու։ Իր մարմինը, ցնցո-
տիներու տակէն իսկ, բարեձեւ էր ու
ներգաշնակ։ Դէմքը նուրբ էր, շրթները
բարակ եւ աչքերը՝ մուծ թարթիչներու
նուշով եղբորած։

— Ի՞նչ կ'ուզես, եկար զիս բա՞նտ
տանելու...

— Քեզ ինչո՞ւ բանտ պիտի տանի՞մ։

— Հանրմներուն հանգիստը վրդովե-
լուս համար։ Ձտեամբ, չլսեցի՞ր, թէ ե-
րէկ գիշեր ինչպէ՞ս նախատեսցին ու վարն-
տեցին զիս։

— Ես հոն չէի, դացեր էի տաղաւ
փնտռելու։ Երբ վերադարձայ՝ դուն հոն
չկայիր։

— Վաճառած էին զիս։

— Շատ ալ մի՛ նեղանար... Վերջա-
պէս մօրէ մերկ էիր։

— Վրաս առնելու բան մը չունէի, ոչ
ալ հագուելու ժամանակ։

— Ըսէ ինծի, գողը իրապէս տա՞ղա
է։

— Այո՛, ամուսնոյս մեծ եղբայրը։
Երէկ, իբր թէ այցելութեան եկաւ մե-
զի։ Յարգեցի, պատուեցի զինք, որբե-

բռնապետական կտրելով՝ իրեն կերցուցի։ Իրիկուն եղաւ ու պառկեցանք։ Գիշերը աղմուկ մը լսեցի, աչքերս բանալով դուռը բաց տեսայ եւ հասկցայ, որ բան մը կ'անցնէր—կը դառնայ։ Վաղեցի ալիւրիս պարկին քով, պարկը — արդէն շատ բան մըն ալ չկար մէջը — իր տեղը չէր։ Մընացածը գիտես... Զարմանալին այն է, որ երէկ գիշեր, երբ նստած մեր նեղ օրերուն ու դալիք ալ աւելի նեղ օրերուն մասին կը խօսէինք, ըսաւ, թէ ինք իմ-բանիէ կ'երթայ, հոն բարեկամ մը ունի եւ այդ բարեկամէն կ'որեկ ստանալու յոյս ըսաւ երբ առնէ, պիտի չմոռնայ եղբոր Եթիմեոսը... ու շփոթեցաւ...

Ալ շերցաւ շարունակել։ Շարունակելու պէտք ալ չկար, յայտնի էր մնացածը։ Մեղք, որ նախորդ գիշեր դաշտ չէի կրցած բռնել...

Բոլորովին անտէր ու բոլորովին անօթի էին ահա այդ չորս խեղճերը։ Յանկարծ միտքս ինկաւ, որ մօտ տարի մը առաջ, մենք ալ, մայրս, իր հարսներն ու թոռները, նոյն կացութեան մէջ էինք։ Ախ, հիմա ո՛ւր են, ի՞նչ եղան, մտածեցի եւ սիրտս յորդեցաւ գորովով ու կարօտով։

Ելայ դուրս։ Այդ վրած տան մէջ օդ չկար կարծես եւ շունչս կը կտրէր։

Շիտակ դասի գիւղի մօտ թաքնուած տունը։

— Մե'րհապա, մօտ թաքնուած։

— Մե'րհապա։ Նորէն ի՞նչ գէշ լուր ունիս, նորէն ինչերնի՞դ է պակաս, ուսանորժ պե՞...

— Գիտը չտեսած փաշաներդ վեր մի սոթուր... Ինծի համար, տէօվլէթին համար չէ, որ բան մը ուզելու եկած եմ։

— Եի'ւքիւր Ալլահա... Ուրեմն փառք Աստուծոյ, ուզածդ ի՞նչ է։

— Ողորթիւնդ։

— Ատ չի բաւեր, գիտեմ, լիզուիդ տակ ու մտքիդ մէջ բան մը ունիս։

— Մոխրիւր, դուն սիրտ ունի՞ս։

— Ունէի, բայց երբ տեսայ, որ կը տուժեմ, ծախեցի գոյն։

— Գէթ կէ'ն ալ չպահեցիր քեզի։

— Վաղ անցիր այդ խօսքերէն։ Ուզածդ ի՞նչ է։

— Գիտես, որ երէկ գիշեր ի պոյնեց հարսին տունը դող մտաւ ու տարաւ ունեցած—չունեցածը։

— Այո', գիտեմ։

— Իրրեւ գիւղին մեծը, ի՞նչ կը մըտադրես ընել։

— Ե՞ս, ես ի՞նչ կրնամ ընել, տէօվլէթը, Կէօփլալէթը ես չեմ... փոխիս, ժամաւարմա չունիմ դողին ետեւէն զրկելու համար...

— Ճիշդ ես, այդ բաները չունիս, բայց ուրիշ բան ունիս եւ ուրիշ բան կրնաս ընել։

— Ի՞նչ։

— Կրնաս սանկ պղտիկ հանդանաւու թիւն մը ընել տալ գիւղին միջոցաւ։

— Ժողովուրդին քով նա՞լ մնաց, որ հանդանաւութիւն ընել տամ։

— Այդ քու նալ չմնացած ժողովուրդդ ալիւրի տոպրակ է, քանի թօթւեա՞ բան մը գուրս կու գայ։

— Ճաշիւր, դուն ի՞նչ փէշերդ դօտիդ մէջ կ'օրած մէջ ես ինչեր, քիւրտ մը աւելի, քիւրտ մը պակաս։

Նեղուեցայ։ Արհամարհական տկարեւ մը նետեցի իր վրայ եւ գլուխս բարձր բռնած՝ դուրս ելլելու համար կռնակս դարձուցի իրեն։

— Հոս եկուր, — պոռաց ետեւէս։

Կարեւորութիւն չտուի։

Վաղելով հասաւ ետեւէս ու թեւէս ամուր մը բռնեց։

— Ձգէ', թեւ ճգմեցիր։

— Ի՞նչ կ'ուզես որ ընեմ։

— Ըսի, չէ... Երբ պետութենէն իւղ, ալիւր, դրամատ, մորթ հաւաքելու հրաման դայ, ի՞նչ կ'ընես, դուն կամ զղիւր դուռնէ դուռ պտուղիւղով, պահանջուածը մէջտեղ կը բերէք. առ ալ ատոր պէս բան մըն է։

— Հասկցայ։ Կ'ընեմք։

— Երկու հողի ալ դուրս ու տունին վրած անկիւնը կարկտեւ տուր։ Մեղք են, մեծ են։

— Եղած սեպէ։

— Մուխթար, դուք բարե մարդ ես, ինչպե՞ս պիտի առնես ինքդ։

— Քեզի բան մը կ'ընամ հարցնել, — ըսաւ։

— Հարցուր, — ըսի։

— Բայց չիտակ պիտի խօսիս։

— Վա՛լլաքի, չիտակ կը խօսիմ։

— Դուն ալ չես խօսի, չես կը պատկերաս։

— Ալլա՛հ, Ալլա՛հ... Մուխթար, այդ ինչե՛ր կ'անցընես մտքդ...

— Ըսէ՛, կը պատկերաս հետը։

— Ձէ՛, ի՞նչ բանի վրայ կ'ուզես որ երգում ընես։

Գոհ՝ գտած յաջողութենէս, վերա-

դարձայ տուն։ Օրտուցի հայ կիները հոն էին։ Վստահ եմ՝ եկած էին հրաւէրով։ Հանճարուն քով սեղանին վրայ նստած, աւելի մտիկ կ'ընէին, քան կը խօսէին։ Խօսողը Գառնիկն էր։ Նիւթը՝ նախորդ զինքերուն զէպքը, տեղի ունեցած գոյութիւնն ու քրտուհիին «անամօթութիւնը»։

— Եկեր է կէս գիշերին, մօրէ մերկ, երեսակայեցէք, բոլորովին մօրէ մերկ, նոյնիսկ առանց նաշմախ մը կամ ծածկոյի, եկեր է մեր դուռը, «միւտիւր պէ՛՞ջ» կը պոռայ...

— Բո՛ղբ։

— Քա՛ծը։

— Անամօթը...

(«Բիւրտիստանի լեռներուն մէջ»)

ԱՐԱՄ ՀԱՅԱՉ





ԱԼԻՍԻԱ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

«ԱՐՄԱՏ ԵՒ ԷՌԻԹԻՒՆ»

Քո աչքերի հետ
ես յաերժաբար
գրոյց եմ արել,
Սակայն եղել եմ
Ուրիշ մաշկի մէջ,
Ուրիշ երկրի մէջ,
Ուրիշ մի վայրում...

Բայց իմ գրոյցը քեզ հետ է եղել,
Քո աչքերի հետ:

Դու նա ես, ով իր բացակայութեամբ
Դատարկ է թողնում իմ էութիւնը:

Նա, ով արարեց,
Որ ունայնութեան այս մթնոլորտում
Մենակ չմնամ:

Դու նա ես,
Ով ինձ ուրիշ մի դարում
Ասաց.

«Սպասիր»...

Սակայն այս դարում,
Ներքի,

չեմ կարող
Այլեւս սպասել...

••

Մի լուռ խորհուրդ է կատարում իմ մէջ.
Ուզում եմ հիմա,

երկիր Հայաստան,

Համաշխարհային հեռուից
Քարերը քն հին,
Համաշխարհային լեզուդ,
Որին հաղորդ են խորհուրդ ու գաղտնիք,
Դարերդ անցեալ,
Որոնք տեսել են
Քն կոթողների

քարէ շէնքերը,

Քն խաչքարերը,
Աստուածայինք քն գեղեցկութեան,
Որի ծնկները

ջարդել են, աւաճ...

Մի լուռ խորհուրդ է կատարում իմ մէջ.
Կարօտում եմ քեզ,
Թէկուզ քեզանից ես յուշեր չունեմ:

Սակայն քում է,
Թէ այդ յուշերը եղել են ու կան
Եղունգներին տակ
Եւ, աներեւոյթ,
Արտաքուրել են
Ծագման,
Գահերի
Եւ արեան շունչը:
Երկիր Հայաստան,
Քեզ ունեմ, առանց քեզ ունենալու...
Քն քայլքն եմ լսում,
Քն հառաչանքը,
Շառաչը ծովի,
Որ արտասուել է սեւ դագաղներով:
Եւ քն խիտ յուզման
Երծաղն եմ լսում:

Մի լուռ խորհուրդ է կատարում իմ մէջ.
Ու ես փռում եմ
Իմ յուզումների մագաղաթը մեծ,
Որ նրա վրայ երգդ սկսեմ,
Համաշխարհային քն

քարերը վայրի:

ԱԼԻՍԻԱ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Սպաններենէ թարգմանեց
ՎԱՀԱՅՆ ԴԱԼԹԵԱՆ



Յ. ԿԱՐԱՊԵՆՑ

ԿԱՐԹԱԳԵՆԻ

Դ Ո Ւ Ս Տ Ր Ը

Թէ ինչո՞ւ եմ եկել, ինքս էլ չգիտեմ:

Մնացել եմ մենակ սուրբերի հետ:

Խորանի խորքում կայուստայեայ Մադոննան հեղ ժպտում է եւ տաճարի ամէն անկիւնից աղօթքի հոտ է դալիս: Կարթո Մադոննան ամերիկեան տարազ է հազել, դարձել Սէյնթ Փաթրիկ տաճար ու ծանր-ծանր նստել Հին-գերորդ Պողոտայի վրայ: Լոյսը ծագել է Հոռմից, խուժել դժբերից ներս ու սաղմոս երգել նեղ, դուռուր լուսամուտների ականջին: Այստեղ եւս խռովել են Բրամանթէն ու Միքէլ Անջելոն: Միւսերը հաստացել են, գոռոցացել ու թթուած դէմքերով ուսները առել միապետ կամարներին: Բացակայ է Ուշ Վերածնունդի հանճարեղ թեթեւութիւնը, հրեշտակների թեւահարումն ու ճարտարապետական հանդուցների թռվանքը:

Սակայն ինչո՞ւ եմ եկել:

Քարէ պատերի պաղը նստել է սրտիս Մոմի մի քանի հրէ լեզուներ լիզում են Աստուածածնի ոտքը: Վերում, դուռուր լոյսերը բեկուել եւ փուշաւ գօտիներ են կազմել: Ձեւերը միապաղաղ բանականութեամբ դարձուել են իրար վրայ: Թիկունքում երգեհոնը ճակատադրական համը զօղանջներ է ժողովում: Մի վանական ստուերի պէս անցնում ու կորում է սիւնների մէջ: Այլեւս հանդուսան չունիմ: Չարացած մատներով շօշափում եմ ընկուզենու փայտէ նստարանի սղորկ կարծրութիւնը: Մարդկութեան դարաւոր մշակույթի արդասիրները խտացուել են տաճարում: Թէ՛ աննիթականը եւ թէ՛ նիւթականը: Հոգիս պարսպ սնոթի նման կախուել է դժբերից: Գնալիք տեղ չի մնացել: Մաշուել են բոլոր ճանապարհները: Փակուել՝ բոլորը դռները:

Մարդը վերադարձել է իրեն։

Պարտաւել ու վերադարձել։

Ի՞նչ եմ ես։ Ո՞վ եմ ես։ Ի՞նչ եմ ես։

Պարզուհի են բոլոր սէրերն ու երազները, բոլոր կամուրջներն ու վըտերը։ Մէկը տիեզերական ջրաղացի քարի տակ քամել է յոյզերիս հիւթը եւ դատարկ տոպրակը նետել սուր ծերպերի վրայ։ Մնացել է մաքի դանակը, որը անխնայ կտրատում է ծիածանի լարերը, մխմուլում վերջալույսերի սրբաին եւ սառնական հեշտանքով խոցոտում ոսկեղօծ յոյսերի կուրծքը։ Տրամաբանութեան մի խուրձ, որի վրայ կոխոտում են անդորդները ցեխոտ ոտքերով։ Նստել եմ տաճարի անկիւնում եւ զարմանում, թէ ինչու եմ եկել։ Դրսում՝ մի քանի տնաշար հետու ֆրանք լոյզ Թայթը մի նոր Բարելան է կառուցում՝ ջանալով բնութեան ռիթմը բռնել ու դնել քարի վրայ։ Թանձր վիճաբարեից անդին Նիւ Եորքը ապօղիւլիպօեան խուճապով բռնուած գուպարի մէջ է մտել մեքենայի հետ։ Այստեղ ես ապահով եմ։ Այլեւս ոչ ոք չի կարող ինձ խոցել։ Ետևում սուրբերը կը զան քոցէ տշքերով աշքերիս կը նայեն, հրաշէկ խօսքեր կ'ասեն եւ իրենց մեղրամոմէ ձեռքերով վէրքերս կը բուժեն։

Ծանր, խաւար լուսթին։

Անխօս պատարագ։

Շարականները իջնում են երկնքից, համբուրում սրտերի խոնկը եւ բիրեն զանում խորանի սեղանին։ Քրիստոսի խաչը բոցալուում է երկրադնտի վրայ՝ աւելի մեծ, քան երկրադունտը։ Աղօթքի մրմունջները վաղ առաւօտեան նուշուֆարների պէս փաթաթւում են սիրտերին եւ աննկատ բարձրանում վեր։ Կամարների վրայ հրեշտակներ են նստել՝ վարդազոյն ու աստուածաթիւ։ Աստուած մատը թաթախում է ծիրկաթիկների մէջ եւ խորանի ճակատին գրում «Է»։ Տառադանքը աշխարհի բոլոր փողոցներից հաւաքում է արցունքի կաթիլները եւ խտացնում Աստուածամօր սրտում։ Քերովրէները ճօճում են լոյսի թեք շառաիղներից եւ գետին շին ընկնում։ Հոգեւոր հովիւները մաղաղաթեայ դէմքերով շարւում են խորանի շուրջ եւ տառապում են շատ տառապած շիկնելու համար։ Վերից առաքելները իջնում են ցած եւ խորհրդաւոր հայեացքներ փոխանակում միմեանց։ Միմեանի թաւիչի վրայ ճնճուկներ են երգում։ Ամենազգի եպիսկոպոսները գետնին պառկած սառը մարմարն են համբուրում։

Սկսում է պատարագը։

Հոգիս սուել եմ ափերիս եւ կանգնել խորանի առջեւ։

Անպատճառ մի պատճառ կայ։

Միայն ես չեմ։ Ես միայնակ չեմ։ Ինձ հետ է միւսը։ Ինձ հետ են միւսները։ Իմ միւս եւր։ Բոլոր եսերիս հոյլը։ Ինձ հետ են Աբու Սիմբէլն ու Պոսեյդոնը, Նիմուզն ու Պլուտոնը, Օլիմպիան ու Ակրոպոլիսը եւ դեռ Փիդիաս ու Պրոտոն, Փիլիպո Լիպպի ու Բոտիլլելլի։ Իմ նախահայրերը, իմ հայրերիս եւր։ Բոլոր նրանք, որ մի կտոր լոյս ցանցին խաւարում։ Նրանք, որոնք մի կաթիլ իւղ լցրեցին հրազում։ Ու նաեւ նրանք, որ իրենց հանձարը պեղեցին անլուծելի վէժերի վրայ։ Առանց նրանց ես չէի լինի։ Առանց ինձ տաճար չէր լինի։ Քանզի ես տաճարն եմ լոյսի ու իմացականութեան։ Ես վրձին եմ Լէոնարդո Դա Վինչիի եւ աղամանդակու մուրճը Ջիան Լոբենցո Բերնինիի։ Ես չո'ւնչն եմ Ռէմբրանդի եւ խենթութիւնը Վան Գոգի ու Դոգէնի։ Ես որդի'ն եմ Դանտէի եւ հղբայրը Շէյքսպիրի։ Իմ ձեռքերով է բարձրացել Նիւ Եորքը։ Իմ ձեռքերով են կառուցուել աշխարհի քաղաքները։

Ես մենակ չեմ կարող լինել: Մենակները մեկնել են անդամ: Նրանք չեն ապրել, չեն ծնել ու չեն ստեղծել: Մենակները չեն տառապել: Նրանք չեն պարտադիր: Չգիտեն մարդկության աստուածացումը: Ես գալիս եմ պատմութեան խորքից: Իմ արխանը աւելի հին է, քան Աշուր Բանի Պալի կարսանների գինին: Անդամաւոր մի պատճառ կայ:

Այլապէս ես չէի լինի:

Քրիստոսի գլխին փշէ պսակ կայ: Պսակից արիւն է կաթում: Արիւնը դարձել է ճանաչ: Եւ լուսաւորում անհունը: Տիցիանն ու էլ Գրեկոն խառնուել են իրար: Այստեղ Քրիստոսը աւելի մարդ է, քան Աստուած: Ուսեղ մկաններ ունի եւ հայեացքում Բաուրրիի թափառաշրջիկի տարտամ թախիծն է նստել: Ձեռքում, հենց ախպէս, դրոշակ ունի: Վստահ եմ, դրսում բազմաթիւ Քրիստոսներ կան: Դիմացում՝ ոսկեծոյլ ճառագայթներից վեր սկիզբն է: Առաջին շունչը: Ոչնչից ամբողջութիւն: Չլինելիութիւնից լինելութիւն, հոգ չէ, թէ արտասույթը ակար է: Սուրբերը ցած են իջնում ճերմակ պատանդաններից, մի քիչ ման գալիս տաճարի միջանքներում եւ ժողովուրդ Մուրք Սեդանին՝ հաց են ուտում եւ գինի խմում: Ամէն տեղ ներկայ է Աստուծոյ մատը: Այդ մատը իր գրոշմն է դրել մարդկության ժշակոյթի վրայ: Աստուած արդէն մարդկութիւնն է: Առանց մարդու Աստուած չէր լինի: Ի՞նչ պիտի անէր ինքն իրեն, առանց մարդու: Աշտանակներից դեղին լույս է բարձրանում: Նաւից մի խումբ վարդապետներ՝ երկար երեսներով, շարժում են դէպի բեմը: Մի նիհար եպիսկոպոս մետաքսէ կմիպորտնը ուսին թուղթ է կարդում: Կտրերես պատանիներ ծնծղայ են ծնծում: Սկիզբից բոլոր թշուառների ցաւի մրմունջն է բարձրանում վեր:

Ինչո՞ւ եմ եկել:

Թերեւս պատճառը տաճարն է:

Քանդէ՛ք Նիւ Եորքը: Քանդէ՛ք Շիքագոն ու Լոս Անջելոսը: Աւերէք բոլոր ցամաքամասերի բոլոր քաղաքները: Եւ թող միայն միմիայն տաճարներն ու եկեղեցիները, վանքերն ու աղօթատեղիները: Ու նորից կը յարատեւի մարդկութիւնը: Որովհետեւ տաճարը ամբողջութիւն է՝ համադրումը հոգեկան դարաւոր հիւղերի: Տաճարը քարացած ու շարժուն ժշակոյթ է: Յաւերտենական ծէս ու ստեղծագործութիւն: Թատրոն ու բանաստեղծութիւն: Յղկուած քար է ու ճարտարապետութիւն: Մտածուած ձեւ, դիւծ ու ներդաշնակութիւն: Երգ է ու երաժշտութիւն: Գիր ու գրականութիւն: Արուեստ ու նկարչութիւն: Մտքի աղբիւր եւ իմացականութեան ծով: Կրօն ու փիլիսոփայութիւն: Հոգեկան թռիչք ու փրկութեան տուն: Տաճարը օրէնք է, կշիռ ու շափ: Մարմնի եւ հոգու ամուսնութիւն: Թերեւս միակ տեղը, ուր քաղաքակրթութիւնը ծառան է մշակոյթի:

Եկել եմ գտնելու ինձ:

Եկել եմ գտնելու սկիզբը:

Ես՝ անդամական մի ճամբորդ, որը զւ սովալլուկ, շոքել եմ խորանի առջեւ եւ բղկտուած սիրտս բացել խաչելութեան խորհրդին: Ես՝ ինքնասէր ու ինքնահաւան, գոռոց ու ամբարտաւան, եկել եմ հաշիւ պահանջելու իմ շարժում օրերի դիմաց: Ես՝ մեղաւոր ու չփախած, շնացած ու չար, եկել եմ հոգիս աճուրդի գնելու Աստծոյ սեղանին եւ շիկացած մարմնիս կրակով վառելու: Հրեշտակներ թեւը: Եկել եմ կրկին ստանալու, նորից մուրալու եւ երբեք չտալու: Եկել եմ սպանելու ինձ ու Աստծուն, որովհետեւ այլեւս չեմ կարող հանդուրժել Քրիստոսի տառապանքը: Ձեմ կարող վկայ լինել Նրա լուռ մարտիրոսութեանը:

Եկե՛ք եմ պատերին քսելու ամօթահար երեսս :
 Եկե՛ք եմ մի կտոր աղօթք ասելու :
 Սակայն չդիտե՛մ ինչպէ՞ս առել :
 Ինչպէ՞ս ասել :

Յիշում եմ Ամէնհոթէ՛ւ Ջորջորդին, որն իրեն կոչեց Իննաթոն եւ ի դուր փորձեց Ամուսնութեան հաւատարմութիւն մանր չաստուածներին վերացնել եւ Աթոնի շուրջ ստեղծել միաստուածութիւն : Այդ նպատակին հասնելու համար Իննաթոնը մի ձօն դրեց տրեւին : Աստուածները տապալուեցին : Եզիպտական կայսրութիւնները փլուզուեցին : Մնաց բանաստեղծութիւնը :

Ափերով դրեցի տաճարի պատը եւ երգեցի Իննաթոնի երգը :

Քո արեւածաղճ գեղեցիկ է երկնքի հորիզոնում,
 Ո՛վ կենդանի Աթոն, սկիզբը կեանքի :
 Երբ դու բարձրանում ես արեւելեան հորիզոնում,
 Լցնում ես երկիրը քո գեղեցկութեամբ :
 Դու գեղեցիկ ես, վսեմ, շողշողուն՝ ամէն աշխարհներից վեր :
 Դու շողերը, նրանք ընդգրկում եմ ցամաքները՝
 Այն ամէնը, ինչ ստեղծել ես :
 Որքան բազմատեսակ եմ քո հրաշագործութիւնները :
 Նրանք քաջանում եմ մեր աչքից :
 Ո՛վ միակ Աստուած, ոչ ոք ունի քո հզօրութիւնը :
 Դու ստեղծեցիր աշխարհը՝ համաձայն քո սրտի,
 Երբ դու մեմտել էիր :

Լուսավառում է տաճարը : Ջահերը աղամանդի փողի են շարժում իւրար : ճաշկալի վրայ կրկնում է ստեղծագործութիւնը : Գաւթիկից առաջանում է տղայոց ու աղջիկների հրգեցիկ խումբը սպիտակ-կարմիր շաղկի հագած : Բուրվառ ու ինկաման կապտա խորհուրդներ են ցանում միջոցում : Գահի վրայ դաւադարն ձեռքին նստել է խոթողադէմ հպիսկոպոսը : Բեմի վրայ շարժուն ոսկի, դժբախտ, սուտակ ու մարգարիտ : Երգեհոնը բացում է դռները :

Սկսում է պատարագը :

Յ. ԿԱՄԱՊԵՆՅ

(«Կարթագէնի դուստրը»)





I

— Սա միտպաղաղ կապոյտին առջեւ կհանքի ու մահուան առեղծուածը կը ջանաս լուծել... Կամ, թերեւս, ջուրէն խորքէն մեղեդիներ կը լսես, երգեր կը յորինես: Եթէ ճիշդ եմ՝ դիտցիր, որ ոչ կարդալու պահանջը կայ եւ ոչ ալ կարդացող... Դարձուցեր ես կոնակդ եռացող կեանքին ու կարծես քայքայող խոհերու մէջ ընկղմեր, կորսուեր... Պարապ աշխարհ է, տղա՛ս, պարապ աշխարհ է: Դուն ինձմէ աղէկ դիտես ատկա: Մինչեւ ե՛րբ աստիկ մինակ, միս մինակ: Ա՛ն, վառէ՛, ծխիկ մը վառէ ու ծուխին հետ ատ պարապ բաները մըտքէդ փանէ: Դարձիր ու սա աղուորներուն նայէ, անոնցմէ հատ մը ընտրէ, օրդ օր ըրէ:

Վահանն էր խօսողը. արծաթէ բաշերը հոգին:

Գութիւնը նայեցաւ անոր արեւախանձ խողաղ դէմքին, ժպտուն ու քիչ մը յոգնած աչքերուն ու ըսաւ.

— Մինակ... ո՞վ ըսաւ, թէ մինակ եմ... Այո, կոնակս տուեր եմ այդ խայ-

Ա. ԱՐՓԻՆԷ

«ԻՆՏԻ ՆԱՅԷ,

Ս Ե Գ Ա...»

տարդէտ, ծանծաղամիտ բաղմութեան, որպէսզի չտեսնեմ: Կ'ըսես՝ «եռացող կեանքին», կեանքը իմ ներաշխարհիս մէջ է, որ կ'եռայ... Հոն են հարազատներս, որոնց հետ դրոյցի մէջ եմ յաճախ, հոն են աղուորները, որոնք սիրտս սիրածները, որոնք արեւատ աչքերով այցի կու գան ինձի: Եւ դիտցիր, որ բաղմութեան մէջ է, որ ես մինակ կը զգամ եւ ոչ թէ առանձնութեան:

Վահան պահ մը վարժանքով դիտեց իր թարեկամը. բոպէ մը մնաց լուսդուրս տուաւ սիկարէթին ծախը ու հանդարտօրէն ըսաւ.

— Պէտք է ընդունիս, խոստովանիս, որ առողջ հոգիի, առողջ մտքի տէր մարդու խօսքեր չեն ատոնք: Ինձի ըսիր՝ ուրիշներու չեմ ուզեր, որ ըսես ատանկ բաներ. կը խնդան վրադ, մտքիդ հաւասարակշռութիւնը կասկածի կ'ենթարկեն: Անցեալին մէջ ապրիլը հիւանդ մարդու դարձ է. պիտի ապրիս այսօրը, ներկան, պիտի նոր ծրագիրներ հիւսնես, աչքդ վաղուան պիտի ուղղես եւ ոչ թէ անցած-դարձին, որ անյուսօրէն աշխարհէն այլեւս կտրուած մարդոց միայն վա-

յեւ է: Տղաները ինծի կը սպասեն, ապա թէ ոչ՝ կը նստէի քոյիկդ ու քիչ մը խըրտա կը կարդայի վրադ. եկուր հետս, նստաւ պիտի խաղանք, կը փոխուիս քիչ մը:

— Ո՛ւ, — ըսաւ կտրուկ, — քեզի համար նստալ խաղալը հաճելի է, կը խաղաս նստալ. ես կը մնամ հոս, ծոփուն դիմաց՝ ժարդ ինչ բանէ որ հաճոյք կը ղզայ՝ անիկա պէտք է ընէ:

Վահանի ձեռքը բարձրացաւ ու կացիկն իման ճեղքեց օդը:

— Անուղղայ, — ըսաւ, — անուղղայ, բայց օր մը, երբ ձիւնը իջնէ մաղերուդ՝ կը ղզնաս, շա՛տ կը ղզնաս:

Գուրգէն ժպտեցաւ: Մարդուս անհասկանութիւնը, հոգեվիճակը, իր քաղաքացին իսկ կարելի է դատել, անցաւ մտքէն, մինչ կը դիտէր հեռացող բարեկամը, որուն հաստ իրանը հանգստաօրէն — պիտի ուզէր ըսիկ դուրսը օրէն — կը յառաջանար՝ թուօրէն կախուած թեւերը ետ ու առաջ շարժելով: Կեանքէն, աշխարհէն, իր շրջապատէն ամէն կերպով դուրս ու դուրսացած տիպար մը զծելով:

Յաճախ ղզացած էր, որ ինք կը քաշէր մատները ափերուն մէջ խրած, թեւերը պրկած, ժարմինը ձիւն:

Այո, մտածեց, որոշ չափով ճշմարտութիւն կայ Վահանի խօսքերուն մէջ. առողջ հոգիի տէր ժարդու ապրելակերպ չէ իմս. ոչ ալ առողջ ժարդու մտածումներ են հպարտօրէն դուրս առածներս: Տարականոն ժարդ մըն եմ ես եւ ատիկա իր արդարացուցիչ կողմերը թերեւս ունենար, եթէ բացառիկ արժանիքներու տէր անձ մը եղած ըլլայի: Բայց քնութիւնը աչկայի շնորհներով օժտած չէ դիս, ստեղծագործելու աստուածային պարզեւր շնորհած չէ ինծի, եւ կամ, ես եմ, որ իմաստութիւնը չունիմ զայն ի յայտ բերելու ու գործածելու: Թեւեւ, ենթադրեալութեան մէջ կը զգամ, թէ տուածս պիտի չըլլայ այն՝ ինչ որ պիտի ուզէի, որ ըլլար, զիս դուրսցնէր, զիս շատ մը հոգեկան տանջանքներէ ձերբազատէր: Արտայայտութեան ձեւերու ու

ընունձով, կատարելութեան ձգտելով, արուեստի անսոսիկ բարձունքներու հասնելով՝ հոգիս հաւանաբար խաղաղութիւն պիտի գտնէր: Բայց պիտեմ, թէ պիտի չկրնամ տալ ուշադրաւ, միջազային չափանիշով հոյակապ երկ մը, որ խոշոր նպաստ մը բերէր մեր հայ դպրութեան, եւ ուրեմն, չ'արժէր հրապարակ զայն:

Հանեց ծոցատետրը գրպանէն ու զըրեց:

«Անծայրածիր դաշտերու անդորրութիւնը յիշեցնող խաղաղութիւն մը կը յածի ծովու սա անսահման տարածութեանը վրայ. պիտի ուզէի, սակայն, որ անոր ջուրերուն մէջ շարժում ի՞նչար, հոգիիս պէս յուշուէր, ալիկոծէր, փոթորկէր, ու ալիքները փրփրերախ նծողներու պէս արշաւէին դէպի ծովափ, ուր ես հասեր եմ:

«Պիտի ուզէի, որ հովերը աշխարհի չորս ծագերէն, հողերու ընդերքէն ու ջուրերը ոլկիտաներու խորքէն գաղտնիքներ բերէին, փայլակնային ներշնչումներ ու անյայտ մնացած ճշմարտութիւններ միաբաւ լուսաւորէին, էութիւնս ալիկոծէին ու ստեղծուէր զարմանք ու հիացում առթող հրաշալիք մը»:

Կարդաց գրածը ու հեղնակաճ ժպիտը լայնացաւ զէմքին վրայ: Իսկոյն, սրտուեց իջը ու ինչպէս բազմաթիւ նըման էջեր՝ ճճութեց, ճշմեց ափին մէջ ու մինչ մօտը գրուած աղբի կողմիցն կ'երկարէր թեւը՝ դետին ինկած բոկեզի կտոր մը նշմարեց: Դանդաղօրէն վերացուց զայն, մանրեց ու կտորները նետեց վար:

Ձուրին եղբրքը խմբուած թռչուններու երամէն քանի մը արթուն ու ճարպիկ աղանիւնէր խկոյն մագնցին ու իրենց ժրաշն կտուցներով ժողվեցին զանոնք: Ծրկար դիտեց անոնց վարչապոյն տոտիկներուն գծած խաչերը աւազին վըրայ:

«Ո՞րտե՞ս, ի՞նչ, ի՞նչ», կրկնեց մտովի ու յանկարծ թռչուն եւ խաչ բառերը շաղկապուեցան իրարու ու միաբաւ թռաւ ետ:



Հաղիւ հինգ տարեկան էր. թռչունի մը պէս անմիտ, թռչունի մը պէս ուտոտաւուն: Երեկոնները անհամբեր ու անհանդարտ՝ հօրը ժամանման կը սպասէր՝ ձեռքէն խլելու համար ցպիկի մը վրայ անցած շաքարէ թուշիկը, զոր ան ամէն օր կը բերէր իր սիրելի մանչուն: Անոր բազուկները իսկոյն կը գրկէին զինք ու իրենց ամբողջ տարողութեամբ կը բարձրացնէին վեր, վեր, վեր ու իր գոտարթ քրքիւններով տը կը թնդար:

Հօրը պատկերը աղօտեցաւ յաջորդող տարիներուն, բայց իր մանկութեան այդ երկու քաղցրագոյն պահերը՝ մնացին ամբողջ կառչած իր յիշողութեան ու անոնց կարօտովը առաւելեցաւ:

Պարնան աղուոր յետմիջօրէի մը՝ դրացի տղոց հետ փողոցը խաղաղած տանն սեցած պզտիկ խաչ մը զտաւ գետնէն եւ ուրախութեամբ վազեց տարաւ տուն: Մայրիկին աչքերը տխուր էին: Երբ խաչը տեսաւ դուկին ձեռքը՝ ա՛յ ա՛ւելի տխրեցան ու լճացան. կարծես տը՝ խուր գէղքի մը գուժկանը եղած ըլլար ան:

«Հայուն խաչը», կոչեց զայն մեծ մայրիկը, որ նոյնպէս տրտում նստած էր մայրիկին քով:

Այդ գիշեր, հայրիկը չեկաւ տուն. եւ ոչ ալ յաջորդող գիշերները: Կ'ըսէին, թէ շուտով պիտի գար ու ինք կը սպասէր, կը սպասէր... Բայց ան այլեւս երբեք չեկաւ:

Ու երբ տարիները անցան ու դէմքը սկսաւ աղուամաղով ծածկուիլ, այն ատեն միայն հասկցաւ, թէ մեծ մայրիկը ինչու իր գտած սեւ փողքիկ խաչը «հայուն խաչը» կոչեր էր:

Փոխադրուելու էին մեծ մայրիկին տունը: Անցեալին մէջ փառքի օրեր տեսած շատ հին ու շատ խոշոր վարձուած տուն մը, որ լեցուն էր վարձակալներով: Երկու սենեակ ունէին իրենք. մէկը ուղղակի ծովուն վրայ, միւսը՝ փողոցին: Երեկոնները, մայրամուտին, մայրիկը կը տանէր զինք այդ հսկիւն սենեակին պա-

տուհանին առջեւ ու զիմացի տան ձեղնայարկը ցոյց տալով կ'ըսէր. «Նայէ՛, հոն թռչուն մը կայ... չտեսա՛ր, թաւ. եթէ քիչ մը սպասենք՝ նորէն կու գայ. ձեռքդ շարժէ, համբոյր նետէ ու ան պիտի գայ: Իւ ինք անթարթ ու անհասկիչ կը դիտէր ցոյց տրուած պատուհանը, որուն չգարշէ վարազոյրը թեթեւօրէն կը շարժէր, բայց մայրիկին նկարագրած գոյնզգոյն փետուրներով աղուոր թռչունը չէր երեւեր:

Գիշեր մը, աննանօթ մարդ մը այցելեց իրենց: Բարի մարդ մը կը թուէր ըլլալ. հարցումներ ըրաւ իրեն, մազերը շոյեց ու զրգանէն զունաւոր թուղթի մէջ փաթթուած խոշոր շաքար մը հանեց: Ինք սակայն խոժոռած տէքերով գիտեց աննանօթը, որովհետեւ մայրիկը սկսած էր լալ ու մեծ մաման թաշկինակը շարունակ քիթին կը տանէր: Տարիներ ետք միայն պիտի հասկնար իմաստը մատնութիւն, ձերբակալութիւն, աքսոր, ջարդ բառերուն:

Այդ գիշեր մեծ մայրիկը տարաւ զինք անկողին. մայրիկը հիւանդ կ'երեւէր ու շարունակ կու լար:

— Հայրիկը ե՛րբ պիտի գայ, — հարցուց ինք. կարծես իր մանուկ հոգին նախազգացած ըլլար եղեւութիւնը:

— Երբ բարի մանչ ըլլաս, սիրտ չհատցնես, հայրիկը պիտի գայ, — ըսաւ մեծ մաման՝ աչքերը իրմէ պահելով:

— Ես չար չեմ, ես չար չեմ, — գոչեց ինք ընդմիջած, — ես Կարպիսին ու Միհրանին պէս չար չեմ. քար չեմ նետեր, ապակի չեմ կոտրեր, լուծեր չեմ շարժարեր...

— Հա՛, մանչ, իրաւ ես. երբ քիչ մը մեծնաս՝ հայրիկը այն ատեն պիտի գայ...

— Ես կ'ուզեմ, որ հիմա գայ, ես հայրիկս հիմա կու... զեմ, հի... մա... կ'ու... զեմ, — հեկեկաց:

Տարիներ ետք, երբ այլեւս չափահաս երիտասարդ էր ու տեղեակ իրականութեան՝ երբ թաղեր էր մեծ մայրը, թաղեր էր տառապած մայրը՝ անոնց հողաթուժրին առջեւ երդում ըրաւ հետանալ

այդ երկրէն՝ հեռանալ՝ իր մէկուկէս միլիոն անմեղ ցեղակիցներուն արիւնովը ներկաւած այդ հողէն, ուր իրեն նման հազարաւորներ որբացեր էին, հաղարսւոր մայրեր այրիացեր, հաղարսւոր անորոշեցի մէրդեր բացուեր, սրտեր խոցուեր:

Ու երբ, վերջապէս, Նոր Աշխարհը արածեց իր սահմանէն ներս Գուրգէնի մուտքը, վերջին անգամ ըլլալով՝ ան այցի դնաց իր մօր ու մեն մօր պերեզմաններուն ու երկար մնաց աշտեղ գլխաւոր:

Իսկ ո՞ւր էին արդեօք հօրը աճիւնները... Ո՞ր տաղաներուն, կամ ո՞ր կերճին մէջ: Ու յանկարծ, փայլակնային մտածում մը մարմին տուաւ եւ ուխտադնացութիւն մը ծրագրեց...

Պառաւր առաջնորդն զինք ստեղծուելէն վեր՝ հայու արիւն կրող մատնիչի հասցէին անէծք տեղադրով: Հաւանաբար, տեղեակ իսկ չէր, թէ հայորդին մը վրիժառու գնդակը պնտնած էր զայն:

Փլած սրտով հետեւեցաւ ինք կնոջ, եւ երբ լուց, թէ ձերբակալութեան օրէն ասդին ոչ մէկ բան փոխուած էր հօրը թաքստոցին մէջ, եւ թէ պառաւն գատ ոչ ոք մտած էր հոն՝ շարթուան մը համար վարձեց զայն:

Մարտու մը ցնցեց մարմինը, երբ մտաւ ներս:

Նեղ մահաճակալ մը, սեղան մը եւ աթոռ մը...

Յուզումէն կը խեղդուէր: Հօրը ներկայութիւնը կ'ուզէր դգալ հոն: Այդ նեղ լի սենեակին մէջ ջնաց լսել բանաստեղծ շուկներ, հօրը չրթներէն թաւ հառաչներ, կամ անէծքներ: Առաստաղի տախտակներուն վրայ փնտռեց հօրը աչքերէն արձակուած նետեր: Տախտակամանին վրայ հօրը ստեղծէն հետքեր: Երկնցաւ պահ մը անկողնին վրայ ու ջնաց ապրիլ մղձաւանջը, զոր հայրն էր ապրեր: Այդ մրոտած չորս պատերը ինչէ՞ր կրնային պատմել իրեն, եթէ լեզու ունենային:

Այդպէս պատկած էր հոն իր հայրը, ակնարկը ձեղունին, մտահոգ ու տանջաւոր՝ իր բնական լինելով, իր կոտորուող ցեղակիցներուն, իր մտաւորական ընկերներուն, իր անտոյգ ապագային համար: Հայրը նստած էր սա միակ աթոռին վրայ, սեղանին առջեւ ու թերեւ թուրթեր մրոտած: Տատկեց, բացաւ գրոցը՝ յիշատակ-թղթի մը դտնելու ակնկալութեամբ:

Միամտութիւն... ինչպէ՞ս խուզարկած պէտք է ըլլային խոցը... Ու հայրը բարձրաճակատ ու խելախ՝ քալած էր դուրս:

Մօտեցաւ պատուհանին: Դեղնած, տարիներու փոշիէն փռած վարադոյրը կիսով քաց էր ալիւս... Յիշեց երկկոյնեան այն պահերը, որոնք հօրը տառապանքի ժամերուն մէջ ոսկի շողեր, խաւարին մէջ ինկած արեւի ճաճանչներ եղած պէտք է ըլլային, երբ մայրիկը կը բերէր զինք ցոյց տալու զէմի տան ձեղնայարկի այն լուսամուտը, որուն միշտ գոց վարագոյրը թէթեւ մը կը շարժէր ու ինք հոն թռչնիկ մը տեսնելու ակնկալութեամբ թաթիկը կը շարժէր, համբոյր կը դրէր:

Վերջին այցելած օրը, որոշեց դիւն-րել հոն: Հաղորդուիլ հօրը ողբին հետ. ի մի ձուլուիլ անոր հետ:

Շոյեց սենեակի անշարժ իրերը: Հօրը ձեռքերն էին դպած անոնց... Բայց այդ բոլորը բաւական չէին. ո՛չ, բաւական չէին: Ջղզրգիւռ, աւելի ճիշդ՝ վանդակին մէջ բանտարկուած վերաւոր վաղրի մը նման սկսաւ դառնալ խոցին մէջ: Ի՞նչ էր փնտռածը, ի՞նչ էր ուզածը, ինք եւս չէր գիտեր: Քաշեց սեղանին զգրոցը կրկին, ձեռքով շօշափեց տակն ու վրան: Բան մը, բան մը, բան մը մնացած պէտք է ըլլար հօրմէն եւ ոչ չինչ կը գտնէր: Յուսահատ՝ բռնեցըր զարկաւ սեղանին ու մնաց հոն գլխահակ:

Երբ մութը թանձրացաւ՝ հաղուստներով երկնցաւ անկողնին վրայ, քայց հայուն դաժան ճակատագիրը մեղունեւորու փեթակի մը վերածուած՝ մտեր էր գանկին մէջ: Մատներովը սեղմեց ճա-

կտառը. ջանաց ժխտքը պարպել ընկճող, ծառացող մտածումներէն, ցասման կայծերէն ու վերականգնացնել հայրը... Հոն, իր մօտ բերել հայրը. ածխները այլեւս մոխրի վերածուած հայրը...

Ձեռքը հանդարտօրէն ու շտանդի մը նման անցուց պատին վրայէն ու յանկարծ զգաց անհարթութիւն մը ու կարծես շուշը կարեցաւ:

Պաշ մըն էր: Հաւանաբար դմելի մը ծայրովը փորուած խաչ մը, մօտներուն զգայութեանը տակ ի յայտ եկած խաչ մը, որ ցերեկուան լոյսով վրիպած էր աչքերէն:

Ո՞վ էր դժեբ զայն այդ պատին վրայ...

Դարեր շարունակ անոր պահպանման համար մարտնչեր ու արիւն էր թափեր իր ժողովուրդը, որուն ճակատագիրը Գողգոթան էր եղեր: Որո՞ւն ձեռքն էր փորել զայն եւ ինչ բանի համար. աղօթելու, փրկութիւն հայցելու, հաւատարմութիւն զօրացնելու, թէ չարչարանք խորհրդանշելու:

Յիւնց հօրը անյայտացած օրը իր զբաղմունքով խաչը, զոր մեծ մայրը «հայուն խաչը» կոչեր էր եւ կապակցութիւն մը կարծեց տեսնել երկուքին միջեւ:

Ձէր կրնար հաւատալ սակայն, թէ իր զաղափարապաշտ հօր դործն էր այդ: Պահ մը կարծես նսեմացաւ անոր պատկերը աչքերուն առջեւ: Ոչ թէ խաչ մը, այլ դաշոյն մը պէտք է քանդակէր հայրը հոն:

«Հայուն վերածնած հայրենիքը սուրով կերտուեցաւ. եւ ոչ թէ խաչով», շշնջաց դառնօրէն:

Մասները սահանքան վար, աւելի վար, լոշափելով պատը:

Յանկարծ ցատկեց անկողնէն. խառնափելով մօտեցաւ սեղանին, վառեց ճրարաբ ու բերաւ բռնեց պատին առջեւ:

Ջրաց արեւի մը ծագիլը հողիին մէջ, ջերմութիւն մը երակներուն մէջ, հօրը պատկերը սրտին մէջ: Ծունկի եկաւ անկողնին վրայ ու շրթները սեղմեց պա-

տին. հոն՝ ուր խաչին տակ, զմելին շեղարք «ՎՐԷՓ» էր գրեր:

Հօրը պատկամն էր այդ իր որդուն: Հօրը պատկամն էր այդ բոլոր հայորդիներուն:

Հուսարացին հեռացաւ խուցէն վարձատրուած, լիացած ու հողիին մէջ կարծես յաղթանակ մը՝ մահուան վրայ:

Ծովը սկսեց էր ալեկոծիլ ու լուալ խառակներուն կողերը. փրփրոտ պատիկ այրերն կու դային համբուրել անոնց լանջերը:

Ծովը, ծովը, ծովը...

Իր մանկութիւնն ու պատանութիւնը անցեր էին ծովուն դիմաց: Յաճախ, իր մեղմ շառաշով օրօր էր երգեր, իսկ փոթորկոտ գիշերներ՝ իր մոլեգնած դուռնով ստրասփ էր ազդեր: Քամին կ'ոռնար, պատուհանները կը դողդալին, անձրեւը կ'իջնէր յորդ ու խառարին մէջ՝ լլկացած, լեռնացած այրքները իրեն կը թուէին հակոյ փողեր, որոնք պիտի գային իրենց կոնակն առնել զինք՝ տանելու մեծ մայրիկին տունը:

Մեծ մայրը կը խաչակնքէր: Արագարագ կը խաչակնքէր ու՝ «Ողորմած՝ Աստուածս, ծովերուն վրայ եղողները պահէ պահպանէ», կը մրմնջէր մտահոգ ու կծկուած դէմքով:

Յոյն ու հայ ձկնորսներուն սիրելի եանան էր մեծ մայրը: Անոնք կ'ելլէին իրենց նաւակներէն ու կը մտնէին ծով ու ձուկ բուրդ գետնայարկի ընդարձակ խոհանոցը: Տախտակէ երկար սեղանի մը շուրջ նստած՝ եանային պատրաստած ախորժապ համադամները կը հաշակէին մեծ ախորժակով ու կրկին կ'ուղղուէին ծովուն բացերը: Երբեմն կը պատահէր, որ բախտը լայնօրէն ժպտէր, ծովը բացառապէս բարի ըլլար ու իրենց նաւերը լեցուն: Այն ատեն, եանային հաւանութեամբ՝ օղիին շէշը կը բազմէր սեղանին վրայ ու խոհանոցը խրախճանքի վայրի մը կը վերածուէր:

Եթէ միայն արտօնուած ըլլար իրեն հոն մտնել՝ ի՞նչ պատմութիւններ պիտի

լսէր, ի՞նչ տիպեր պիտի տեսնէր. ծո-
վուն մութ զաղանթներուն ինք եւս պի-
տի տրտնալար, անոնց փորձառութիւննե-
րուն, արկածախնդրութիւններուն պիտի
ծանօթանար:

Մեծ մայրը կու դար վեր՝ կնճիռ-
ներով ակօսուած զէմքը գտնուակ ժպի-
տով մը պայծառացած: Պատուհանին
առջեւ օրն ի բուն ասեղնազործող եւ օրէ
օր տփուտնող աղջկանը ուղղելով խօսքը՝
կ'ըսէր.

— Արաքսի, հերիք է, աչքերդ կար-
մբերք են նորէն, ձգէ ձեռքիդ, քիչիկ մը
հանդէ: Եղաքը — կ'ահկարկէր ձկնորս-
ներուն — քանի մը շարժուան ծախքեր-
նուս բաւելու չափ դրամ ձգեցին դաջին:
Երբեմն ալ անոնց հոգեկն ալ իբր ու-
սերուն առած, մասնազուած, կը խօ-
սէր, կը պատմէր.

— Վախճան Մաթիկը ատ հոռոմ աղ-
ջիկուն հետ պիտի կարգուի... Այսօր մէկ
կողմ քաւեցի, խրատեցի, ամա աչքերէն
պէլի է քի օգուտ չունի. դօրծը գործէն
անցած է:

Եւ կամ՝

— Եսրկիին կը նայիմ, սիրտս կտոր-
կտոր կ'ըլլայ... Ծովը, կտորի՞ն աղան
կուլ տալէն ի վեր՝ աստ տրտնալար պէս
մարդուն չուք մնաց միմակ:

— Հապա կտորի՞ն փեսա՞դ, — կը յա-
րէր մայրը, դուրսը նորահիւս ձեռագոր-
ծին վրայէն վերցնելով ու վշտահար
մութ աչքերը մեղադրական երանդներով
պղտոր, — փեսադ ու փեսայիդ պէս միւս
հաղար հաղարնէ՞ր... անոնց խօսքը չեա
ընեն... անոնց վրայ չէ՛ս մտածեր...

Մեծ մօրը զէմքը կը մթապէր, կրն-
ճիռներուն մէջէն փոթորիկ մը կ'անց-
նէր, դողդոջ շրթներով ու գլուխը շար-
ժելով կ'ըսէր.

— Սա մախտուիտ առաջըր գոնէ ա-
տանկ քանիք մ'ըսեր, Արաքսի. էրէսդ
կը նայիմ ճիկէրս կը վառի... օր կա՞յ
քի չի մտմտամ, ժամ կա՞յ քի չուներուն
գլխուն անէծք չկարդամ... Համբերենք
պիտի, օր մը չէ օր մը հարկաւ լուր մը
կ'առնենք... Ո՞վ գիտէ ուր տարին...
Ինտո՞ր խապար դրկէ... Իմ հաւատքս

մենծ է, Աստուած աղօթքներս կը լսէ,
սա աշխարհքը մէյ մը խաղաղի՝ օր մըն
ալ օխն արողջ դուռերնիս կը գորնէ...

— Հայրիկս Յակոբին հայրիկին
հետ դայ պիտի, — կ'ըսէր ինք, ինչ
մայրը ուշքերը կը սրէր, — ինծի ալ,
Յակոբին ալ, Սեդային ալ, շաքարէ
թուշուն պիտի բերէ...

Յակոբը իրեն տարեկից էր, իսկ
քոյրը, Սեդան՝ հայրը հրեք տնօած
չէր: Աւելի ճիշդ՝ հայրը աղջնակին ծը-
նունդէն առաջ ընտանեկան յարկէն պոկ-
ւած էր...

Ոսկի խաղաղութեամբ պուսրիկ մըն էր
Սեդան: Յակոբին հետ կը բռնէին անոր
թաթիկներէն ու կը քաւեցնէին: Երբեմն
ալ շալակներ կ'առնէին ու ան կը քրքրէր:
Կը պատահէր ալ, որ իրենց խաղը խան-
դարէր, սրտնեղութիւն պատճառէր ու
յանդիմանուէր:

Ու օրերը կ'անցնէին, աժիւնները
կ'անցնէին, տարիները կ'անցնէին: Այլ-
եւս դիտէին, թէ հայրիկը երեք պիտի
չգար. նոյնպէս, Յակոբիին հայրիկը:

Մայրը միշտ պատուհանին առջեւ
կ'ստեղծագործէր ու աստեղ-աստեղ կը հո-
ղար: Մեծ մայրը մտահոգ զէմքով կը
դիտէր աղջիկը:

— Արաքսի, — կ'ըսէր, — ա՛լ հե-
րիք է, վաք դիւ ձեռքիդ, աղուոր աշ-
ւընդուդ մեղքեր. քիչ մը դուրս ելիք,
պտրաէ, օդ առ: Փստք Աստուծոյ, տունի
ճիրաւ չունինք, աղոց ձգածը րսեա՝ էւէ-
լիով կը բաւէ ուտելիքնուս:

— Հապա՞ վրայ դուրսնիս, հապա՞
ղաւկիս ուսմունքը, անոնք ո՞վ պիտի հո-
ղայ, աղքատանամ մը...

Ինք կը փախէր դուրս: Միբար խոց-
ւած, կը վազէր վար, Յակոբիկենց սեն-
եակը:

Անոր մայրն ալ՝ թուի ու գիրուկ
կին մը, օրն ի բուն կար կը կարէր: Որ-
քա՞ն պիտի ուղէր, որ իր մայրիկն ալ
անոր պէս խօսուն ըլլար: Երբեմն խըն-
դար, կատակէր, քաղցր խօսքեր ուղղէր
իրեն ու մեծ մամային:

Այդ մատաղ տարիքին Գուրգէն ձունշ-
ցաւ հոգեկոն տառապանքը, բայց եր-
բեք՝ ձանձրոյթ կոչուածք։ Կը մտնէր
սենեակէ սենեակ, կ'այցելէր միւս վար-
ձակալներուն։

Յակոբիկէն ետք, ամէնէն շատ կը
սիրէր Պրն. Սեդրակը։ Իր մանկութեան
տարիներուն վայելեց անոնց դուրսու-
րանքը, իր պատանութեան՝ կարելի է ը-
սել, որ անոնք՝ այր ու կին՝ սատարեցին
իր մտքի մշակման։

Յամառ րնթերցող էր Պրն. Սեդրակը.
քաջածանօթ՝ հայոց պատմութեան, ե-
կեղեցական պատմութեան ու ծիսակա-
տարութեանց։ Մեզմ ու քաղցր ձայնով
կ'երգէր Ներսէս Շնորհալիի շարականա-
ներէն, Կոմիտասեան մեղեդիներէն ու
այդ բոլորին մասին արտայայտուած պա-
հուն կը կերպարանափոխուէր. յորդող
հիացումէն ու յափշտակութենէն զէմքը
կը լուսաւորուէր։

— Ի՞նչ կ'ըսես, Վերդին, քահանայ
ձեռնադրուի՞մ, — կը հարցնէր կնոյր
կէս-լուրդ, կէս-կատակ, բայց խկնբիւ.
վերապրումով, — զիտեմ, չես ուզեր, —
եւ իրեն դառնալով իսկոյն կ'աւելցնէր,
— մեր աղգը ի՞նչ գանձեր ունի, սղա՛ս,
ի՛նչ գանձեր... մինակ թախտ չէ ունե-
ցեր, բախտ։ Հայրդ քեզի ինչե՛ր պիտի
պատմէր, եթէ ողջ ըլլար... Երբ քիչ մը
մեծնաս՝ պիտի կարդամ քեզի մեր հան-
ճարիդ Նարեկացիէն, մեր անմահ բա-
նասեղծներուն գործերէն։

— Սեդրակ, Գուրգէնին ինչո՞ւ չես
ըսեր, որ Վահան Գողթնացիի քրոջ զը-
րած շարականն ալ կ'երգուի մեր եկեղե-
ցիներուն մէջ, — կը յարէր կինը հպար-
տօրէն։

Տարիներ ետք, Յակոբիկէնց փո-
խադրուեցան։ Մօրը գործը ընդարձակ-
ած էր, յաճախորդները բազմացած։ Ա-
նոնց սենեակը վարձեց պզտիկ կազմով
դաւառացի կօշկակար մը, որ տարազ-
բուքեան օրերուն՝ իր արհեստին շնոր-
հիւ ողջ էր մնացեր։

Պրն. Սեդրակին շափ, թերեւ ջիւղ
մըն ալ աւելի, անոր եւս կապուեցաւ։

Այդ բարի մարդուկը օժտուած էր

պատմելու բացառիկ շնորհով։ Ան իր
անպաճոյճ քսոսերով՝ վերականգնեց Գուր-
գէնին բոլորովին անծանօթ, հեթա-
թային ու անինքնող աշխարհ մը, որ իր
նահատակուած հօր ծննդավայրն էր ե-
ղած։ Ու այդ աշխարհը դարձաւ ա՛յնքան
իրական, ա՛յնքան կենդանի ու բարա-
խուն, որքան իր շրջապատը։

— Գուրգէն, ձագօ, — կ'ըսէր երեւ-
մին, իր պզտիկ, պնդուն ու քարի աչքերը
իրեն ուղղելով, — մեր հողեր, օր մի չէ
օր մի նսրէն կ'եղնին մերը ու դուն էս
բոլորը քո աչքերով կը տեսնես, — ու
յանկարծ կ'ամպոտէր զէմքը. իր յափշ-
տակութենէն սթափած՝ կը գիտակցէր,
թէ աւերուած, աւերակուած երկիր մըն
էր այլեւս այդքան կենդանի գոյներով իր
նկարածը։ Քանդուած էին հայ օճախե-
րը. ո՛չ արքա կար այլեւս, ո՛չ արօտ, ո՛չ
հովիւ, ո՛չ հօտ։

— Իմ պօյ Պրն. Սեդրակի պօյին կէսն
ի, — կ'ըսէր երբեմն, հասակէն աւելի
իր խելքին ակնարկելով, թէ եւ, իրապէս,
Պրն. Սեդրակի ուղիղ ու արտակարգօրէն
բարձր հասակը կ'իշխէր բոլորին վրայ։

— Տղա՛ս, — ըսած էր ան օր մը,
երբ այդ մասին ակնարկութիւն կ'ըլլար,
— դուն յստ՝ ես Պարոյր Հայկազնի մա-
սին... Ութ ոտք է եղած անոր հասակը։
Իր ժամանակի ամէնէն բարձրահասակ
մարդը կը նկատուի եղեր։ Հոռո՞մ ու Ա-
թէնք քաղաքներուն մէջ իրեն ի պատիւ
արձաններ են կանդներ՝ իր պերճախօ-
տութեան, ճարտասանութեան համար,
ա՛յնքան նշանաւոր հոգեւոր է եղած։

Ու օրերը կը յաջորդէին իրարու։
Նմանօրինակ օրերու շարանով ամիսները
կը թաւալէին։ Երբ պատկէր՝ առաջուան
պէս քունը իսկոյն չէր տաներ։ Կը մտա-
ծէր շատ մը քաներու մասին։ Դասերուն,
վարձակալներէն, ընկերներէն լրանե-
րուն ու Ծօփի խուլ մրմունջը զինք երա-
զանքի կը մղէր։

Կը մեծնար այլեւս։ Վերի շրթունքը
սկսեր էր մրստիլ։ Կ'ամշնար մտնելու
սննեակը այրիացած երկու քոյրերուն,
որոնք տարիներ շարունակ քաղցրաւենի-
ներով անուշութեան էին իր քիմքը։ Փոքր

տարիքին, համարձակօրէն ու անմօթաբար կ'երթար անոնց մօտ բուն իոկ այդ նպատակով: Այժմ, երբ սլափուհէր, որ տեսնէին զինք բակին մէջ ու ներս կանչէին՝ կը խօսէր լուրջ նիւթերու մասին ու յորձուհէր կուլ տալով, քաղաքովաբօրէն կը մերժէր հրամայածը:

Անոնց սենեակին մէջ էր, որ օր մը աչքերը շիրցաւ հետացնել պատէն կախած նկարէ մը, որ միշտ հոն էր եղած եւ ինք գրեթէ չէր նկատած:

Ծաղիկներու փունջ մը գրկած աղջկան մը դիմանկարն էր: Հաւանաբար, խալալի նկարիչի մը մէկ գործին վերադարձաւ թիւնը:

Մահիւնացած՝ դիտեց այդ նուրբ ու քնքուշ դէմքը, անոր մազերուն վէտվէտուն տահանքը, ժպիտին անմեղ քաղցրութիւնը: Բայց աչքերը, այդ կախարհող աչքերն էին, որ բան մը կ'ըսէին իրեն, տարտամօրէն բան մը կը յիշեցնէին իրեն ու իր այնքան սիրած անուշադէններէն շատ աւելի քաղցր բան մը կը ծորէին իր հոգիին ներս:

— Գուրդէն, — ըսաւ քոյրերէն մէկը՝ վար թափած ճերմակ մազերը ամփոփելով ծոծրակին վրայ, — ատ պատկերը Յակոբիկին քոյրը՝ Սեդային չի՞ նմանիր...

— Հա՛, աչքերը ճիշդ ու ճիշդ Սեդային աչքերն են, — հաստատեց միւս քոյրը, — մայրը ժամանակին շատ նայեցաւ տնոր...

Այդ օրէն ետք, ամէն անգամ, որ մտնէր հնութիւն բուրոյղ ու անցեալի իրենց փարթած կեանքին յիշատակներովը ապրող քոյրերուն սենեակը՝ առաջին առիթով անխաբիւր կը յառէր պատի նկարին ու անոր թովիչ աչքերէն յուզումի տիւր մը կ'իյնար հոգիին մէջ, բան մը կը խալտարէր հոսիքանը մէջ: Քերք Սեդան մեծնայ՝ ճիշդ այս պատկերին նման պիտի ըլլայ, կ'անցնէր մօրէն:

Եւ իրապէս, ամէն անգամ, որ Յակոբիկին հանդիպէր՝ Սեդան աւելի գեղեցկացած կը դնէր:

Երկրորդական վարժարան կը յաճախէր այլեւս: Մեծ մայրը շատ էր Ծերա-

ցեր: Զինորտները դաւաթ մը սպաղ ջուր եւ կամ սուրճ մը ատնելու համար միայն կը հանդիպէին եանային ու սղուող թարմ ձուկեր կը ձգէին օւղանին վրայ: Առողջութիւնը քայքայուած մայրը՝ միշտ կ'անդնադործէր: Ինք եւս արձակուրդներուն կ'աշխատէր եւ կը շարունակէր ուսումը: Մօրը գլխաւոր բաղձանքն էր այդ, այլապէս խղճին դէմ պիտի ըլլար ատիկա ընել:

«Սա միապաղաղ կապոյտին առջեւ կեանքի ու մահուան առեղծոսածը կը ջանաս լուծելը, ըսեր էր Վահան...»

Ամէն անգամ, որ մտածէր էր կեանքի ու մահուան մասին՝ իր ցեղին արեւնոտ ճակատագրի էջերն էին բացուելու իր առջեւ: Նախատակուած հայրերու, այլիպեւթ մայրերու, անհայր մեծցած դաւաճներու ու որբացած մանուկներու կարաւանն էր տեսնել անոնց մէջ, եւ ուրուականները՝ մէկուկէ միւրիւն անմեղ զոհերու: Իր ժողովուրդին վիճակւած խաչը կարծես ծանրացեր էր իր ուսին. արդարութեան կանչերը խլացուցեր էին զինք. ու քուրք էր կեանքի ճամբէն հօրը պատգամը արիւնին մէջ:

Սա հիւրընկալ, հարուստ երկրի ծովափին նստած՝ սեւ օրերու յաճախանքէն սիրտը խռով պահ մը գիտեց շուրջը:

Հոգեկան ոչ մէկ կապ գոյութիւն ունէր եւ կրնար ունենալ իր եւ այդ ամբողջին միջեւ: Խաճախներու անհամբեմադրութեան նման բան մը: Մտածումէ ու զգացումէ պարպուած խուճան մը կարծես, որուն միակ նպատակակէտը, կեանքը արժեւորելու միակ ձգտումը, ժամանցն էր ու կերութիւնը:

Բնական բան մը չէր միթէ ատիկա արձակուրդի օրերուն համար: Եթէ միայն յաջողէր հոգիին պոկել հոն կուտակուած դառնութիւնը, թեթեւալ ու խառնուիլ սա անկոծ բաղձութեան եւ հօրը օր ընելը, ինչպէս Վահանն էր թելադրեր:

Բայց անցեալը կը պահէր զինք ատիկն

մէջ ու անկէ հողորդելու ճիգերը ապար-
դիւն կ'անցնէին:

Ու կրկին կ'երթար ետ...

— Ախ Պրն. Գուրգէնս, — կ'ըսէր եր-
բմն տանտիրուհին, գլուխն ու մէկ ոտ-
քը սենեակէն ներս զննելով, — փէք մինակ
մնացիր. Միհրանիկ աղան առ հալին ին-
կած շրջար նէ՛ պիտի տեսնայիր քե-
ի ի՛նչ չէն մարդ էր... Զեռք մը երկուք
թուղթ կը խաղայիր հետք, թաւու կը
խաղայիր, սիրտը չէր նեղուեր:

Մայրն ու մեծ մայրը թաղած էր
արդէն. առեւտրականի մը քով հաշուա-
պահ էր ու այդ տուն մէջէն սենեակ մը
վարձած:

Ծալ-ծալ կախուած ճերմակ միւս-
րով կլորիկ կին մըն էր տանտիրուհին:
Լեզուն ծանրացած հիւանդ ամուսինը՝
միշտ բազմոցին անկիւնը:

— Տիկին Թադուհի, դուք անհոգ
եղէք, — կը պատասխանէր ինք՝ առանց
դասն ներս հրաւիրելու. սենեակէն ներս
անոր մուտքը առանց քաջալերելու, — ես
միշտ դրացած եմ. նամակներ ունիմ դը-
րիւիք, գիրքեր ու թերթեր ունիմ կար-
գալիք:

— Հա՛ աղաս, հա՛, դիտեմ ամա-
կ'իսէր մայրական դորովով. սիրտս դէ՛չ
կ'ըլլայ երբոր քեզի տաանկ մինակդ կը
տեսնամ...

Նրկու շարաթ հազիւ էր անցած՝ ե-
րեկոյ մը, տուն հասնելուն դեռատի աղ-
ջիկ մը բացաւ դուռը: Վարդաթոյր այ-
տերով, խոշոր, գուարթ աչքերով, ճա-
ռագայթող ժպիտով դեղադէմ աղջիկ
մը:

— Դուք Պրն. Գուրգէնն էք չէ՞, —
ըսաւ համարձակօրէն, — իմ անունս
Աստղիկ է... քանի մը շարաթ հոս, մո-
րաբերօս պիտի մնամ...

Խօսած պահուն դուռը աջ ու ձախ
կը շարժէր, ժպիտը հիացական երանդ-
ներ կ'առնէր:

— Մօրաքոյրդ շատ բարի կին է, —
ըսաւ րոպէ մը չփոթած, — ուրախ եմ,
որ ժամանակ մը իր մօտ կը մնաս. վըս-
տահ եմ բարեբար աղքեցութիւն կ'ունե-
նայ ատիկա էր վրայ:

Ու քաղեց մօտա սենեակը: Նետեց
պայտուակը ձեռքէն, քարացած պահ մը
կեցաւ սլատուհանին առջեւ՝ իր կոպտու-
թեան համար ինքզինք կշտամբելով, եւ
ի վերջոյ ինկաւ անկիւնի թիկնաթոռին
մէջ:

Այդ ազնիւ ինչո՞ւ էր տուկնուժոյ
բրկը զինք: Տակաւին պիտի խօսէր ան,
բայց ինք չոր կերպով կտրեր էր խօս-
քը: Դժգոհ էր թէեւ, բայց այդպէս ալ
պէտք է ընէր: Գաղաղակը չէր:

Դուրսէն լսեց կոյր Վարդանին դա-
ւազանին ձայնը:

Ամէն երեկոյ, զրեթէ նոյն ժամուն
կ'անցնէր ան ու քարերուն վրայ իր ցու-
պը կարծես որոշ եղանակ մը կը յօր-
նէր. երբեմն, մանուկներ կը բռնէին
անոր ձեռքէն ու կ'առաջնորդէին զայն ու
անոր շրթներէն օրհնութիւն կը ծորէր:

Հետուն, մայրամուտի շողերուն մէջ,
հոշակաւոր Պալեաննհրու — Կարապե-
տի — կատուցած մզկիթը՝ իր դիմերու
գեղատեսիլ պարզութեամբ՝ վեհալութեւն
միանդամայն:

Իւ երեսակայել, որ իրենց համար
մշակոյթ կերտող, հարտարադետական
կոթողներ, պալատներ, աղօթատեղիներ
կառուցող, երկիրը ծաղիկեցնող, ստեղ-
ծագործ ու շինարար հայ ցեղն էր, որ
ջանացին բնաջնջել:

Պատիկ ամպի մը նման պղտիկ լու-
ծը անցաւ պատուհանին առջեւէն: Զրդ-
ջիկ մըն էր, որուն անցքը այդպէս մը-
թընչաղին՝ անախորժ զգացումով մը կը
համակէր զինք:

Յանկարծ դուռը մատնահարուեցաւ
ու Աստղիկ քարիւղի լամբը ձեռքին՝
մտաւ ներս: Այն ատեն նկատեց, որ լամ-
բը, որ ամէն երեկոյ ինք կը վառէր՝
սեղանին վրայ չէր, այլ աղջկան ձեռքը:

— Պրն. Գուրգէն, մութին մէջ մնա-
ցիք... մօրաքոյրս քարիւղը լեցնելու տա-
րեւ ու մոռցեր է... Ասկէ ետք ես կ'ը-
նեմ առ քաները. ինչի որ պէտք ունե-
նա՞մ կանչէ ինձի, մի՛ քաշուիր...

Արդէն իսկ յովանակին եղակիի փոխ-
ւեցաւ, անցաւ Գուրգէնի մտքէն, ես

ի՞նչ ձեռով պէտք է խօսիմ արդեօք այս աղջկան»։

— Շնորհակալ եմ, — ըստւ մտերմ ինչ շեշտ մը տալով ձայնին։

Թարմ ու հաճելի երեւոյթ մըն էր վերջնապէս աղջիկը իր սենեակին մենու-թեանը մէջ։ Ակնարկը սահեցաւ անոր պիտի ու կըր զիծերուն վրայէն, ապա բարձրացաւ աչքերուն, որոնք իր գէժքին էին յառեր։

Անդային աչքերը մանկապէ թուրքեր ունին, իմացականութիւն ու երազ ունին, զգիլով չբաւոյր ունին, մտածեց ու բռնած բաղդատութեան համար զարմացաւ։

— Մօրաբոյրս կ'ուզէ, որ աս գիշեր մէկտեղ ճաշեմք, — ըստւ աղջիկը ձեռքը մտնելուն վրայէն անցնելով։

— Շատ շնորհակալ եմ. մօրաբոյրդ կ'ըսես, որ ես արդէն ընթեր եմ։

— Ան զիտացաւ, որ դուն ասանկ պիտի ըսես. բայց չհաւատաս ըստւ, թեւէն բռնէ ու հետդ հոս բեր ըսաւ։

Յետոյ, առանց պատասխանի սպասելու՝ սենեակին շրջանը բրաւ, կարծես առանձին եղած ըլլար հոն ու դարակի մը առջեւ կանգ առաւ։

— Աս դիւրեբը, — հարցոց գրեթէ ապշահար, — աս գիշերը քուկդ ես...

— Այո, — պատասխանեց, — ինչո՞ւ դարմացար...

— Աստի գիշերք... կարդացած ես ասոնք...

— Այո, մեծ մասամբ։

— Աս մէջտեղիները ֆրանսերէն են, սա քանի մը հասը ի՞նչ լեզու ես...

— Ասոնք ալ անգլերէն են։

— Կը հասկնամ աս բոլորը...

Գլուխը հաստատական շարժեց, ու՝ — Թէեւ ոչ հայերէնի չափ լաւ, — ըսաւ ժպտելով։

Աստղիկին դէմքը լրջացաւ, մոռցեցաւ, իսկոյն կոնակը դարձուց անոնց ու մտածկոտ մօտեցաւ պատուանին։

Գիւրքերը երեւի ոչինչ կ'ըսեն իրեն, աւելի ճիշդը՝ կարծես վախ կը պատճառեն, կ'անհանգստացնեն զինք, խորհեցաւ Գուրգէն։ Աղջիկը տարբեր հետա-

քըրքրութիւններ ունի, տարբեր պահանջներ։

Քիչ հոգ, հոգիին անգործութիւնը վերադառած, գիւրքերուն առթած խոռվէր մոռցած, վարագոյրը թեթեւ մը մէկ կողմ հրելով մեղմ ձայնով ըսաւ։

— Աս սենեակին տեսարանը շատ կը սիրեմ... Պէյլէրպէյի ճերմակ ազուրկ պալատը խոշոր թիթեռնիկի մը պէս թառեր է հոն, գիմացը, ծովէն անդին... Աստ, վերի լեռները Զամլըճայի լեռներն են, դացա՞ծ ես հոն...

Աղջկան արտայայտութեան մէջ հագիւ նկատելի երողանքի շողեր ինկեր էին. յանկարծ, փայլեցան աչքերը ու մանկունակ հրճուածքով դարձաւ իրեն ու գոչեց։

— Եթէ օր մը մեզի դալու ըլլա՞ս՝ կ'երթանք մէկտեղ, չ'ըլլա՞ր, — ու գիւտ մը բրած ըլլալու ու բանգէտի գոհունակութեամբ իսկոյն աւելցուց, — Պետրոս Գուրեանին դերեգման ալ Սկիւտար է, հոն ալ կը տանիմ քեզ... Դպրոցը սորված էինք անոր ուսանաւորը, միտքս չէ մնացեր...

Ձուարճայի է տյա աղջիկը, խորհեցաւ Գուրգէն. լերան մը լանջին ծաղկած վայրի ազուրկ ծաղիկի մը կը նմանի, իսկ Սեդան՝ մշակուած պարտէզի մը մէջ բուրումնաւէտ սքանչելի վարդի մը։

Ընթերցող ունեցաւ շատ հաճելի պահեր, շնորհիւ այդ տաքուկ հոգիով պարզ ու անկեղծ աղջկան։

Տիկին Թադուհին լեզուները բացւած էին։

— Աստղիկս ուսմունքը առաւ, դպրոցը լրացուց, ձեռագործի մէջ է՛ն բարձր նիւթ իրեն տուն, Պրն. Գուրգէնս։ Մօրը փէշին փակած տանտիկին աղջիկ է. չես գիտեր որչափ աղաչեցի քի դայ քովս քիչ մը կենայ, միտակս փէ՛ք դժուար է ինծի համար, Միհրանիկ աղան աս հային ինկած։ Սա բերած եղիլան ինքը էփեց, նայէ ի՞նչ համով է...

— Մօրաբոյր, ինչո՞ւ ասանկ բաներ կ'ըսես, ամօթ է, — գոչեց Աստղիկ շիկնելով եւ հրուշակի ամանը դրաւ սեղանին վրայ։

— Երբեք չի վեր շխտակը զուրցելը ամօթ է... սո՛ւտ կը խօսիմ կոր, քանի հատ քեզի պէս հիւնէլի, մարիֆէթի աղջիկ կայ...

Ինչքան հաճելի էր այդ բոլորը վեր- յիշելը, վերապրելը...

Քանի մը օր հաջ, երբ տուն վերա- դարձաւ, սենեակին մէջ փոփոխութիւն մը նկատեց։ Սեղանին վրայ աղուոր ծաղկաման մը կար։ Հիացական անկար- կը կանգ առաւ վարդերուն վրայ ու ա- նոնց զոյլիւն բոյրը զոռեց ուռնդե- րը։ Ձեռքի հատորը դարակին վրայ զե- տեղելու համար երբ այն կողմը դար- ձաւ՝ զարմանքով տեսաւ, թէ ձեռագործ- ծով մը ծածկուած էին գիրքերը։

Քիչ հտք, Աստղիկ ձեռքը լամբով մտաւ ներս։ Իր ամէնօրեայ այցելու- թիւնները արդարացիապէս շարժառիթ է- դած էր ասիկա։

— Մտղիկները հաւնեցա՞ր, — հար- ցուց տաք ժպիտով մը աչքերուն մէջ նա- յելով։

— Ինչո՞ւ ես գիրքերը ծածկեր, — հղաւ իր չոր պատասխանը։

Աստղիկ կարծես քարացաւ։ Ակնար- կը յանցաւորի մը նման ինկաւ դետին։ Բոպէ մը լուռ մնալէ ետք՝

— Մտնեցի, որ չփոշոտին, — բաւա- ճանով մը, որ լուռէր իր սովորական անկեղծ ու համարձակ շէշը։ Տղուն ներկայութեան իր երջանկութիւնը պըղ- տորոզ, խափանող թշնամիներ նկատեր էր դանոնք, իրենց միջեւ բարձրացող ու հոգին խռովող պատուար մը։

Գուրգէն զղջաց կոպտութեանը հա- մար։ Ձեւ սակայն ունի գեղեցիկին ճա- շակը, անցաւ մտքէն։

— Ի՞նչ լաւ ես կազմեր ծաղիկներուն փունջը, — յարեց զլալի ջերմութեամբ։ Աստղիկ իսկոյն կեանքի եկաւ։ Կար- ծես իր մէջ հրապարակութիւն մը տեղի ու- նեցաւ։

— Վարդերը մեր պարտէզէն են, ապրիմ-մեռնիմները դաշտէն ժողվեցի, աղուոր չե՞ն, — բաւ բերկրանքով։

Վառեց լամբը, յետոյ մօտեցաւ ծաղկամանին, քանի մը վարդ տեղափո-

խեց, պաշիկ մը մտածկոտ կեցաւ, ու՝

— Վերցնե՛մ ծածկուցը, — շշմար- ատանց աչքերը բարձրացնելու։

— Գիրքերը ինչո՞ւ չես սիրեր, Աստ- ղի՛կ, — հարցուց ինք անպթօրէն։

— Բայց ես լրացուցի դպրոցը, — պատասխանեց աղջիկը միտմտօրէն, ան- կեղծօրէն, քաղցրօրէն, — ես ուրի՛շ բո- ներ կը սիրեմ...

— Ի՞նչ բաներ...

— Օ՛, ես կը սիրեմ ծաղիկները, թռչունները, զաշտերը, լեռները, ծովը, լուսինը, ու...

— Ու ի՞նչ...

Պահ մը վարանելէ ետք՝

— Տունը, պղտիկները, ու... ու, — նայեցաւ Գուրգէնի աչքերուն մէջ նուազ- կոտ նայուածքով մը ու լուեց։

Պօսած պահուն, ծուկամանէն անդ- դուարար երիցուկ մըն էր դուրս քաշեր։

— Ապրիմ-մեռնիմ պիտի լսես այդ ծաղիկին, թէ ուրիշ աւելի աղուոր, ա- լելի հետաքրքրական բան մը պիտի հար- ցնես, — բաւ ինք անտոռալօրէն։

Աղջիկը կարմրեցաւ ու փախաւ դուրս։

Յիշեց ժամ մը ատուջ վահանի բրած խօսքերը դարձեալ։

Ո՛ւ, մահուան մատին շէջ մտածեր։ Անխուսափելիօրէն պիտի գար անկա օր մը ու գտնէր դինք։ Թէ ե՞րբ եւ ի՞նչ պայ- մաններու մէջ, լա՛ւ որ չէր գիտեր։ Չէր մտածեր նաեւ, թէ ինչ կը սպասէր իրեն, կամ իր նմաններուն՝ Անծանօթին տի- րակալութեան մէջ մտնելէ ետք...

Բայց կեանքը, կեանքը ատեղծուա- ծային երեւոյթներ շատ ունէր։

Ինչպէ՞ս գոյութեան կը կոչուէին, ծնունդ կ'առնէին, կը դառաւորուէին, օրերուդ մէջ փոփոխութիւն մտցնող, նոյնիսկ երբեմն կեանքիւ ընթացքը յե- դաշրջող գէպքեր ու պարագաներ։

Պատմութեան տարիներէն սերտը տուած էր Սեդային, Գիտակցիւր էր այդ բանին՝ մեծ մօրը վարձակալներուն պա- տի նկարը դիտած պահուն ու անկէ ետք

ամէն անգամ, որ հանդիպեր էր անոր՝ կուրծքին տակ բան մըն էր խլրտեր, քաղցր զգացում մը օրէ օր անէր:

Հարցում մը սակայն դիմելը կը տանջէր ու պատասխանը չէր գիտեր, չէր կրնար գտնել...

— Մենք պատրաստ ենք, քեզի կը սպասենք, — Աստղիկ ձայն էր տուեր դուրսէն:

Կիւրակի էր: Նախաճաշին խոստացեր էր ընկերանալ իրենց:

Տիկին թողուհի, իր փետրաւոր գլխարկով ու ժանեկազարդ մութ-մանդիկ-շուկազոյն հաղուստով սիրամարդի մը նման փքուած՝ դրան առջեւ էր արդէն ու անոր մօտ, Աստղիկ, զարնան շունչը կարծես, իր բաց կապոյտ շրջագցեստով ու շագանակազոյն գանգուրներուն վրայ նստած յարդէ պզտիկ գլխարկով:

Եկեղեցին լեցուն էր, երբ մտաւ ներս: Երեսասարդ մը նշմարեց ոտքերուն վրայ տատանող ծանր մարմինը տիկին թաղուհիին եւ տեղը տուաւ անոր: Աստղիկ ու ինք մնացին անոր մօտ, քով քովի:

Տաճարէն ներս ջերմ հաւատացեալի մը մուտքը չէր իրը, այլ հայրենասէր հայու: Այդ կամարներուն տակ կը ջանար հաղորդուիլ իր նախահայրերուն ոգիին հետ: Արարողութեանց վեհաթեանը ու հոգեթով մեղեդիներուն մէջ կը գտնէր իրենց դարաւոր մշակոյթին պարզեւած հոգեկան վերելքը ու իր մէջ կ'ամբարնար ցեղին յաւերժութեան հաւատքը:

Հոն կ'ըլլայ նաեւ Սեդան: Ոստելու առիթներ կը օտեղծուէին: Շատ անգամ կ'ընկերանար անոր զգպի առին: Ձինքը նշմարելուն անոր աչքերը կը ջերմանային, հրճուանք կ'արտայայտէին, բայց ինք անոնց մէջ ի զուր կը փնտռէր իր հոգին առչորող զգացումէն կայծեր:

Ակնարկը շրջանը ըրաւ եկեղեցիին ու քովընտի նստարանի մը վրայ տեսաւ Սեդան: Կը դիտէր զինք ու անոր ազուր աչքերուն տաք ու անուշ ժպիտը փոթորակեց հոգին:

Յանկարծ, ձեռք մը զգաց կուրծքին

վրայ: Աստղիկն էր. գէճը իրեն երկաթաբաժնի ցած ձայնով կ'ըսէր.

— Ժաքէթիդ կոճակի թուղթեր է՝ ի՞նչ նալու վրայ է, ինչո՞ւ չըսիր, որ կարէի...

Մեքենայար նայեցաւ Սեդային: Աղջրկան դէմքը մթաղներ էր ու հոյիին խոռվէր աչքերը չկրցին քողարկել:

Գուրդէնին սիրտը խայտաց, առիկա պատասխանը չէ՞ր մէթէ իր փնտռած հարցումին...

«Տարեկիցներ են սա երկու թարմագեղ էակները, խորհեցաւ ու բոլորովին հակառակնայ խոռոտածքներ: Մեղան՝ երկրորդական վարժարանի ուսանող, նոր ու լայն հորիզոններ որոնող, ուսման ծարաւի ու սիրահար դիրքերու: Աստղիկը՝ զուսմունքը այլիւս լրացուցած», միշտ ջերմ ու զուարթ, կին ու մայր դառնալու արդէն յօժար ու պատրաստ: Երբ դուրս կ'ելլէին՝ քաղմութեան մէջ ի զուր փնտռեց Սեդան: Ողջակի անյայտացեր էր ան:

Անհանգստացաւ. չէր ուզեր այլևս ականջ տալ Աստղիկի զայլալլին:

— Ի՞նչ ազուր օդ է, չէ՞... Կ'ուզեմ Սեդայի երթանք, մամայիս հանդիպինք, փոխկիս ձաղուկները կարօտեցեր եմ... Տեսնես ի՞նչ տնուկիկ, ի՞նչ ազուրիկ բաներ են, չա՛տ կարօտցայ:

— Բարեկամի մը խօսք տուած եմ, անոր պիտի հանդիպիմ այսօր, — եղաւ իր պատասխանը:

— Տուն հասնելուս պէս կոճակդ կարեմ, չմոռնաս, ի՞նչայ պիտի...

Կէս ժամ ետք, երբ ձեռքի շնորհալի շարժումներով այդ գործողութիւնը կը կատարէր՝ յանկարծ ըսաւ.

— Դիտե՛՛ս, Միհրանիկ աղան ա՛յլ կ'աղէկնայ կուր, զալ շարաթ երթամ պիտի, — կանգ առաւ ու կանաչի բնագոյնին խուզարկումով մը դիտեց Գուրդէնի դէմքը, որ մնաց անալլալլ:

— Մօրաքոյրդ գէշ պիտի զգայ, — ըսաւ թափանցելով այդ կեղծ յայտարարութեան դրդազատեցութիւն:

— Դո՛ւն, — հարցուց Աստղիկ պահ մը լուռ ու մտածկոտ մնալէ ետք:

— Ես ալ, հորկաւ, բայց նախ՝ ես ցերեկները տոնիւր չեմ, զիչերներն ալ յաճախ գրազած:

Հետզհետէ արեկոծիլ սկսող Աստանանիւր դիտելով՝ «Ո՛ր է արդեօք հիմա, մտածեց Գուրգէն, ի՞նչ եղաւ արդեօք: Անշուշտ ամուսնացաւ, բայց որո՞ւ հետ...» Ինչքան կը բողբոջէր, որ երջանիկ եղած ըլլաւ. անոր կը պարտէր այդ շարաքներուն իր առած վճռական քայլը. ան էր եղած պատճառը, որ նոյն օրն իսկ հանդիպէր Սեդային, բացասաբաժին տար եւ միասին դուրս ելլէին: Երկու օր ետք, երբ Աստղիկ լամբը ձեռքը մտաւ ներս՝ Գուրգէն նկատեց, որ տրտում էր ան:

Առանց հրաւելի եկաւ բազմոցին վըրայ իր մօտը նստաւ ու առանց իրեն նայելու հատիկ-հատիկ բաւաւ:

— Տեսա՞ր, սուտ չլսի քեզի... վաղը մօտս գայ պիտի ու ինծի տուն տանի...

Հագիւ կրցաւ ինք զարմանքը քողարկել ու դուրս թռչել ուզող «Իրա՞ւ»ը զսպել:

— Է՛հ, ի՞նչ է, տխուր ես երթալուդ համար... հասաւ կարօտներ էի բոլորը, մանաւանդ փխիկներդ, — ըսաւ անտարբերօրէն:

Աղջկան աչքերը իրեն ուղղուեցան մեղադրանքով լի:

— Ես կ'ուզէի, որ դո՛ւն տեսնայիր... Իրարու հետ խաղային տեսնայիր... գիտե՛մ, դուն ալ պիտի սիրէիր, — ձայնը կենդանացաւ, — հատ մը կայ՝ ճեփ-ճեփով, կլորիկ, գունտիկ, անանկ անուշիկ է...

«Փխիկներուդ պէս դուն եւս անուշիկ ես», պիտի ուզէր ըսել, բայց մտանդաւոր խօսքեր էին ատոնք, հետեւաբար ժպտեցաւ միայն ու լռեց:

Շէշտուեր էին Աստղիկին փայլուն, զուարթ աչքերուն մէջ ինկած արտում երանդները, երբ առաւօտուն, գործի մեկնած պահուն՝ զէմ վազեց: Նուաղկոտ նայուածքով մը դիտեց զինք ու ազատական՝ ըսաւ:

— Մօրաքոյրիւ հետ գա՛ս պիտի օր մը... կը պտըտինք մէկտեղ...

— Եթէ յարմարի, գրազած չըլլամ, ինչո՞ւ չէ, կու գամ, — սեղմեց երկաւրած ձեռքը ու պահիկ մը գայն արփն մէջ պահելէ ետք, — ուշ եմ մնացած, փութաց աւելցնել, — կը տեսնուինք նորէն...

Աղջկան թախծոտ, խոնաւ նայուածքը հալածեց զինք ճամբան, ու երեկոյեան զգալի պարապ մը զգաց տան մէջ: Ձգալի պակասը ջերմ ու չէնչոյ շունչի մը, մանկունակ հոգիի մը, որ արեւի շող էր ու գեղածածաղ թարմութիւն: Մտաւ սենեակը, ուր կարծեա ամայութիւն մըն էր ինկած, զուարթ երգ մը մարած: Սեղանին վրայ այլեւս ո՛չ ծաղիկ կար, ոչ ծաղկաման, ու իր նախկին տեղն էր հիմա լամբարը, զոր այլեւս ինք պիտի վառէր: Հոն, դիւբերուն վըրայ էր տակաւին զանոնք ծածկող մեռազործը: Մօտեցաւ, բայց չուզեց վերցրնել գայն, ձեռքը շոյանքով մը անցաւ վրայէն:

Առաւ օրուան թերթը ու նստաւ պատուհանին առջեւ:

Շուքի նման անցաւ ջղջիկը, կոյր վարդանին գաւազանը թակեց փողոցի քարերը, բայց դրան մէջ այլեւս չերեւաց Աստղիկը: Անոր տեղ՝ տիկին Թագուհի գլուխը ներս երկարեց կիսաբաց դուռնէն:

— Ա՛խ, Պրն. Գուրգէնս, մինակ մը նայինք նորէն... Թռչունի պէս ներս-դուրս կը թռչտէր... Մերինը ըլլալուն համար չէ քի կ'ըսեմ՝ մէկ հատիկ է Աստղիկս, մէկ հատիկ: Աղուորութիւնը բոսմ, տանտիկնութիւնը ըսեմ, հապա սիրտին բարութիւնը...

— Այո՛, — պատասխանեց, — պիտի ուզէր ըսել «հաճելի է ու զուարճալի», բայց, — ամէն կերպով շնորհալի է, այո, — ըսաւ, — մաղթենք, որ բախտաւոր եւս ըլլայ:

Տիկին Թագուհիի դէմքը ճառագարութեց: շրթները բացուելու վրայ էին, երբ Միհրանիկ աղան կանչեց զայն:

Յուշերու, յիշատակներու աշխարհին մէջ այս թափառումները անպատմելի քաղցրութիւն մը ունէին: Գր վերապրէր ամէն մէկ պահը: Յիշեց, թէ այդ եւ յաջորդող օրերուն Աստղիկը կրկին տեսնելու հաւանականութիւն մը, կամ տենդոտ ցանկութիւն մը մտքին դուռը չբարեց, բայց իրեն անծանօթ անհանդարտութիւն մը, կեդրոնանալու դժուարութիւն մը անհանգստացուց զինք եւ պատճառը ի գուր փնտռեց:

Իր օրերուն մուլ միօրինակութեանը մէջ ինչպէս պայծառ երանք մը եղած էր աղջիկը՝ շուտով ամփոփելու սահմանաւոր գուրով երանք մը միայն:

Անհամբեր սպասեց Կիրակիին՝ Սեզան տեսնելու համար: Նուաշին պտոյտ մը, ծովահայկաց զրօսամայրի մը մէջ հոգեւոր երկար խօսակցութիւն՝ առաւելապէս զիրքերու մասին: Երբ չըթնէր կը լռէին՝ աչքերն է, որ կը խօսէին ու հոգիները թռիչք կ'առնէին:

Տուն եկաւ խաղաղած, երջանկացած ու իր երջանկութիւնը անխառն պահելու ճիգով մը՝ իրեն սպասող անստոյգ սպաւաշին ոտուերները վանել ջանաց:

Այդ օրերուն ինչպէ՞ս կրնար դուշակել, թէ ինչ անուկնկալ կը սպասէր իրեն...

Երեկոյ մը, երբ սենեակը մտաւ՝ աչքերը զարմանքով կանգ առին սեղանին վրայ, ուր բազմեր էր նոյն կապոյտ ծաղկամանը՝ մէջը լեցուն ծաղիկով:

Յանկարծ, առուի մը կարկաչին նըման քրքիլ մը ծայր տուաւ: Կանացի առողջ կուրծքէ մը ժայթքող անզուսպ բերկրանք մը իր շուրջ յորդեցաւ: Ծածանող աչքերով ու թեւերուն մէջ նետաւելու մղումը զուարթ տիկնորէ ջանքով դրան ետեւէն դէմ վազեց Աստղիկ:

— Նորէն եկայ, Պրն. Գուրգէն, պիտի մնամ նորէն...

Շփոթած ու շուարած պահ մը դիտեց, ու՝

— Հապտ կարօտցեր էիր մոմադ, փխիկներդ...

— Մոմաս փխիկները բաժնեք է ուղղներուն, հիմա եթէ մեզի դալու բլլա՞ս՝ ա՛յ անոնք պիտի չկրնաս տեսնել:

— Ուրեմն մոմայիդ նեղուեցար ու անոր համար հոս եկար...

— Աէէ՛, — խնդաց երջանիկ զեղումը, — քիչ մը նեղուեցայ, բայց անոր համար չէէ՛...

— Հապա՞...

— Օ՛, — լըջացաւ դէմքը, գլխու ցնցումով մը ետեւ նետեց ճակտին ինչպէս դանդուր մը, դանդաղօրէն մօտեցաւ ծաղկամանին, ծաղիկ մը հանեց մէջէն, առանց իր կողմը նայելու՝ չըթնէրուն մօտեցնելու շարժում մը քրտնալու, յետոյ նետեց դաշն իրեն ու փախաւ դուրս:

Գուրգէն քարացած մնաց հոն: Բույժ մը միայն: Աղջիկը ձեռքերը ետեւ պահած՝ շարունակ ժպիտով մը վազեց եկաւ ու դէմը կեցաւ:

— Գիտցիր ինչ բերի քեզի...

— Ձեր պարտէզին պտուղ մը:

Աստղիկ բացասական գլուխը շարժեց:

— Աղուոր ծաղիկ մը, — ըսաւ ժրպտելով:

— Ձգիտցա՞ր...

— Շա մարգարէ չեմ, ինչպէ՞ս պիտի զուշանեմ:

— Նորէն փորձէ, ուրիշ բան մը ըսէ:

— Լուսանկարդ, — առանց մտածելու թռաւ չըթնէրէն:

Աղջկան իրեններուն կառչած հրաշքօտ աչքերուն մէջ երազանք ինկաւ ու՝ նուաղկոտ ձայնով ընդհատ-ընդհատ ըսաւ.

— Պիտի ուզէի՞ր ատիկա... պիտի ուզէի՞ր... չունի՞մ...

Ծուրաւոր ինկած ըլլալու զղայնութիւնը ունեցաւ ու դուրս գալու համար խսկոյն գոչեց.

— Գուշակեցի, գտայ, փխիկ մը բերի չետա՞...

Վարակող քրքիլ մը յորդեցաւ Աստղիկի կուրծքէն.

— Գոցէ աչքերդ ու բաց բերանդ, — ըսաւ վերջապէս:

Գուրգէն իսկոյն Հնազանդեցաւ, ժողովն տալու Համար ազգեցութիւնը իր սխալ քայլին:

— Համով չէ՞, — Հարցուց աղջիկը, — ես չիմեցի, քեզի Համար չիմեցի...

Այժմ, տարիներ ետք, տակաւին տեսակ մը դարստափով կը մտածէր, թէ Աստղիկի ներկայութեան, որոշ պահերու, կրնար կամքը տկարանալ, եթէ Սեդան չըլլար...

Սեդայի հանգէտ ունեցած զգացումները զրահեր էին դինք. եւ ատոր Համար երախտազարտ էր ինք, ինչպէս երախտազարտ էր Աստղիկին՝ իր սիրտը Սեդային բանալու վճռականութեանը, փութկոտութեանը Համար:

Յաջորդ օրն իսկ պատահեց էր անբույսական, սարսափելի, որուն վերջնական իսկ օտարու կը պատճառէր:

Երեկոյեան, գէպի տուն ճամբուն վրայ նշմարէր էր Սեդան, որ բոլորովին մոտեցիր, կը քալէր հաւանաբար առանց շուրջը տեսնելու:

— Սեդա՛, — դռնէն ու մօտեցաւ:

Աղջկան դէմքը կարծես աւելի մոտեցնեցաւ:

— Գիրքդ դտայ ու տարի, — ըսաւ չոր, — տունի օրիորդը քաջաւ դուռը, չեչտակի նայեցաւ աչքերուն ու աւելցուց, — տուի անոր:

Իսկոյն կռահեց Սեդային Հոգեկան տաղանդին պատճառը ու ներքնապէս հրճուած՝

— Բայց կ'ուզես Աստղիկին, — ըսաւ զուարթ ծիծաղով, — պարզամիտ աղջիկ մըն է, գիրքերու գրեթէ թշնամի:

Առաւ Սեդային ձեռքը ափին մէջ, սեղմեց պաշն քերթերն ու անոր որոնող, արժանաւոր աչքերուն կախարդանքը ըմպելով ըսաւ.

— Կիրակի դարձեալ կ'ըլլանք միասին, կը խօսինք ու... կը վիճինք նորէն:

Երբ մտաւ սենեակը՝ սեղանին վրայ էր դրքը, որուն մէջէն թղթիկ մը կ'երկարէր. հաւանաբար Սեդային կողմէ զրուած երկտող մը: Նոյն պահուն, խնդդուն հեկեկանք մը հասաւ ականջին:

Հոն, հանդերձակային առջեւ, դէմ-

քը իր զգեստներուն մէջ թաղած՝ կը հեկեկար Աստղիկ:

Ստոսիկ վրդովուած, չղիտնալով ինչ բանի վերապրել՝ զրկեց զայն ուսեւրէն ու բերաւ քաղմոցին վրայ:

— Ի՞նչ պատահեցաւ, — Հարցուց քնքշութեամբ՝ թաշկինակովը սրբելով աղջկան դէմքը ողողող արցունքները, — բռն, ի՞նչ պատահեցաւ... մօրաքույրդ ի՞նչ պիտի ըսէ, ի՞նչ պիտի խորհի հիմա...

Առաւ աղջկան կարմրած աչտերը ափերուն մէջ ու կրկնեց հարցումը.

— Մ...մ...բա...քոյրս տունը չէ, — հեկեկաց ան ու գէմքը սեղմեց Գուրգէնի կուրծքին, — ան... ան... աղջիկը... ան բերաւ ատ ֆրանսերէն գիրքը... նամակ ալ գրեր է, «սիրելի Գուրգէն» գրեր է...

Բացատրութեան պէտք չկար այլեւս. արեւի լոյսին պէս պայծառ էր ամէն ինչ:

Հանդարտեցնելու Համար սկսաւ շոյի մօտերը.

— Աստղիկ, ինծի նայէ, — ըսաւ մեղմօրէն, քայց քաջայայտ դժգոհութեամբ, — աչքերուն մէջ նայէ. ես քեզ ալ քոյրիկ մը կը նկատեմ, ան ալ, անոր հետ մէկ տան մէջ մեծցած եմ, բնական է «սիրելի Գուրգէն» պիտի գրէր. դուն եւս չեմ ուզեր, որ «պարսն» բսես: Զեւ պիտեք անշուշտ, որ թուղթերս եկած են, պէտք էր կտնուիսն ըսէի ասիկա քեզի, որեւէ օր այլեւս կրնան կտնել զիս, եւ ես ճամբայ կ'ըլլեմ դէպի Ամերիկա:

Ամէն անգամ, որ կը յիշէր այդ ու յաջորդող տեսարանները՝ մեղապարտ զգացումի մը յարուցած խղճահարուրդով իր տառապէք:

Աղջկան համակրանքը նկատելի էր առաջին օրէն իսկ. զգացեր էր, թէ ինչ բանի կը ձգտէր իր անտիրութիւն, ինչո՞ւ ուրեմն անմիջապէս չէր յայտնած երկրէն հեռանալու իր որոշումը:

Կը մեղադրէր ինքզինք, պէտք չէր առիթ տար, որ յուսադրուէին: Վիշպէ՞ս կրնայի գուշակել, թէ այդպէս պիտի լրջանար խնդիրը, խորտնար ու նման

Համեմատութիւններ ստանալու, կ'ըլլար ինքնարդարացումը:

Ձէր կրնար տառնց հողեկան խռովութիւնը ինչ որ յաջորդեց իր յայտնութեան... Առաջիկ դարեցուց լացը, աչքերը խռուր-խռուր բացած՝ սիրավառ նայուածքով մը պահ մը դիտեց գինք ու յանկարծ թեւերովը իրեն փարելով գոչեց.

— Ու ալ կու գամ... կու գամ... գին ալ տար... գին ալ հետդ տար...

Շեմեցաւ: Շուտեցաւ: Սարսափեցաւ: Ի վերջոյ, քովն իրեն վերադարձաւ՝ պոկեց աղջկէն կուրծքէն ու բառերը մէկիկ-մէկիկ շէտեցով ըսաւ.

— Աստղիկ, դուն երեսայ չես... ես չեմ գիտեր, թէ ինչ կը օգտակ ինձի հոն, այդ մեծ ու անծանօթ երկրին մէջ. ես ինչպէ՞ս կրնամ քեզ հետ տանիլ...

— Դուն դայն պիտի տանիս, դիտե՛մ... դայն պիտի տանիս, — գոչեց Աստղիկ կրկին փղծկելով, — ան գիտէ սիրող աղջկէն... դուն դայն կը սիրես... ա՛ն, — եւ յուսահատի մը խնդար վազելով մօտեցաւ դարակին, նետեց ծածկոյն մէկդի ու ձեռքի մէկ հարուածով գիրքերը թափեց դետին:

Սթափեցաւ իսկոյն: Իր այդ յախուռն արարքէն սարսափած, շուտաւ՝ զարկեցուց լացը: Բոպէ մը ամօթահար գիտեց հոռու հոն ցրուած գիրքերը, ապա մէկիկ-մէկիկ վերցուց, շարեց կրկին ու ծածկոյնը տաած՝ զլխահակ ելաւ դուրս:

Գուրգէն այլեւս չտեսաւ դայն:

Ճիշդ ամիս մը ետք, ճամբայ կ'ելլէր դէպի Նոր Աշխարհ:

Առաջին վրայէն ջնջուեց իր աղաւնին լուսաւոր տղերուն դրոշմած հետքերը: Քիչ անդին, դունադեղ հովանոցներն ու մարդկային մարմինները կորսուեցին արդէն ծովափէն: Կարծես, իր գոյներու համարութեան զօգուհ նկարիչը յանդարձական Նոր Ներշնչումով մը, սրբերէր զանոնք պատառիւն վրայէն: Հորթ-զանի երկայնքին վերջալստի հրդեհը կը մարէր ու ջուրի եզրին՝ պարտաւոր ճանքով երամ մը կը հանգչէր:

Մանուկ մը վաղելով մօտեցաւ իրեն: Լեռնիկն էր: Նոյն պանդուկի հիւրերէն բարեկամի մը զաւակը: Այնքա՞ն նման էր ան Յակոբի մանուկին նկարին, զոր Սեղա վերջերս զրկեց էր:

Գրկեց աղեկը: Շոյեց, դուռնց դայն ու սեղանց կուրծքին, հոն՝ ուր կարծես վէրք մը կ'արիւնէր ու կը կոտորար: Իր անհայր մնացած մանկութիւնն էր, թէ հայրանալու շիբալանացած բաղձանքը:

Կարօտ մը, բուռն ու իր առջեւ տաբանուող սառնակի մանուկն իր անհոն կարօտ մը զգաց. Սեղան իր մօտ ունենալու կարօտը, այրող, խանձող կարօտը, որուն յաջորդեց զաղափարի մը փայլատակումը եւ ցատկեց ոտքի:

II

— Քսան տարի, ամիս մը, տասը օր...

— Ի՞նչը, — հարցուց Սեղա զարմացած:

— Հեռագիրս...

Սեղայի աչքերը, որոնք տակաւին կայծկլտալ գիտէին, ուղղուեցան Գուրգէնին.

— Ձգողացիր, չէ՞...

Գուրգէն չպատասխանեց. դժուարաւ սեղմելով ափին մէջ գրուած ձեռքը:

Այս նոյն ծովափի, նոյն նստարաններուն վրայ էր, որ իր անցեալի գառն ու քաղցր պահերը ոգեկոչելէ, վերապրելէ ետք, յանկարծ սրտնում տեսեր ու նոյն օրն իսկ հեռագրեց էր.

«Որպէս թուրքիս ճամբայ ելիր»:

Իբրեւ թէ կատակով, մէկէ աւելի անդամներ ըրած հորցումը կրկին թրաւ շրթներէն.

— Ճիշդն ըսէ, Սեղա՛, ի՞նչ զգացիր երբ հեռագիրս ստիւր... երբեքիցէ կատակածներ ունեցե՞մ էիր:

Պատասխանները, իրենց բաղձաթիւ տարբերակներով՝ միշտ նորութիւն մը կ'ունենային իրեն համար:

— Ի՞նչ կ'ուզէիր, որ զգայի, — յարեց Սեղա քնքշութեամբ, — Յակոբը երկու զաւկի հայր էր արդէն, մայրս վե-

բաժնունսցած, զիս դարպասողները չէի կրնար, չէի ուղեր քաջալերել, չէ՞ որ խոստացեր էի սպասել ու գիտէի, թէ աստիկս երկար պիտի աւելի... Թէեւ ունէի միտաւորութիւն վրադ, բայց մեծ քաղաքի մը մէջ, դժուարութիւններու առջեւ, չատ մը բաներ կրնային պատահիլ... Ինծի կը մնար՝ նամականերուդ ջերմոտիճանը չտփել...:

— Ե՞ւ...:

— Եւ ի՞նչ... Կանոնաւորապէս կը գրէիր, չէ՞... Եւ ես, բարեբախտաբար, վերադարձան նուազում չէի տեսներ: Զիս ամէնէն աւելի մտահոգողը այն էր, թէ թերեւս զաղափարական աշխատանքներուդ պատճառաւ պիտի վարանէիր բնատանկան պատասխանատուութիւններ ստանձնել:

Նետեց թելը Սեդայի ուսին ու քաշեց դայն իրեն.

— Միշտ հիացած եմ թափանցելու կարողութեանդ, — յարեց գոհունակ ժրպիտով, — ճիշդ է, կը վախնայի, լրջօրէն կը վախնայի այդ մէկէն... Ուրեմն միշտ գիտակցած ես այդ բանին եւ տանը համար է, որ ոչ մէկ զանդատ կը լսեմ չրթներէդ...:

Հոնցին, ընչ ետք, Սեդա հարցուց.

— Տարիներ շարունակ, Վահանը տըղաքը գոռելով ու աչքերուն մէջ նայելով ըսած է. «Գուրգէնին տուած խրատներուն կը պարտիս ասոնք»: Ինչո՞ւ...:

— Որովհետեւ, առանց գիտնալու, թէ ինչ կը կատարուէր ներաշխարհիս մէջ՝ իբրեւ թէ կը ջանար սթափեցնել, ցնցել, զէպի կեանքը մղել դէս: Այդ օրը, հոս, իր խօսքերը թերեւս ալ ազդեցութիւն մը ունեցան անմիջական որոշումիս մէջ:

Գուրգէն աչքերը յառեց Ֆլացող ալիքներուն ու անոնց հետ հեռացաւ իր յուշերու, յիշատակներու ցանցին մէջ ինկած:

Յիշեց արտին երգող տրոփը, երբ օղակայանին մէջ Սեդային կը սպասէր, յիշեց՝ թէ ինչպէս առաջին անգամ ըլլալով սեղմեց աղջիկը կուրծքին ու ղէժքը անոր մազերուն մէջ թաղած՝ — համար-

ձակութիւն մը, որ կարօտն ու միջավայրը տուած էին իրեն — «Վերջապէ՛ս», շնչաց:

Ձեռք ձեռքի անցան անոնք մեծ քաղաքի մեծ պողոտաներէն՝ յոյսով ու լատեսեսութեամբ դիմեալ:

Երբ առաջին տնգամ մտաւ ինք Նիւ Եորքի թոհոբոհին, մոլեղնաւ սմբուի վազքին, հոսող ինքնաշարժներուն ու ու քաղաքի կուրծքն բարձրացող ժիւրիին մէջ՝ գլխադրոյտ զգաց եւ հիւզէի շափ պզտիկցած: Ամենի ալիքներու գէժ մաքսաւորու նման զգացում մը համակեց ղինք ու ամէն կողմէ իր վրայ խուփող զազաններու տղաւորութիւնը՝ զործեցին երկնաքերները իր վրայ:

Տարիներ ետք, Սեդային հետ կողք կողքի, երբ կը քալէին սահայն՝ այդ ժիւրը կարծես երգի մըն էր վերածուած: Յուցափեղկերու, վաճառատուներու որդի-ասծ ճոխութիւնը, քաղաքին փարթամութիւնը շլացուցին Սեդան:

Փարք Էլլընթիւ, Ֆիֆթի Էլլընթիւ, Պրոտուէյ...

Հեքիաթային Պրոտուէյ... Լոյսի հեղեղ ու շարժում, գունազեղ շողերու շատրուանում, թատրոններէ ու ճաշանարար, խորհրդաւոր անկիւններու մէջ մոլութիւններու արեւցնող վայելք:

Աղանի մը մօտեցաւ ոտքերուն. գետին ինկած պիտակ մը խլեց ու թռաւ: Արձակուրդի այս խաղաղ օրերը բնութեան մէջ՝ միշտ կը տանէին ղինք ղէպի անընթաց անցեալու ու ինք տեսակ մը հեշտանքով կը սուգուէր, կ'իյնար անոր մշտնապատ բաւիղներուն մէջ:

— Ո՞ւր են աղաքը, — հարցուց յանկարծ օթափած ու կարծես անհանգստացած:

— Արմէնը ընկերներուն հետ ոտնաղնդակ խաղալու զնաց:

— Վրէ՞ժը...:

Կինը վարանեցաւ. հարցումը կրկնուեցաւ:

— Աւագին վրայ պէտք է ըլլայ...

— Որո՞նց հետ...:

— Ձեմ գիտեր, — ու՛ աժուանոյն

միտքները այլ կողմ ուղղելու ճարտար հընարամտութեամբ անմիջապէս աւելցուց.

— Գուրգէն, երբեմն տակաւին Աստղիկին մասին կը մտածես, չէ՞...

— Աստղիկին... Երբեմն կը յիշեմ անշուշտ, մանկուանկ, մաքուր հողի ուսնէր...

— Եւ... սիրահարուած էր:

— Մի մոռնար, որ անոր կը պարտին քեզի մօտենալու ու սիրտս բռնալու...

— Գիտե՞ս, յաճախ մտածած եմ ու չեմ համարձակած... Հիմա, քսան տարի ետք, ահա կը հարցնեմ. ի՞նչ էին քո՛ւ զգացումներդ, ճիշդն քե՛զ...

— Աւելորդ, անտեղի հարցում: Ի՞նչ կ'ուզէիր, ո՞ր ըլլային զգացումներս, երբ քեզ է, որ կը սիրէի: Հոգեկան ի՞նչ կապ կրնար գոյութիւն ունենալ իմ եւ այդ պարզամիտ աղջկան միջեւ:

— Բայց ես երբեք չեմ կրցած մոռնալ այն օրը, երբ Պօպէլը վերադարձրեցիս համար քացի հոն... Կենսութեան արդիւնքն էր իմ հոգեւոր քայքայումը. «Հաճեցէք Գուրգէնին տալ այս զիրքը», ըսի: Յանկարծ քարացաւ, դէմքը մթաղնեցաւ ու ինծի աչքէս թուեցաւ, թէ կուրծքին տակ բան մը փառւ: Եթէ համակրանք ցոյց տուած չըլլայիր՝ այդպէս պիտի չըլլար:

Գուրգէն ակնարկը յառեց փրփրոտ ալիքներուն.

— Գիտես, թէ քեզէ ոչինչ պահած եմ, — բնականօրէն, — զուարճալի էր Աստղիկը ու առաջին օրէն զղացած եմ իր ինձմով յափշտակուելը, հաւանարար, հետեւանք՝ մօրաքրոջը խօսքերուն ու ծրագիրներուն... Օրերու ընթացքին, կ'ենթադրեմ խորացաւ այդ զգացումը իր մէջ եւ պէտք է գիտնաս, թէ երբ մէկը քեզ հոգեւին կը սիրէ՝ չես կրնար բոլորովին անտարբեր մնալ, անոր հանդէպ դռնէ՛ համակրանք չգաւ: Քեզի ծանօթ միջադէպին յաջորդ օրն իսկ մեկնեմ էր. հայ աղջիկ էր վերջապէս:

— Ի՞նչ լուրջ բաներու մասին կը խօսիք նայիմ, ինձի ալ ըսէք...

Վահանն էր. աւելի ճիշդ՝ Վահանին

ուրուականը միայն: Ծերացած, կքած, ճերմակ մազերը նօսրացած եւ դաւադանը իրեն նեցուկ՝ զանգաղօրէն կը քալէր:

— Հին օրերու մասին, — ըսաւ Գուրգէն կռահելով գալիք պատասխանը:

— Քեզի միշտ ըսած եմ, որ պիտի մոռնաս հինը, ապրիս այսօրը, ներկան, ու նայիս վաղուան: Եթէ խրատներս չըլլային՝ ո՛չ Սեդան հիմա քովդ կ'ունենայիր, ոչ ալ անշուշտ կորիւններդ: Ձէ՛, չէ՛, չեմ նստիր, պիտի քալեմ քեզ մը. Վրէժը տեսայ, աւաղին վրայ էր. վիզին փակած աղջիկը հայու բնաւ չէր նմաներ...

Գուրգէնի ակնարկը հետեւեցաւ հեռացող Վահանին՝ առանց զայն տեսնելու: Դէմքը մթաղնեց, մոռցած էր յօնքերը կիտուած, հողին փոթորկած:

— Ատիկա էր ուրեմն վարանումիդ պատճառը. գիտէիր ու չուզեցիր ըսել, — դարձաւ Սեդային՝ ալիքներուն մէջ կայծեր:

— Մի՛ բորբոքիր, կ'աղաչեմ, մի՛ բորբոքիր...

— Ի՞նչ կ'ուզես որ ընեմ, հաշարւի՞մ... մեր տղան տղուոր օտար աղջիկ մըն է գտեր բոնի ու հրճուի՞մ... Հոս գալու որոշումը վերջին բոպէին յայտնեցի՝ այդ աղջիկը ինչպէ՞ս է լուր ունեցեր ու հետեւեր, ինչպէ՞ս է եկեր դռներ...

— Հաւանարար տեղեակ էր: Օր չ'անցնիր, որ ձեռով մը հանդիպում չուեննայ, կամ չհեռաձայնէ. այստեղիներէրը այդպէս են, երբ տղու մը համակրին՝ այլեւս տղուկի նման կը փակին:

— Ինչո՞ւ պահեցիր ինձմէ՛...

— Արձակուրդիդ օրերը թունաւորելէ դատ ինչ օգուտ պիտի ունենար ատիկա: Խոստացիր, որ ոչ մէկ ակնարկուիլն պիտի ընես Վրէժին, մինչեւ մեր տուն վերադարձը: Պէտք է խոհեմութեամբ վարուիս...

— Սեդա՛, Սեդա՛, ինչպէ՞ս կրնաս այդպէս հանդարտօրէն, անտարբերօրէն խօսիլ, — պոռթկաց Գուրգէն, — Վրէժը տակաւին չծնած մեր զաւակները հայ

պահանջում, Հայօրէն մեծցնելու, զհաշիցը նող կաթնային՝ զո՞ւ չտուլու համար ա՛մէն կերպով պայքարելու մասին կը խօսէինք ու մեր լաւագոյնը բերինք: Ես նրա՝ տեղայ իրենց սնարին մօտ ու տարիներ շարունակ պատմեցի մեր Հայրենիքի, մեր նախահայրերու, մեր գահակալներու մասին. ահոնց յաղթանակներուն ու պարտութիւններուն մասին. պատմեցի մեր ստեղծագործ ու քաջարի ժողովուրդին, մեր սրբազան պապերուն ու մեր մըր շակոյթի տիտաններուն մասին: Կրակէ բառերով պատկերացուցի մեր սեւ ճակատագիրը, մեզի մի՞նչապէս անպատմէի ռժիսը: Աստուածացուցի մեր ա՛նդամասիւր թաղ Ներսէսները ու հրճուեցայ զաւակներուս ուրջերուն մէջ տեսնելով այն բոցը, որ Հայ հողին կը ժայթքէ: Սիրտս ախպէ՛ս կ'ուռէր Հպարտութեամբ, երբ կը լսէի Վրէժի հրաշունչ խօսքերը մեր երիտասարդներու ժողովներուն: Իր ու Արմէնի կուրծքին տակ մէջ գրինք ազգային պիտակցութիւն, ազգային վառ ոգի, իրենց արեան մէջ ներածեցինք այն պատգամը, զոր մեր Հայրերը իրենց մահով մեզի կտակեցին: Եւ պիտի թողունք, որ օտար ազնի՛կ մը խլէ մեզմէ մեր Հայ մեծցած զաւակը...

Սեդա Կանայրը յառեց Հեռուն ու ձեռքը ամուսնոյն ձեռքին վրայ դնելով՝ ըսաւ.

— Եթէ իրապէս արմատ ձգած են մեր փառքերը անոնց էութեանը մէջ, եթէ իրապէս յաջողած ենք մեր ճիգերուն մէջ՝ միտահ ելիլ, ո՛չ մէկ օտար ազնիկ կրնայ օտարացնել դոնոնք: Կրթութեամբ, սիրուն, Համակրելի ազնիկ է Մոնան եւ լաւ ընտանիքէ: Հաս ծանօթ միտքայնոյ մըն է Հայրը: Պէտք է նկատել առնես միջախալի ազնիւութիւնը, որ ոչինչով նման է քու Հասակ նկատման միջախալի, եւ այս սերունդը՝ քո՛ւ սերունդդ: Ինչ չո՞ւ կը մեղադրես Վրէժը, — աւելցուց պզտիկ վարանումէ մը ետք, — քիչ առաջ երբ Աստղիկի մասին կը խօսէինք՝ դուն ինքը ըսիր, թէ երբ մէկը քեզ հոգեկան կը սիրէ՝ չես կրնար անտարբեր մնալ, անոր Հանգչալ, դոնէ՛ Համակրանք

չզգալ: Մտածած ես արդեօք, թէ ինչ պիտի ըլլար վերաբերումդ գէպի Աստղիկը, եթէ սիրտդ ուրիշի մը տուած չըլլայիր... Կամքդ կրնար տկարանալ յանկարծ ու թերեւս առնէիր այնպիսի քայլեր, որոնք քեզ ստիպէին կեանքդ անուրիին կապել: Աստղիկը ինչո՞վ էր յարմար քեզի, բացի իր հայութենէն: Մոնան ամէն կերպով օժտուած ազնիկ է, օտար է միայն, եւ մի՛ մոռնար, որ կան օտար ազնիկներ, որոնք իրենց տունը Հայացուցած են ու կան նաեւ դատարին Հայեր, ազգային գիտակցութենէ զուրկ Հայուհիներ, որոնք տղիտորէն գէպի օտարութիւն կը դիմեն:

— Ատոնք բացառութիւններ են, — յարեց Գուրգէն ձեռքի խիստ շարժումով մը, — եւ բացառութիւնները կարելի չէ Հայուի առնել: Եւ յետոյ, օտարը որքան ալ ջանայ՝ մասամբ միայն կրնայ յաղթողիլ: Գալով Աստղիկին՝ այո՛, կ'ընդունիմ, ոչ մէկ կերպով յարմար էր ինծի, բայց Հայ էր, Սկիւտարցի Հայ, եւ ես որեւէ տուն պիտի նախընտրէի զայն՝ օժտուած ու ներքայած օտարէն: Այո խօսքերս զիտեմ, թէ ինչ ամականներ կրնան շարել անունիս սուղեւ, բայց փոքր չէ...

— Լաւ որ կ'ընդ ես եմ, — ժպտեցաւ Սեդա, — այլապէս խօսքերդ կրնային փոթորիկ յարուցանել...

— Գիտեմ, թէ կը Հասկնաս, եւ անգամայն կը խօսիմ: Աստղիկին Հետ տաք ու Հարազատ պիտի մնար ասան միտքայնոյ, մէկ խօսքով՝ Հայ մնար. երկրորդին Հետ՝ ստոնաչունչ օտարութիւնը պիտի սողոսկէր հոս: Վաղգէն Շուշանեանը, չեմ յիշեր իր որ դրութեան մէջ եւ ինչ քառերով, Հետեւեալ միտքն է արտայայտած իր Հաս սիրելի օտար մէկ բարեկամութիւն մասին խօսելով. «Երբ կը մտածեմ իր վրայ՝ ո՛չ մէկ, ո՛չ մէկ թերութիւն կը գտնեմ, բայց ամուսնութիւն իր Հետ՝ տարբեր պիտի չըլլար կեանքս սեւամորթի մը Հետ կապելէն»:

— Բայց պէտք է նկատել առնես, որ օտարութեան պատուարը գոյութիւն չու-

նի մեր տղոց համար... Նոյն երկրին մէջ ծնած, նոյն միջավայրին մէջ հասակ նետած, միասին նոյն գոյրոցները յաճախած, տնոնք օտար չեն նկատեր դերար:

— Կը տեսնեմ, որ դուն այս բոլորը չես դարձնի անհոգութեամբ, դոր հո կը դադարես: Կը փնտրես միայն իրատես ըլլալ, — ըսաւ Գուրգէն զանազան ձայնով, — դուն չճանչցար Հայրդ, եւ զըւարթաթիւն մայրդ յաջողեցաւ քաղցրացրել քու եւ Յակոբին կեանքը: Զունեցաւ իմ հոգեկան տառապանքներս... Իմ դաւաններս հա՛յ են, Սեդա, կը լսե՛ս, հա՛յ են, ինձի պէս հա՛յ: Վրէժը սենեակիս եկաւ օր մը, բացեր էի թիթիկէ պղտիկ տուփը՝ որուն մէջ մանկութեանս յիշատակները պահած եմ: Գիտէր պտուղներու թիւերը... Վրէժը սենեակիս եկաւ, — ըսի, — այո ամառ, երբ լեռ երթանք՝ սա տուփը մայրի մը տակ պիտի թաղենք, եւ կամ, աղուոր լինի մը մէջ ձգեմ, չեմ կրնար աղբամանը նետել դայն: Հի՛շ, գոչեց, տուփի ձեռքէս իւրեւրով, եւ կը պահեմ տանք, կը պահեմ ու միշտ կը լինեմ պատմածներդ, տառապանքներդ: Տեսայ, որ ափին մէջ էր սեւ փոքրիկ խաչը, զոր հօրս տուն չփերաղարձած օրն էի գտեր... Այո՛, իմ դաւաններս հայ են, — կրկնեց զողացող ձայնով ու տամկացած աչքերով:

— Անշուշտ թէ հայ են, — յարեց Սեդա յուզումով, — անշուշտ հայ են, բայց օտար հողի վրայ ծնած, օտար միջավայրի մէջ հասակ նետած հայ... Ինչ որ մեզ կը մտահոգէ՝ տմէն կողմ ու ամէնուն պատահած, սովորական դարացան է: Ի՞նչ պիտի կարենանք ընել, եթէ օր մը դան ու «ամուսնացանք» րսեն... Պէտք է պաշտօնաբերել հետ այժմէն հաշտութիւն, այլապէս, պիտի ֆիզիքապէս տուժես եւ մեղի ալ քեզի հետ տառապանքներս: Ընդէ, օտար է, բայց դոնէ մեղի պէս քրիստոնեայ է...

— Ինձի նայէ, Սեդա, — դուցե Գուրգէն աչքերէն կայծեր արձակելով, — քրիստոնեայ ըլլալէ առաջ հա՛յ եմ ես,

կ'իմանա՞ս, ՀԱ՛Յ եմ ես եւ իմ թոռներս իմ դաւաններու պէս հայերէն պէտք է բարբառին, այսպէս իմ թոռներս պիտի չըլլան անոնք: Մի՞թէ մեր հայրերը մեռան, որ մենք օտար ափերու վրայ օտարանա՞նք... Այդպէսով մենք դաւանանած կ'ըլլանք անոնց յիշատակին ու պտուղներուն: Արիւնիս մէջ է հօրս ձեռքը՝ պատգամը իր խաչի պատին: Գատմը ունինք մենք, Սեդա, սուրբ դատ մը: Եթէ մենք չյաջողինք՝ մեր գաւառներն են, որ դայն պիտի պաշտպանեն, հետապնդեն ու անոնցմէ ետք թերեւս մեր թոռները, մինչեւ որ յաջողինք, յաղթանակեն:

Անհարկը յառած ալեկոծ ծովուն կատաղի ալիքներուն՝ կարծես զառանցանքի մէջ էր:

— Մենք կոտորուած, անիրաւուած ժողովուրդ, մենք պարտուած, բայց մեր պարտութիւններուն մէջ իսկ յաճախ յաղթական՝ պիտի պայքարինք մինչեւ վերջնական, ամբողջական յաղթանակ: Պիտի չընկրկինք, ո՛չ, պիտի չընկրկինք. օտար ափերու վրայ մեր համբանքը պտահելու համար անվերջ պիտի պայքարինք: Յանկարծ, կնոջը դաւանյով՝ դուցե:

— Իմ հաւատքս անխորտակելի է, Սեդա, կը հասկնա՞ս, ես նոյն ոգին յաջողած եմ զնել նոսր դաւաններու մէջ, ներարկած զայն անոնց էութեան մէջ: Պիտի հեռացնեմ Վրէժը... եւ անմիջապէս, որ դաւակն հեռանա՞նք, աղջիկը նոր մը պիտի փնտռէ. աղջիկն էն ասոնք, աղքատն է անոնց սէրը: Վրէժը կը սիրէ ճամբորդել. պիտի զրկեմ զայն Հայաստան... Թող տարի մը երկուք ուսանի հոն: Թող չնչ մեր լեռներուն օդը, Թող խմէ մեր ողբերներուն անապակ ջուրը ու հայրենի հողը, մեր պապենական սուրբ հողը իր հրաշքը պիտի գործէ. օտար աղբեղութիւններէ զայն պիտի ձերբազատէ ու ամբողջական հայ դարձնէ: Իմ թոռներս ու թոռներու թոռները պէտք է զտարին հայեր մնան, Սեդա, գտարի՛ւն հայեր...

3. ՊԷՐՊԷՐԵԱՆ

ԿԻՆԸ՝ ՆՄԱՆ ՆԱՌԻ



Դու՛ն ծառ մը՛ն ես,
քու վարդագոյն մերկութեան վրայ
— Որ խիտ մշուշներէ կապուած
հրաշք է հոսուն, --
տերեւներով դալար
ոստեր են աճած.
ու երկու, մեծ,
հազարափերթ ծաղիկներ կան,
որոնցմէ
վազուան լոյսը կ'արթննայ:

Կը բանաս դուռը
եւ կը քալես ճամբաներէ
խճողուած՝
մեքենաներէ, սրուակներէ գունաւոր,
ճակատներէ վիրաւոր
եւ բառերէ անիմաստ:
Ճամբուն՝ ցօղեր կը կաթին
քու մատներէն ծխածան
...եւ մայթերուն
հսկայ բոյսեր կը ծլին,
որոնք դանդաղ, բազմանալով կը ծածկեն
ինքնաշարժները ամէն
եւ դիակները անթաղ...

Յիշողութեան պէս բոսոր՝
խորունկ ձայներ կանգնած են
ու ձանձրոյթի արտերուն
մառախուղներ լուռ կ'իջնեն:

Դու՛ն ծառ մը՛ն ես,
որ կ'աճի
իւր մարմնին մէջ թափանցիկ,
աչքերուս տեղ
կախարդական
թռչուններ կան,
որոնք վայրի պտուղներու թոյներէն
արբենալով՝ կը թեւածեն
հովերուն մէջ հիւսիսի:

Դ Ո Ւ Ն



Դու՛ն զարնան աչքերն ես:
 Դու՛ն՝ հրահաւերու զետ ես ստորերկրեայ:
 Աքսորներէ՛ պիտ գուրս բերող ճամբան ես:
 Դու՛ն՝ հայրենիք կապոյտ:
 Դու՛ն՝ վեցամսեայ ցերեկն ես բեւեռային,
 եւ վեցամսեայ բեւեռային գիշերն ես դուն,
 Որո՛նք յաւերժութեան առասպելը գիտեն:

Դուն՝
 կրակ եւ լեզուի վրայ,
 ափերու մէջ:

Քեզի կ'երգեմ, ու քիչ-քիչ
 իմ լաւագոյն

Մասը կարծես
 Կը յայտնուի...

ԱՂՋԻԿԸ, ՈՐՈՒՆ ԱԶՔԵՐԸ...



Քու աչքերը մոզական լապտերներ են,
 Որո՛նք անպարփակ լեռներուն նման
 Պարզապէս աչքերէս կը թափին դուրս:
 Ես կը փորձեմ մէկ անգամ քեզ
 Տեսնել համայն ամբողջութեամբ,
 որուն համար

Դարեր պէտք են,
 Իսկ ես չունիմ ժամանակն այդ:
 Դուն եղանակներն ես բոլոր
 եւ գիշերն ես համայնական,
 Ուր կ'ըլլամ թուփ,
 ուր կ'ըլլամ ծառ,
 կ'ըլլամ համբոյր եւ առական
 սահմանապերծ:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԷՐՊԷՐԵԱՆ

3. ԶՈՐԵՑԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՈՒՂԵՒՈՐԱՎԷՊ

«Ենթա» Հայր Էին Դիւզանգական եւ հայկական համբաւներու վրայ

ԼԳ.

ՈՒՍՏԱ ՆԱԶԸՄ

Սանտաարեան վարժարանի զաջի գինուորական ճիւղի ինքնաշարժով. դա-
յի առօք-փառօք, սակայն անդիտակցարար...

Իմ կարիներն երբորդ առաւտուն, երբ սէրք-հարման ծխելով առա-
ւտուն առաջին տուրնս կը խմէի «Թիւրքիկ» բացօթեայ սրճարանին մէջ, տե-
սայ երգիկայէն մինչեւ էրգրում եօլտաշներէս թուրք ենթասպան, որ երկու
դիւղուորներով կ'անցնէր մայիլէն:

Ինքն ալ դիւ աեսաւ, ճանչցաւ,

— Մերհապա՛ վաթանտաշ, — դռնէն եւ չափազանց ուրախութեամբ
մտաւ ներս, ու՛

— Ո՛ւր ես, հա՛հօ, քեզ չօ՛ք փնտռեցի... այսօր ալ օթելները պիտի եր-
թայի, — ըսելով մօտեցաւ ինծի:

— Մերհապա, ապէ՛լըմ, — փոխադարձելով ոտքի ելայ ես ու աթոռ
չոյց տալով աւելցուցի, — պուլտուրու՛նդ, հրամեցէ՛ք, սուրճը միասին խը-
մենք...

Ձնտեցաւ, այլ՛

— Անմիջապէս կիտէլըմ. երթա՛նք, — հրամայեց՝ ոիրալիք մտերմու-
թեան շեշտ դնելով հրամանին վրայ, — զինուորները, դուրսը, կը սպասեն...
կիտէլը՛մ...

Մտէն, որտէ՛ս՝

— Գաջինք, մա՛ք Լղանք... դիտցան խկական ինքնութիւնս կամ կեղծ
նազըմութիւնս. ալ Հրայրը պիտի պատժուի... Իբրեւ զլրտես... ո՞վ կըր-

Նայ հաստատվել է խնդիրը՝ հայրենասիրական ու խաղաղասերական, որ արդեն, ինքնին զատապարտելի է թուրքերի մեջ... Դեպի մահ երթա՛ս բարով, Հրա՛յր, 2000001-րդ Նահատակ հայոց... երթա՛ս քարեմա՛լ... — անցաւ մըտքէս, բայց քարեմախտաբար... Հետք չձգեց. շիտակը՝ Ռաշիտին (այսպէս կը կոչուէր ենթադրանք) անկեղծօրէն ուրախութիւն արտայայտող եւ հագուստ-դէպօրէն ու-թրքական ժպիտը ջնջեց մտքէս անցածին, անցածներուն ձգած հետքերը...

Անվարան ընկերացայ իրեն։

Ճամբան յայտնեց, թէ բերդ կամ զօրանոց կ'երթայինք, զնդապետ Աթոյի մը ներկայանալու... չէ՞ որ ես, ճամբորդութեան ընթացքին, խանդավառած ինքնալաւժը բանեցնելէ ետք, իմ մասին իր ունեցած հետաքրքրութիւնը գոհացնելու համար պարզապէս, ինքզինքն ներկայացուցած էի իրեն ուս կողմէրը աշխատելու եկող մը, ահա ուրեմն դործը պատաստէր. զօրանոցին քաղաքացի վարպետը հիւանդութեան պատճառով ձգած էր դործը ու բազմաթիւ մեքենաներ աւրուած կը մնային էրգրումի եւ շրջակայ զօրանոցներուն մէջ. նախկին վարպետին պէս հմուտ մեքենադէպի մը անշուշտագէտի պահանջ կար ու պահանջին գոհացում տալու գործը իրեն յանձնուած էր, իբրեւ գինուորական պարտաւորութիւն...

— Անմիջապէս սէմ կ'ելլա՞մ Փիքիմէ, — աւելցուց ենթասպան, — սէմտէն էլի վարդաւոք եօք, ըստ իս՝ օղա՛մազ... քանի որ գործ փնտռելու եկած ես էրգրում, իշքէ քեզի գործ, լա՛ւ ամսականով գործ... չես գիտեր որքա՛ն սէվիտիմ քեզ գտնելու համար...

— Համաձայն եմ. քաղաքէլ, — գոչեցի գոհունակութեամբ եւ նոյն ատեն դգացի, թէ էութիւնս ամբողջ կ'աւար ցնծութենէս...

Երջանի՛կ էի...

Երջանիկ, ոչ թէ լաւ ամսականին համար, այլ գործին համար, դործին պոյանալիք հանդամանքին եւ այլ շրջաններ երթալու, նոյնիսկ մինչեւ կարս ու Անի հասնելու... հնարաւորութիւններուն համար...

Ի վերջոյ, ենթասպան դիւ գտած ըլլալուն համար հպարտանալով, խիկ ես... Զարմայր Մ. վարդապետին օրհնութիւնը միշտ իմ վերեւ, միշտ ինծի հովանաւոր ըլլալուն հաւատալով, հասանք զօրանոց, ներկայացուցի իր մեծաւորին, ոմն զնդապետ Աթային։

Տարբերով բաւական մեծ եւ, ըստ երեւոյթին, հանդարտաբարոյ գինուորական մըն էր այս մէկը. հանդարտօրէն մտիկ ըրաւ ենթասպային խօսքերը, իմ մասին անոր շտալած գովառանքները ու համաձայն գտնուեցաւ, որ մինչեւ օրհնաւորութեան վերաբերեալ թուղթերուն ամբողջանալը, ժամանակաւ կերպով ստանձնեմ զօրանոցի աշխատանքին վարպետութիւնը։

Այդ արձանագրեց անունս եւ քարք մը ստորագրելով տուաւ ինծի, որովհետեւ էրգրումի գինուորական ղերձակատունը երթալով, զայն յանձնէի պատասխանատուին, զօրանոցային բանուորի յատուկ տարազ ստանալու համար անկէ։

— Պերապէր կ'իլլա՞մ, — հրամայեց զնդապետը ենթասպային։

Զինուորական ճիւղով զոյգինք գինուորական ղերձակատուն, որ մեծ, բայց շատ հին շէնք մըն էր. անտարակոյս, հայու սեփականութիւն. սակայն նախապէս ի՞նչ կրնար հղած ըլլալ, դպրոց, ակո՛ւմբ, «ՅԱՄԱՅ» իմբադրատուն, Դաշնակցութեան տո՛ւն...

Գործ ու հագուստ բոլորովին մոռնալով, տարուած էի շէնքին հնու-

թեամբ եւ յանձնուած անոր անցեալի ինքնութիւնը դիտնուաւ, նուաղագոյն պարագային՝ կռահելու մղումին...

Շէնքը նախապէս ի՞նչ, ի՞նչ կրնար եղած ըլլալ...

Ենթադրեալ Ռաշիտը ի վերջոյ նկատեց հարցական միճակս, որուն վերջ տալու նպատակով, անտարբերօրէն յայտնեց ինծի համար շահեկանութիւն.

— Էսկի էքմէնի լիսէսը. իսմը՝ Սանասարեան մըլ...

Լսելէս ետք, ա՛լ բոլորովին գացի անցեալ եւ այնքա՛ն համակուեցայ այս չէնքէն դաւառի շորս ծագելուն արձակուած լոյսին խորհուրդով, որ ներկան շոտնալը անկարելի եղաւ ինծի համար...

Թէ ինչպէ՞ս ներկայացանք պատասխանատու դերձակ-գինուորին, թէ ինչպիսի՞ հազուադէպ ընտրեցինք ինծի համար, եւ ինչպէ՞ս ընտրածս հազուեցայ ու ի՞նչ նշան ունեցող զլիարկ դրի գլխուս, չյիշեցի նախ...

Ուշքի եկայ միայն այն ատեն, երբ ենթասպան հունկով նոր արտաքին, հարցուց, թէ այլեւս ինչպէ՞ս պէտք է կոչել դիւ...

— Ուստա չը... չը... Նազըմ, Նազըմ. Ուստա Նազըմ կը կոչուիմ ես արդէն, — պատասխանեցի, հայկական անունիս երկրորդ վանկը մտքէս, սրտէս Սանասարեանի քարերուն զաղտնապահութեան յանձնելով...

ԼՂ.

Ա Ի Ա Ն

«GUY DE MAUPASSANT»

Զիֆթիք, Քանտիլի, Պողոս, Կազի, Բասէնլէր, Ռորսուս, Նարման, Արաս, Ըլրճա, Պաշէօյ, Քորաքուրթ, Ալթընտաղ, Քարազան, Շէնքայա, Ուզունաշէրէ, Պալքայա, Օլթի, Թորթում, Օվաճըք, Մատէն, Պալպուրտ...

Էրզրումի սարահարթին վրայ, Ներքին Տաւրոսի եւ Անդի Պոնտական լեռներու փէշերուն գաւառական քաղաքներ, աւաններ, գիւղեր, անհամար գիւղականք...

Բրբէ Ուստա Նազըմ, 20-25 օր շարունակ, քունի մը բանուորներով ու ինծի յատկացուած գինուորական ճիւղով, լրիւ «երկրաշարժութիւն» կատարեցի Կարնոյ նահանգին եւ մերձակայ վայրերուն, զօրանոցներու մէջ կամ ճամբու եզերքը ձգուած Քեմալի պետութեան «հիւանդ» մէրքէլները զբժըշկելու համար:

Նազըմի գործէս ետք, Հրայրի... կոչումս թափառելը եղաւ միշտ, թափառել ու դիտել, դիտել ու գրաւուիլ...

Կարնոյ սարահարթ...

Հայոց աշխարհի բնութեան զեղեցկագոյն տեսարանները կը պարզուին երկրաշարժի օրրան այս լեռնադաշտին ողջ տարածքին ու անհամար, յորգառատ աղբիւրները եւ Արեւմտեան Եփրատի վերին հոսանքները առանձին դրախտայնութիւն մը կը պարզեւեն պարզուածին...

Օ՛, մեր հայրենիքի այս մարդին մէջ ճահճներն իսկ տեսարժան են. Սաղմիկ ճահճները, Իրենց նազիկ եղէգնաթոյսերով ու ջրասէր, վայրի թռչուններու բաղմաղանութեամբ...

Ձուր տեղ չէ, որ կարենայիք իրենց բնաշխարհի գեղեցկութեամբ երբ
կը հպարտանան, չեն մոռնար նաեւ երանութեամբ դոյիւ այս ճահճները ու
դաննը կոչել իրենց հիւն, լիճ եղած օրերու անունով։ Շատր Կարմոյն։

Հապտ աւելի հետուն, ամենի սարերն ի վար սրտացող թորթութի
ջրվէ՛մը...

— «Թորթութի ջրվէ՛մը գիտողը աշխարհը կը մոռնայ եւ մեկնելէ հաջ,
բացի այս ջրվէ՛մէն ուրիշ ոչինչ կը մնայ յիշողութեան մէջ», — վկայած է եւ-
րոպացի ճանապարհորդ մը։

Եւ ալ, էրզրումի սարահարթին վրայ, եւ անկէ անդին, Անդի Պոնտա-
կան լեռներու հիւսիսային փէշերուն կամ ձորոյի հովիտին մէջ կատարած
չրջողալութենէս, բացի Թորթութի ջրվէ՛մէն, ուրիշ ոչինչ պիտի յիշէի, եթէ
չըլլային այն երկու տւանները, ուր տեսածներս, լսածներս ցնցեցին սիրտս
եւ անմոռանալիութեան խոր հետքեր ձգեցին յիշողութեանս մէջ...

Առաջին աւանը կը գտնուի էրզրումէն ոչ շատ հեռու եւ կը կոչուի
Քըրք։

Հարց է, թէ ատանը այս անունով կոչողները տեղացիները նկատի ու-
նեցած են, թէ տեղացիներն են, որ իրենց յոռի սովորութեամբ... անար-
դարօքն կ'արդարացնեն արդէն իսկ այս անունով կոչուած ըլլալը իրենց
աւանին։

Քըրք։ Կոտրուած...

Քրքըքներէն կամ... Կոտրուածցիներէն շատ շատեր, իրենց մարմ-
նին վրայ, Քըրք ժառ մը ունին անպայման. կոտրուած, կոտորակուած, ե-
րեք չորրորդ, երկու չորրորդ, նոյնիսկ մէկ չորրորդ թորքեր են. Ֆիդիլա-
պէս չորս չորրորդ թորքերը գրեթէ փոքրամասնութիւն կը կազմեն այս սո-
ւանին մէջ. այնքա՛ն շատ են կոյրերը, ծայրայեղ ձեւերով քալող կաղերը,
բոլորովին հալմանդամ գտողները, այնքա՛ն շատ, որ կ'ըսես՝ աւան չէ
այս բնակավայրը, այլ քաւարան է...

Աղտոտ հրապարակին մէկ անկիւնը, սրճարանի մը մայթին, գաւաթ
մը սուրճ խմելը քիթէ-րէրնէ դալու չափ դժուար եղաւ մեզի համար։

— Ալլա՛հ էշքընա, պիւր սառաֆա՛... պիւր սառաֆա՛... պիւր սառա-
ֆա՛...

Մուրաչկաններու ամբողջ շարան մը անցաւ մեր տոջէնէն...

Թէ եւ միշտ նոյն բառերն էին, զորս կը լսէինք, բայց մեր տեսածները
նոյնը չէին. մէկը միւսէն սարքեր հրէշայնութիւն մը կը ներկայացնէին ի-
րենց շափաղանց արդահատելի վիճակին մէջ. կարծես միայն մարմնապէս
թերի չէին անոնք. այլ ուղղակի... թեր-մարդեր էին, իրենց թերութեան
հետ նոյնացած, այլադան, այլաձեւ արարածներ, հրէշածին այլանդակու-
թիւններ, որոնք խղճահարութենէ աւելի՝ սոսկում կը պատճառեն գիրենք
աւանդին...

Ու ես, զօրանողէն առած կանխավճարիս մեծ մասը միտանի, միթե-
ւանի, անքիթ, ծուռ կղակ, կուզ ու կակաղ մուրաչկաններուն սոսկումով
բաշխելէ հաջ, երբ հարցական նայեցայ ինծի ընկերացող բանուորներէն մէ-
կուն, այս վերջինը կեղծ ցաւով, սակայն անկեղծ անէծքով ինծի ներկայա-
ցուց կոտրուածցիներուն յոռի սովորութիւնը.

— Աստուած Կիլանին տայ. մուրաչկանութիւնը քրքըքներուն հա-

մար ամօթ չէ երբեք, ասլէ՛յ, ժողովական արհեստ է. որպէսդի իրենց դասակները մուրացկանութեան մէջ լաւ քարհաստուորներն զառնան աւ յաջողին, դեռ շատ պղտիկ եղած ատեն, այսպէս, անոնց թեւերէն կամ ոտքերէն մէկը կը կոտրեն, կամ զլիւռն զարնելով սէրսէմ կը դարձնեն, կամ զիմացի փալտը-Քիլտիւր բլուրի կատարէն վար կը ղլորեն, որ որեւէ ձեւով միասուի. Երբան աւելի միասուի, ա՛յնքան լաւ մուրացկան մը կընայ դառնալ եւ այլ քաղաքներ, միւշեւ Անպարա, Իսթանպուլ ճամբորդելով, մարդոց խորհմանարութիւնը իր վրայ հրաւիրել աւ շատ զբոս շահել... Քեմալի օրով կառավարութիւնը փորձեց արդիւնէ մուրացկան պատրաստելու այս ձեւը, բայց չյաջողեցաւ. չօննլիսին թեւը կամ ոտքը կոտրելէ ետք, ծնողքը ըտա՛մ-տա՛մ տիւշքիւն կ'ընէր, ըսածը վկաններով կը հաստատէր եւ անպատասխար տելի կը դառնար...

Թուրքին այսքան թուրք ըլլալը ո՛վ կընար երեւակայել...

Ուրիշներ ժամանակաւոր զոհերն են, իսկ ինք յաւիտենական զոհն է իր թրքութեան, որ ի խնդիր մուրացկանութեան, ի՛ր իսկ գաւկիին ոտքն ու թեւը կոտրել, ի՛ր իսկ որդին բլուրն ի վար փալտը-Քիլտիւր ղլորել կու տայ իրեն...

Ափսո՛ս...

Այսպիսիներուն պիտի մնային մեր հողերը, մեր դիւղերն ու աւանները...

Կամ՝

Ինչո՞ւ այսպիսիներուն, կեանքը այսպիսի ոգորմէլիութիւններով անցրեալ թշուառականներուն մնաց ստեղծագործ, աշխատասէր, կո՛ւս ժողովուրդի հայրենիք Հայաստանը:

Եթէ անպայման մեր երկրին վիճակուած էր ուրիշին պատկանելու, ուրիշին երկիրը դառնալու ճակատագիրը, դո՛նէ անիկա գրուած ըլլար այնպիսի՝ ձեւով մը, ունենար այնպիսի՝ քովանդակութիւն մը, որ այդ ուրիշը ուրիշ ազգ մը եղած ըլլար, թեւէ՛ աղղ, բացի թուրքէն, բացի այս թշուառականներէն, որոնց ներկայութիւնը մեր բացակայութեան աւելի մեծ տառապանք չի կրնար չպատճառել հայ հողի հողունն ու քարի սրտին...

Ի՛նչ կ'ըլլար...

Իր բնիկ ժողովուրդէն զրկուած Հայաստանին խնայուէ՛ր երեք չորրորդով. որդեսպան, չորս չորրորդով ցեղասպան, անցեալին թալանող, այժմ մուրացող այս անիծեալ ցեղին ընկալալը դառնալու զժբախտութիւնը...

Աւանէն մեկնելէ առաջ, հեռուէն, արազ անթացուպերով մեղի մօտեցաւ նսեւ բոլորովին անոտանի թշուառական մը. ըստ երեւոյթին, լսած էր ան, թէ ողորմող մը կը գտնուի սրճարանին դիմաց...

Անոտանին կեցաւ մեղմէ քանի մը քայլ անդին եւ հաւասարակշիւութիւնը պահելու համար, սկսաւ անօրինակօրէն երերալ անթացուպերուն վըրայ ու եղբրական ձայնով մը աղերսել.

— Պա՛մա տա պի՛ր տաւա՛ք (ինծի ալ ողորմութիւն մը...) Ալլաի սիրոյն... պի՛ր սատա՛ք... պէ՛նիմ հալըմ օնլարտա՛ն պէ՛ր...

Աստուած իմ, ճիշդ ու ճիշդ Մօփասանի Զամզը. նոյն գանգը, նոյն անոտանին, անթացուպերուն վրայ գանգերը նոյն խլեակը, միայն Փրանսէ-րէն խօսիլն ու պոռալը, անիծելն ու հայհոյելն էր պակաս...

Այն ալ թրքերէնով ամբողջացուց զի՛շ ետք. երբ ես Մօփասանով եւ

զանգու՛ղ տարուած, տալի՛ք սատա՛ֆա ուշացուցած՝ եղայ անզիտակցարար, ան չկարենալով երկար մնալ կամ հաւաստիալիւթիւնը զտհել անթացու պերուն վրայ, ինկաւ մայթին, եւ բարկութեամբ դալարուելով, հայհոյեց աշխարհին, Աստուծոյ, տնարդարութեան ու իր անբարեկամին։

— Պա՛մա տաւ անիք սատա՛ֆա...

Այս անգամ աւելի բուռն, սակայն զայրագին աղերսանքով։— Այի՛ր սատա՛ֆա...

Բանտորեն բռն ըսի, որ վերցնեն դայի ու զետեղեն անթացու պերուն վրայ։

Վերցուցին, զետեղեցին։

Իր անկալած ողորմութիւնն շատ աւելին գրի կուրծքի գրպանին մէջ ու երջանկութիւն մաղթելով, մտեմօրէն ժպտեցա՛յ իրեն, որովհետեւ սոսկում, նոզկանքս ու զինք եւ իր... տարբերակները տեսնել չուզելու հոգեւոր հաշտութեան տեսլի տեսած էին խղճահարութեան, սիրտ, գուրգուրանքի...

Ի վերջոյ մտայնութեան մը դոհերն են այս թշուառները, ժառանգականացած վատութեան մը սէրսէմ նոխազները, որոնք արժանի են ո՛չ միայն դուրսի, գուրգուրանքի, գորտի, այլեւ... մեծարանքի։

«Քրքր՞քք որն է. այս քառալան, ի պատիւ կատարակուած, երեք չորսորդ, երկու չորսորդ ու մէկ չորսորդ անհամար բնակիչներուն, պէտք է կոչել իրենց թշուառութեան եւ թշուառականութեան լաւագոյն արտայայտիչն անունով։ Մօփասան։

Աւան «Guy de Maupassant»

ԼԵ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹՈՒՐԻՔԵՐ

Յիշողութեան մէջ անջնջելի մնացած երկրորդ աւանը կը գտնուի Օլթիէն անդին, Չամլը Կէշիտ բարձունքներու փէշերուն, եւ կը կոչուի Օլթեր։ Այս աւանին մէջ, օլմազ, օլմազ բլլալու աստիճան տարօրինակ, տարօրինակութեան շափ զեղեցիկ, սակայն նոյնքան եւ աւելի դժբախտ ու դժբախտացնող իրողութիւն մը, առաջին իսկ վայրկեանին սկսաւ ուշադրութիւն դրուել, աւանին ներս, մեր ճամբուն վրայ, առաջին իսկ խանութին լատինաառ զովագողով։

«Nacari ve Demirciyi
Dayangun Hacetner ve Kerestener».
Այսինքն՝
Nacarlı ve Demirci
Dayanlı Haceti ve Keresteleri...

Աստուած իմ, ա՛ղբ իմ, հայրենի՛ք իմ, ուրկէ՞ որ... մասնիկային այս հայրենիք, Թուրքիոյ խորերը գտնուող այս խուլ աւանին մէջ, Keresteci Kerimի մը խանութին ճակտին...

Dayanlıն (դիմացկուն) գործիքներ, շինանիւթեր...

Աւանին հրապարակն ու շուկան պրպտելով տեսայ նաեւ dayanlıն այլ

դորձիքներու եւ այլ նիւթերու, անհրաժեշտութիւններու վերաբերեալ ղառնադատն գրութիւններ, ուր հայերէնին գոյութիւնը մասնակային ըլլալէ աւելի՝ մասնակի չափանիշ ունէր. դարձանքէս, յուզումէս մաս-մաս եղաւ սիրտու, երբ կարգացի գտնոնք, Օլուրի օլմագ, օլամա՛գ դոմագդներն ու գործատեղիի տնունները.

● «Հիֆլիթ Շէն — սուրճի կարանդի տէկիքմէներ».

● «Եւլէնի Պիշիւրիկն — էլախէներ, հէր գոյմտան քասէթներ, ամերիկեան գլխարկներ».

● «Արդար գլէք, զանազան օճառլար, քասար վի սոտա».

● ԲՐՈՒՏ ՀԱՍԱՆ — քըլմագ սահաններ, կարասլար վէ պտուկլար»

● «Տաքուկ պաքլաններ» ● «Տիշքաշան Պուհան» ● «Պաղ քագոգ» ● «Հէր տեսակ ճղարաններ» ● «Ճաշանէ» ● «Չայարան» ● «Չըլար» իշկիտուն...

Հազար տա վերջիններուն մէջ լսածներս...

Սոփորական խօսքեր, հասարակ խօսակցութիւններ, որոնցմէ կը պարզուի ոչ թէ մասնակային կամ մասնակի հայերէն մը, այլ մասամբ թրքերէն-նախառն հայերէն մը, սակայն հայերէն մը, հայերէնը, մեր մայրենի՛ն, որ իբրեւ... տեղական բարբառ կամ... թրքերէնի մէկ տարրերակ կը տեսնէ, այլեւս թրքացած, Թուրքիոյ խորքեր դարձած այս աւանին մէջ. կը տեսնէ, հակառակ այն դժբախտ իրողութեան, որ այլեւս հայեր չկան Հոս, թուրք են բոլորը, Հէքմէթ, Ճէփաէթ, Ճիհատ, Վէսատ, Վալի, Ալի, Հիւսի կոչուող թուրքեր, որոնք հայերէն կը խօսին, առանց սակայն գիտնալու կամ անդրադառնալու, թէ հայերէն կը խօսին. իբր թէ իրենց թրքերէնը այդպէս է, այսինքն՝ աշակէս, փողոցը լսածիս պէս.

— Բարեւ Ճիհատ, մէրհապա...

— Ասու բարին, Ճէմալ, ճասը՛լ ես... հա՛լ, քէ՛յֆ...

— Իշթէ գէշ-ազէկ կ'ապրեմ, շիւքիւր Աստուծոյ...

— Աստուած մենծ է...

— Փա՛սք Մարգարէին...

«Ճաշանէ»ի մէջ՝

— Լան Ալի, ո՞ւր է աս լիսքան, ճէլէ՛ր եփեր էք ասոր: Իշթէ լիսքան, ուղէ՛յ: Էվէլա պիր պաւաթ պաղ սու բեր: Իշթէ սու: Ասոր ալ հաւկիթլը էրիշթէ ուտենք. սոխ խոթ լէ բեր...

«Իշկիտան» մէջ՝

— Կէս պարտա՛ վտնայ րա՛քը... Եսիո՛, տախա որ-քա՞ն պէլէլէմ, ճանքի ուղեցինք... Քալտը՛ր գաւաթդ... Հէ՛յ կիտի... Կե-նա՛ցդ... Շէրէֆի՛դ... Կէս պարտա՛ տահա՞... Ալխարհին մա՛րը... Ապտո-նին քա՛ւրը... Տիւլէր Օլա՛ն... Չէ՛. օյնա՛ք Օլան... Օյունուհա հայրա՛մ Օլան... Պարպենք գաւաթլարը... Ետուտիք երգէ՛...

«Պիր Ժամանակ

Պու Եայլայը կէզմէլը,

Քալէմ ալըք,

Աղուորլարը Եազմալը»...

— Ես գտնում եմ ինձ, Ես գտնում եմ ինձ, Ես գտնում եմ ինձ... Ես գտնում եմ ինձ... Ես գտնում եմ ինձ...

Այսպիսով ուրեմն, մասամբ աւերուած հայերէն մը, սակայն հայերէն մը՝ աւերուած, թրջուած հայերու բոլորովին թուրք գաւազաններու շրթներուն...

Հայկական առումով՝ մեռած է հոգին, չի բարոյացրել սիրտը, մարմին է դեղատոնի ինքնազգացումները, «ոգու կրակը», բայց դեռ կը հնչէ լեզուն ու կը տեսնուի ի վերայ աւերակացի մէջ մեռելոց...

Ուր փնտռել այս կենդանութեան զազունները, ինչպէ՞ս լուծել, ինչպէ՞ս բացատրել առեղծոածային այս իրողութիւնը. եթէ լեզուն է հայր հայ պահողը, ինչո՞ւ չէ կրցած իր կենդանութեամբ կեանք տալ հայ հոգիին եւ զայն վառ պահել այս «մահացածներուն» մէջ. կամ անոնց մահէն ետք, ինչպէ՞ս կրցած է ինք ապրիլ, աղուոր բառերով ետալ ու երգի անցնիլ...

Վերջապէս՝

Հոգիի պարտութենէն ետք, ինչպէ՞ս յաղթական մնացած է լեզուն...

Ես գտնում եմ ինքն ինքն, ինչո՞ւ չէ յաղթանակած նաեւ հոգին... Ինչո՞ւ ճշգրտութեամբ չէ մնացած հաւատքը, ու ձգած, որ կարմիր հաթաղանձն ետք, ճերմակ, չէ՛, սե՛ւ ետթաղանձն ալ «ջարդէ» եւ ջարդածները վերածէ թրջախօս հայերու ճշգրիտ հակահիշիւն, հայաստանի թուրքերուն:

Նոյն... Ինքնանման մէջ, երբ գլուխս բաւական տաքցած է արդէն, քանի՞ քանի՞ անգամ մղուեցայ բռնել անոնցմէ, հայաստան թուրքերէն մէկուն օձիքէն, ցնցել զինք եւ ըսել իրեն, բարկանալ իրեն, բարկանալ բոլորին, թէ ինչո՞ւ հայերէն կը խօսին, քանի որ թրջացած են, ինչո՞ւ առանց հայերէնի չեն երգեր. հայ հոգիին բոլոր ստորոգիւյթներուն կոնակ դարձնելէ ետք, ո՞վ իրաւունք տուած է իրենց, որ առանց աղպային հազարդականութեան, սոսկ իբրեւ ուրտոյախաչական... Կանգնէ կամ զրոյցի միջոց գործածեն նոյն հոգիին ամէնէն նուիրական ստորոգիւյթներէն մէկը, լեզուն, հայերէնը, եւ զայն դաւանին... տեղական թրջերէն...

Ուղեցի այսպէս պոռալ, զայրանալ, թրջախօս հայերու դուրծածած բոլոր հայհայտները թափել հայաստան թուրքերու վրան, սակայն Նազըմը, Ուստա՛ Նազըմը ներսէս յանդիմանելով դիւ, թոյլ չթուաւ ինծի նման անխոհեմ քայլ մը առնելու «խենթութիւնը» գործել, այլ թելադրեց վերադառնալ էրզրում ու մահաւանդ դիտակցիլ, թէ ինչպէս կարմիր հաթաղանձի, նոյնպէս եւ սեւ հաթաղանձի զոհերը անմեղ են. մեղաւորը հաթաղանձ գործածողն է միշտ:

ԱՐՁԱՆԸ...

•

Կար չորցաւ, փշրուեցաւ ափիս մէջ: Ամաւորին գլուխ մըն էր արձա-
նը հիմա: Արեւ փնտռեցի՝ աչքերուն փայլ տալու համար: Զգտայ: Բառ
փնտռեցի՝ բերանը զծելու համար: Զգտայ: Այն առնեմ երգեցի:

Աչքերը մնացին խռոչներ: անտառ ռազմաւորեան մը յառած՝ անոնք
հետեւեցան երգերուս: Բերանը պահեց իր ուղիղ գիծը: Անտառներ արեւա-
մարտեմք մը կը պրկէր շրթանքը: Ուրախացայ: Առանձին չէի:

Շուրջս, ամէն մարդ երգ մը ունէր:

— Սրգէ՛ — ըսի արձանիս:

— Ինձի տուած երգերդ քերի են, — ըսաւ, — իսկ ես կ'ուզեմ երգել
աշխարհի բոլոր երգերը: Հիմա ձմեռ է: Ձմեռը երգ չունի, եւ քիտաքնեմ
ձմեռացած եմ ես: Հոն՝ քոչող պարիկներու մասին կը պատմուի, իսկ ես
հող կ'ուզեմ:

Ջարմացայ: Տխուր նախազգացում մը համակեց հոգիս: Շրթանքները
կոշակեցի իրենց ուղիղ գիծը: Մռնցան, շշուկուեցան: Թափում վախ մը
նստաւ սրտիս: Ձէի ուզեր, որ արձանը խօսի: Ատա՛ր համար ես բառ չտուի
իրեն: Մարդիկ խօսելէն մեռած են: Կ'ուզէի, որ ան չմեռնէր՝ արձանա՛նար:

— Կար, զոր գործածեցիր զիս շինելու համար՝ այդ հողէն էր, — ը-
սաւ, — ես իմ երկրի մարդոց պատկերը ունիմ: Տխուր չեմ: Կա՞ծ ես այդ
օրէնքին մասին, որ կ'արգիլէ տխրութիւնը: Մարդիկ խնդալէն կը մեռնին:
Այսուհանդերձ, ես կը սիրեմ տխուր դէմքերը, երբեմն կը կարօտեմ անոնց:
Քիչ առաջուան երգած երգելդ յուզեցին զիս, բայց չլացի: Յիշեցի օրէնքը
եւ չկրցայ լալ:

Յետոյ պատմեց կարօտ կտակող եւ կտակը աւարտելէն ետք մահ սպան-
նող ծերունիներու մասին:

— Նախանայրերս են անոնք, — ըսաւ, — չեն ճանչնար քեզ: Անոնք
բնաւ մանուկ չեն եղած: Զգուշացած են խաղալէ, չեն երգած: Լռած են միշտ
եւ աղօթած: Երբեմն աղօթած են բարձրաձայն եւ իրենց ձայնէն ոգեւորուած՝
պատարագ են մատուցած: Մի՛ հաւատար օրէնքներուն: Անոնք քչինչ արգիլել
չեն կրնար: Ես տխրել կ'ուզեմ, լա՛լ կ'ուզեմ: Արցունքի նման մեղմ մազուռ
անձրեւները շատ կը սիրեմ: Անոնք կը ծածկեն դէմքս, կ'իջնեն աչքերէս վար,
կը լեցուն կակորդիս մէջ ու կը գովացնեն զիս: Օր մը, անձրեւին տակ եր-
կար քաղցի: Փայտաւտ տուի արեւէն: Զուգեցի, որ ամ չորցնէ՛ մարմինս:
Վախցայ ճաթառելէ: Յետոյ լսեցայ ձիւնին մէջ, շունչովս տափեցի գայն,
հալեցաւ: Արեւը նսրէն երեւցաւ...

Յանկարծ սքափեցաւ:

— Քալէ՛, — ճչաց, — քալէ՛ տանիմ քեզ արեւուն: Ըսեմ, որ վերա-
կերտեցիր զիս, դէմքս: Ըսեմ, որ աչքերս կը տեսնեն ալ... բայց... երբեմն
մոռցայ, որ ք'ի եմ ես... ո՛վ եմ ես...:

Կար փշրուեցաւ ափիս մէջ: Անձեւ ծոգակոյտ մը, որ մարդկային
մարմնի կերպարանք ունէր, տարածուեցաւ ոտներու տակ: Յետոյ անձեւ
եկաւ: Հողակոյտը վերածուեցաւ տիպի: Կեցայ: Գրկեցի տիպը: Հողին
չափ եին ծամամակներէ ի վեր ինձի հետեւող ձայնին արձագանգէն խլացայ
ու մնացի այդտեղ:

ՔՆԱՐ ՀԻՆԱՆՇԵԱՆ



Իմացական Հարժուժ



Մ Ա Հ՝

Ն. ՊԵՏԻԿՈՍԵԱՆՆԻ

Սկսած մեր Դին, Փարիզի հիանալի ուղևորներն մեզին մէջ, յետ երկարատեւ հիւանդութեան, իր մահկանացուն կեանք Սփիւռքի ամենէն բազմակողմանի եւ նոյն աստի ամենէն բազմաբեղուն զբաղեցնողն մէկը, Նշան Պէշկիթաշեան:

Մնած էր Պոլիս, ուրկէ՛, Քեմալական շարժումի նախորդին, ուրիշներու պէս ինք հաւանքաւ Փարիզ, ուր ապրեցաւ եւ ստեղծագործեց ուղիղ հէտ դար, ի վերուստ իրեն ընծայուած անսոս յետիւտութեան լաշն, երբեմն ցաւազին, երբեմն զուարթ յնաւորութեամբ կազմելով շնորհալատ զբաղեցնող թիւն մը, — արժաւ ու լափածոյ քանոստեղծութիւններ, քնարապէսներ, երգիծաւէտներ, Քատերգութիւններ, ուսումնասիրութիւններ, նշմարներ...

Մեր իրականութեան ու նաեւ հետուներէն եկած եւ մեր առօրեային խառնուած մեծադործութիւններուն մէջ ու ծառ ապրող զբաղէա մըն էր Նշան Պէշկիթաշեան, դիտող, պրոֆուզ, կարկառող, աստած լոյսերը անմաքուրդ սիրով փառաբանելու եւ կուսնած թերուութիւնները անվերապաւ կրօնաբանութեամբ խառնելու բարեմասնութիւններով ճնշալ տաղանդ մը, որ արուեստի բարձրացած իր յեղուով, երկնելու իր կիրքով եւ արդիւնաւորման մասնուն թափով դարձաւ Սփիւռքի պայմանները հերքող երեսոյթ մը:

Հայ գրականութեան վրայ բնու լոյս մը՝ լոյսի քաղաքէն, ուր, լուսադրբիւրը ինքը՝ Նշան Պէշկիթաշեան, լուսաւոր օրեր երբեք չապրեցաւ, հայաժողովուրդի միտ, շրջապատուեցաւ թունաւոր թշնամիներով, իր կեանքի վերջին երկու տասնամեակները մահաւանդ անցուց քոյրորդին ու քոյրէն լքուած, մարմինը յուսալ ցաւերը կրելով մէն միւնակ, ինչպէս ինք կ'ըսէր՝ պատեն երեսի, եւ այդպէս՝ մինչեւ լուին վերջին:

Նոյն բախտը քեզիքացաւ իրեն նաեւ հոգեվարքի մամբրան, մահուան վաղորդաշէնի, մարմինը զաղաղին մէջ գտնուած միջոցին: Մարդիկ շարունակեցին իրենց թշնամական վերաբերումը կեանքին հետ ամէն հաշի գոցող գոցուող զերեպմանին առջեւ, զինք հոգին յանձնելու վայրկեանին՝ անգամ, անտէր մահելի մը հակառակորդ օտանանելով իրեն, որ քանի մը մարդու հասակին հասնող հասարակ զիգած էր հայ դպրութեան մէջ:

Երազելնքի յախող թիւով՝ ընթերցողին պիտի ներկայացնենք հիանալի էջեր քաղանդաւոր Պէշկիթաշեանի մէկ անտիպ ու երկարաւունք երկը, ուր կ'երևի իր պայծառ զէմք եւ հակադրութեան օրէնքով կրկին անգամ կը զգացաւ հայ զբաղէա մը յարգելի չղիացող ուրուականներուն անորակելի ապերախութիւնը:

Լ. ՄԿՐՏՋԵԱՆ

Մ Ա Ս Ն Ա Կ Ի Ն ԵՒ Ը Ն Դ Հ Ա Ն Ր Ա Կ Ա Ն Ը



Այս «մասնակի» եւ «ընդհանրական» արտայայտութիւններին կողք – կողքի հանդիպելիս, մտաւոր մշակոյթի պատմութեան իրազեկ ընթերցողը թերեւս յիշի միջնադարեան այն ժամանակները, երբ «սխալաստիկական» դրոյթներ մշակուելու ընթացքում եւ այդ շրջանակում բուռն ու տեւական բանավէճեր էին տեղի ունենում «նոմինալիզմի» ու «լիթերալիզմի» միջեւ։ Այսպէս, «նոմինալիստները» ելակէտ էին ընդունում առանձին առարկաները եւ նրանց ընտրող յատկութիւնները ու ապա միայն ըստ այնմ էլ բացատրում ընդհանուր հասկացողութիւնները, իսկ «լիթերալիստները», հակառակ այդ բառի այսօրուայ ընթացիկ իմաստին, պնդում էին, թէ «ունիվերսալիստները», այսինքն՝ ընդհանուր հասկացողութիւնները, ինքնին արդէն իրական գոյութիւն ունեն եւ նախորդում են առանձին իրերի գոյութեանը։ Փխտոփայական կարգի այդ զերբաւորումները իրենց արտայայտութիւնն են գտնի նաեւ հայ իրականութեան մէջ, ժամանակի հայ անուանի մտածողների երկերում։

Տուեալ դէպքում, անշուշտ, ինձ հետաքրքրողը ոչ միջնադարեան նշանաւոր վէճերն են եւ ոչ էլ առհասարակ զուտ աեռական ընդթ կրող դատողութիւնները՝ մասնաւորի ու ընդհանրականի փոխարարութիւնների վերաբերում։ Ինձ զբաղեցնում են մարդու եւ մարդկային հասարակութեան կեանքում դրսևեւորուող այն տնթիջական երեւոյթները, որոնք առնչւում են մասնաւորի ու ընդհանրականի վերաբերում դոյութիւն ունեցող ըմբռնումներին եւ կամ այդ շրջանակում են համեմատւում ու պատհտարանւում։ Բայց միջնադարի օրինակը յիշատակելը ըստ էութեան ոչառահական չէ, քանի որ լայն առումով մասնաւորի եւ լայն առումով ընդհանրականի «վէճը» յատուկ չէ միայն այս կամ այն ժամանակաշրջանին եւ ոչ էլ հասարակական գոտու։ Այնտեղ, որտեղ կայ եւ հասարակութիւն, որտեղ կան կեանքի թանձրացեալ արտայայտութիւններ եւ այդ արտայայտութիւնները համազրելու ու որոշ կաղապարի մէջ դնելու ընդհանուր միտումներ, այնտեղ անխուստիելի է վէճը, մրցումը, պայքարը

կողմերի միջև, մասնաւոր նախատեղութիւնները յանուն ընդհանրականի միաւորելու կամ բացարձակացնելու ուղղութեամբ: Ուստի՝ ժամանակակից աշխարհի մէջ նկատուող իրերամերժ տրամադրութիւններն էլ պէտք է համարել ոչ թէ պատմութիւնից շեղուող արտաբնական բնականութիւն, այլ այդ պատմութեան ընթացքի մի իւրայատուկ փուլի անմիջական արտայայտութիւններ:

Այստեղ «մասնակի» եւ «մասնաւոր» բառերը դարձ են անուամ իրենց վերացականութեամբ ու փոխարինող իմաստով: Իրականում նկատի է առնուած մարդկային անհատը՝ իր զոյրութեան հետ կապուած եւ այդ գոյութիւնը ապահովող հանգամանքներով: Եւ քանի որ անհատը հասարակութեան հիմնատարը ընդհանուր աւարտուն ու ինքնավար գործունէութեամբ, թուում է, թէ ընդհանրականը պէտք է հանդիսանայ իւրաքանչիւր անհատի մէջ պարունակուող նման եւ ընդհանուր տրամագործութիւններէ ու ձգտումներէ հանդիսանայ իւրաքանչիւր անհատի մէջ պարունակուող նման եւ ընդհանրականի ուղին իր բոլոր աստիճաններով ճշգրտում, ընտրում եւ իւրացում է անհատների պատահականութեան կարգով, երբ ընդհանրականը ոչ թէ հերքում կամ ճշգրտում է տնտեսական գոյութիւնը, այլ օրգանապէս յենում է նրա վրայ եւ բխում նրանից, համադրում ինչ-որ ընդհանուր է եւ անխախտ թողնում այն, ինչ-որ է բնէ անձեռնմխելի է, մշտապէս անհատական եւ գոյութեան աղբիւր ու կենսական արտայայտութիւն: Ասկայն իրականում, շատ յաճախ պատահում է այնպէս, որ մարդկային ուղի խմբեր այս կամ այն ճանապարհով յաջողեցնում են իրենց սեփական պատկերացումները հռչակել ընդհանրականի անտարկելի եւ այդ հաշուով էլ անխախտ իւրաքանչիւրից պահանջել անմիջական հնազանդութիւն եւ ծառայութիւն իր «ընդհանուր գործին»: Այդ դէպքում՝ «ընդհանուր» մաքսանենդօրէն փոխարինում է ամէն ինչ հորթեցնող

եղակի «ամբողջով» ու ապրող հասարակութիւնը ներկայացնում որպէս միաձուլ ու կազապարտած զանգուած:

Դրան հակառակ, պատահում է եւ այնպէս, որ դարձեալ մարդկային որոշ խմբեր այս կամ այն ճանապարհով յաջողեցնում են իրենց համար ապահովութեան միջնաբերդեր ստեղծել ու շուրջը պարիսպներ կառուցել, անխոցելի դառնալու նպատակով, դրանով իսկ մեկուսանալով ու հակադրուելով մարդկային համակեցութեան ընդհանրական ձգտումներին, բոլորի գոյութեան համար ըստ հնարաւորին տանելի պայմաններ երաշխաւորելու ուղղութեամբ կատարուող աշխատանքներին: Նրանց գործողութիւնների հետեւանքով անհատականը վերջին հաշուով դառնում է նման էականերից սահմանադատուելու եւ ընդհանուրին հակադրուելու խորհրդանիշ, ուստի եւ առաջ բերում հասարակական անխուսափելի հակադրեցութիւն: Եւ այս երկու՝ ամբողջի կամ խմբային ուժով անհատների ճանապարհը փակելու միտումների գոյութիւնը, իրագործուելու միջոցների մշտական որոնումները հանդիսանում են այլեւայլ հասարակական բախումների աղբիւր ու, քանի որ ծառայելու թիւններն իրենց նշանակութեամբ յաճախ են միանում, դրանք հասարակապէս բացասաբար են ազդում հասարակական կենտրոնակ հաւասարակը՝ ունեցնում հասնելու ջանքերի վրայ:

Ընդհանուր սկզբունքներ մշակելու եւ գործադրելու պատրուակով ամբողջական իշխանութիւն հաստատուելու եւ այդպիսով ապրող ու մտածող անհատների ինքնարուի գործունէութիւնը յիմ կամ կիսովին անդամալուծելու իրողութիւնը իր բարձրագոյն արտայայտում թիւնն է գտել այն վարչակարգերի պայմաններում, որոնք տեսականօրէն ու գործնականօրէն հակադրուած են ժողովրդավարական համակարգերին եւ կոչուում ին ամբողջատիրական (տատալիտար): Ամբողջատիրութեան մասին մարդիկ ըստ երեւոյթին գաղափար ունենալիս բոլոր երկրներում, նոյնիսկ

կոմունիստական ու խորհրդային կոշտող աշխարհում: Միայն թէ՛ այդ երեսույթը տարբեր ձևով է բնութագրում սարբեր զօտիներում: Ժողովրդավարական Արեւմուտքում՝ ամբողջատիրական են համարում Առաջին Աշխարհամարտից յետոյ յաջորդաբար հաստատուած բռնակցի, Ֆաշիզմի եւ նացիստական իշխանութիւնները, իրենց տարատեսակ կոթիւններով կամ պարզ տրանսակցիւնով: Միջին եւ կոմունիստ հեղինակների զրէի տակ միայն Ֆաշիզմն են ու նացիստներն են եղել ամբողջատիրական եւ, ի հարկէ, բոլոր նրանք, ովքեր երբեւէ համարձակուել են քննադատել կոմունիստներին: Նրանց ասելով, կոմունիստները ոչ մի կապ չունեն ամբողջատիրութեան հետ, այլ, բնականաբան, նրա անդիմադ հակառակորդներն են:

Բայց իմացողները ամենայն հաւանորոշութեամբ գիտեն, որ 1937 թուի աշնանը Ռուսաստանում հռչակուած կոմունիստական իշխանութիւնը ոչ միայն ի սկզբանէ ամբողջատիրական է, այլեւ իր տեսակին մէջ առաջինը, որ ինքն՝ այն ժամանակ ստեղծուեց ոչ թէ զախարհի առաջին սոցիալիստական պետութիւնը, ինչպէս որ պնդում է կոմունիստական անմրցակից քարոզչութիւնը, այլ զառաջին ամբողջատիրական պետութիւնը: Հետագայում ձեւաորոշած Ֆաշիզմն ու նացիստական իշխանութիւնները պարզ հետեւանք էին ու հակադրուեցութիւն, կոպիտ ուժին նոյնպիսի ուժ հակադրելու իւրաքանչիւր միջոցներով: Աւելին. Բ. Աշխարհամարտից յետոյ այդ հետեւանքները միանգամից չքայան, բայց մնաց բուն նախապատճառն ու արդի աշխարհի հաշուի առնուելիք գրեթէ միակ ամբողջատիրական համակարգը:

Ճիշդ է, որ ամբողջատիրութիւնը արտայայտութիւնը իր յարակից անանցումներով եւ ուղղակի իմաստով երբեք տեղ չի գտել կոմունիստական ծրագրային փաստաթղթերում եւ ընթացիկ գործածութեան բառարաններում: Յայտնի է, որ այդ արտայայտութիւնը քաղաքական ու հասարակագիտական գրականու-

թեան մէջ շրջանառութեան մէջ է գրուել 1930ական թուականներին՝ զերմանացի զօրավար Լիւդենգորֆի «Տասնալ պատերազմ» աշխատութեան հրատարակումից յետոյ: Բայց այս զեղուարտական պարագան ոչինչ չի նշանակում: Լենինեան ուսմունքի ծագումնաբանութիւնը, նրա ամբողջ տարուեցութիւնը եւ, մա՛նաւանդ, զործարարութիւնը այլ բան չեն վկայում, քան ամբողջատիրական վարչակարգի փառաբանութիւն, օրինականացում եւ նոյնիսկ տատանածացում: Այստեղ արձանագրում է միայն պատմական իրողութիւնը, իսկ թէ ինչո՞ւ երեւան եկաւ այդպիսի մի վարչակարգ ու տարէցատար ամրացաւ՝ դա տարբեր հարց է:

Ամբողջատիրութեան երեսույթի ուսումնասիրութեամբ ժողովրդավարական երկրներում շատ հասարակագիտներ են դրադուել եւ ջանապէս պարզելու, թէ ի՞նչն է նախադրեաներ ստեղծում այդպիսի վարչակարգեր երեւան զայլու համար, ի՞նչն է հանդիսանում նրանց սնող ու կանգուն պահող ուժը, ինչի մէջ եւ ինչպէ՞ս է արտայայտուած նրանց բնորոշ բովանդակութիւնը: Եւ քանի որ կայ ուսումնասիրութիւն, կայ նաեւ իրողութիւններ ժանրակրկիտ արձանագրում, դատակարարում, համեմատում, քննարկում եւ գնահատում: Հետեւապէս, ամբողջատիրութիւնը հասկանալու համար բաւական չէ միայն նրա սկզբունքային մեթոմը, նրա աղէտալի հետեւանքների գիտակցութիւնը, ինչպէ՞ս եւ ոչինչ չի ասում կոմունիստական աղբիւրներից բխող ամբողջատիրական զրոգեգներին: Նոյնպիսի փոխադարձումը: Անվիճելի համարելով այն իրողութիւնը, որ Ռուսաստանում եւ նրա կողմից գրաւուած երկրներում գոյութիւն ունեցող կոմունիստական իշխանութիւնը ստեղծ գրելու ամբողջատիրական է, աւելորդ չէ տեղեակ լինել եւ նրա առանձնապատկութիւններին, գէթ դրանց մէջ ամէնից շատ տեղի բնկնողներին:

Տարիներ առաջ, Ֆրանսիայում լոյս տեսաւ յայտնի հասարակագէտ Ռէմոն

Արոնի շփոթվող արարածի մեջ ամբողջատիվությունն զերբ, որի մէջ արտա-յայտուած որոշ գործընթացներ, առ ի հետա-քրքրութիւն, արժէ ամփոփել այստեղ: Արոնը իր շարադրանքի ընթացքում գրա-նում է, որ քաղաքական որեւէ համա-կարգի վերաբերութեան ժամանակ միշտ հարկուած է նկատի առնել կառավարող շրջանների գաղափարաստեղծութեան ու նրանց գործունէութեան յարաբերակցու-թիւնը: Այդ տեսակէտից ուշագրաւ է, որ, ի տարբերութիւն ամբողջատիւրու-թեան՝ քաղաքացիների ազատութիւնը բացէ ի բաց մերժող եւ մտղկայնու-թեան պոստիւմի խորթ այլ ձեւերի, կոմու-նիզմը խօսքով հանդէս է դալիս որպէս ժողովրդավարութեան ու յատկապէս թեան պաշտպան, ջանալով իշխելու ամ-բողջատիւրական իր մեթոդներին՝ միա-հանձնութեան, ահաբեկչութեան եւ ա-պօրինութեան մեթոդներին հազնեւ ժո-ղովրդավարական ձեւեր: Դրա պերճա-խօս օրինակներն են խորհրդային սահ-մանադրութիւնները եւ պարբերական ընտրութիւնները, որոնք գաղափարա-ստութեան ու իրականութեան հակասու-թեան ցայտուն վկաներ են:

Արոնի կարծիքով, այդ ժողովրդա-վարական բեմադրութիւնը հարկուած են խորհրդային իշխանութիւններին՝ արտա-սահմանում այն տպաւորութիւնն ստեղ-ծելու համար, թէ իրը կոմունիստական երկրում քաղաքացիները վայելում են քաղաքական ազատութիւն եւ ջերմօրէն պաշտպանում զիրենց կառավարութեանն ու կուսակցութեանը: Բացի այդ, ասում է Արոնը, կառավարութեան համար ցան-կալի է, որ արտասահմանում ապրողնե-րը, առանց հասկանալու խորհրդային ամբողջատիւրութեան էութիւնը, տար-բերութիւն գնեն կառավարութեան եւ կուսակցութեան միջեւ, քանի որ առանց այդ տարբերութեան, օրինակ, Խորհրդ-ային Միութեան արտաքին քաղաքակա-նութիւնը վարկից կը դրկուի, որովհե-տեւ կուսակցութիւնը չի հրաժարուել համաշխարհային յեղափոխութեան ձգ-տումից: Խորհրդային պետութիւնը տե-

սականօրէն բաժանուած է կուսակցու-թիւնից, որպէսզի ուրիշ կառավարու-թիւնների աշխուժ գաղափարական ծա-ւալման մարմին չհամարուի, ինչ որ կու-սակցական դիւաւոր նպատակներից մէկն է:

Ի հարկէ, ասում է Արոնը, ժողո-վրդավարական արտաքին բեմադրու-թիւն ու ծէսերին դիմելը պարզ պատեհա-պաշտութեան հետեւանք չէ կոմունիստ-ների մօտ, այլ վերջիններիս համար բը-նորոշ է գաղափարական մոլեռանդու-թեան եւ ընթացիկ քաղաքականութեան մէջ ճկուն գործելակերպ մշակելու խառ-նուրդը: Նրանք յայտօրէն օդադործում են միակուսակցական կարգը, երբ քա-ղաքական մենաշնորհ վայելող տիրող կուսակցութիւնը կարող է իր գաղափա-րաստութիւնը պարտադրել բոլորին: Հիմնականում լենինեան դրոյթների վրայ հիմնուած խորհրդային ամբողջա-տիրութիւնը իր տեսական ակունքներով հասնում է Մարքսի հաշտեցման իդէո-լոգիային, բայց մեզ համար դա այժմ էական նշանակութիւն չունի, քանի որ յաջորդա-կան այնքան նահանջներ ու յաւելումներ, գոտեղծարարական ներդրումներ են ե-ղել, որ պարզապէս անկարելի է որոշել, թէ յատկապէս ի՞նչն ինչի հետեւանք է: Տեսութեան ճակատագիրը պէտք է ջըն-նութեան առնել տեսական մակարդա-կով, իսկ իրականութեան դրուստում-ները բացատրելի են առաւելապէս ան-միջական դրդապատճառներով ու հետե-ւանքներով: Գաղափար չէ, որ տեսական ձեւակերպումները երբեմն քող են ծա-ռայում՝ բոլորովին հակադիր իրողու-թիւններ ծածկելու համար:

Այդուհանդերձ, ամէնքին յայտնի է, որ Մարքսը դալիք «պրոլետարիատի դիկտատուրան» պատկերացրել է որպէս ժամանակաւոր, անցողիկ մի վարչաձեւ, քանի որ պետութիւնն ինքնին նրա կող-մից համարուել է զուտ դասակարգային տիրապետութեան ու շահագործման գոր-ծիք: Մինչդեռ լենինը զգալիօրէն ձեւա-փոխել է Մարքսի տեսակէտները՝ մեծա-ցնելով կուսակցութեան ու նրա առաջ-

նորդները դերը եւ ինչքեւ ըստ աշխատանքի բանուորների դերը այսպէս կոչւած «պրոլետարիատի գիտատարայի» օրօք: Մարքսը համոզուած կերպով խօսում էր «պրոլետարիան մահացածան» մասին, իսկ լենինին հետեւորդները անընդհատ ամրացրիւ ու ամրացնում են այն, թէկուզեւ ներկայումս «համաժողովրդապետական» պիտակով: Մարքսը եւ նրա համախոհները իրենց անձնական տեսակէտներն ունէին մշակոյթի, գրականութեան եւ արուեստի այլեւայլ հարցերի նկատմամբ, առանց մտածելու, թէ դրանք ինչելու են գալիք հասարակութեան համար պարտադիր օրէնքներ, մինչդեռ այժմ խորհրդային ամբողջատիրութեան պայմաններում կուսակցական վերնախաւն է պատգամներ ցրում եւ վճռում մշակոյթի բախտը՝ իր «սոցիալիստական ուղիղմով», պարբերական վարչական միջամտութիւններով ու ստատուով եւ այլեւայլ պատժամիջոցներով: Խորհրդային ամբողջատիրութեան շօշափուկները հասնում են մինչեւ անհատ մարդկանց ասիւրիաձեւի ու մտածելակերպի խորքերը, այնտեղ եւս հսկողութիւն սահմանելու եւ «ուղղութիւն ասարու» յաւակնութեամբ:

Ահա՛ եւ ամբողջական ամբողջատիրութիւն: Հասարակութեան մէկ մասը իշխում է միւսի, այն էլ ջախջախիչ մեծամասնութեան վրայ, ընդհանուր ձեռնարկների, զգացումների ու շահերի պաշտպանութեան քողի տակ ամբողջական միջոցներով մամուլում հասարակութեան հիմնատարը հանդիսացող անհատ մարդկանց ինքնուրոյնութիւնը եւ ստեղծելու ազատութիւնը: Եւ քանի որ անհատ մարդիկ ընդհանրապէս բնութիւնից օժտուած են աւելի կամ պակաս ցայտուն ինքնութեամբ, սեփական զգայարաններով եւ արհեստական սահմաններ չճանաչելու ուղով, — ապա նրանց եւ ամբողջատիրական մեքենայի միջեւ հակառակութիւնն ու անհաշտութիւնը անխուսափելի է դառնում: Անհատ մարդիկ պաշարում են իրենց արամադրութեան տակ զտնուող ինքնաշէն ու սահմանա-

փակ միջոցներով, մինչդեռ ամբողջատիրական պետութեան համար համառաւած ահարեկչութիւնն է հանդիսանում ամէնից անհրաժեշտ տարրը: Հրապարակային կամ ծածուկ ահարեկչութիւնը բոլոր տեսակի բռնատիրութիւնների զէնքն է եղել միշտ, իսկ առաւել եւս ժամանակակից ամբողջատիրական պետութեան: Տարուայ բոլոր եղանակներին եւ օրուայ բոլոր ժամերին վախ ու սարսափ տարածել, ահարեկել ամէնքին ու լարուած պահել միջոցաւոր, — ահա՛ ամբողջատիրութեան գործելակերպը: Ինչպէս որ ամբողջատիրական մարշալարդերը երբեք չեն հոստատուում խաղաղ ճանապարհով, այնպէս էլ նրանք չեն պահուում մարդկային եւ քաղաքացիական ազատութիւնն ու իրաւունքները յարգելու միջոցով:

Քիչ առաջ յիշատակուեց Ռէմոն Արոնի «Փռնովաղափարութիւն եւ ամբողջատիրութիւն» գիրքը, ինչպէս եւ նրա մի քանի էլտիկտային գրոյթ: Արոնի տրամադրութեան տակ զտնուող փաստական տուեալները, ի հարկէ չայսնին են ո՛չ միայն նրան, այլեւ շատերին, ուստի՝ նրա եղբայրացութիւնները միայն իրենց չեն, այլ բխում են իրականութիւնից եւ հիմնականում բնորոշ են ժողովրդապետութեան եւ նրա հակառակայ ամբողջատիրութեան ուսումնասիրութեամբ զբաղուող շատ ու շատ հետազոտողների համար: Այստեղ Արոնի գիրքը յիշում է իբրեւ մի նմոյշ, որտեղ ամբողջատիրութեան երեւոյթը քննութեան է տնւում մանրացնին եւ բոլոր կողմերից:

Ամբողջատիրութիւնը ներկայանում է տարբեր երեսներով եւ տարբեր ուժով, բայց բոլոր դէպքերում էլ հանդիսանում անհատական սկզբունքի անտեսում եւ ընդհանրականի այլասերում: Ի՞նչ նրա տեսակները տարբերուում են զազափարախօսութեամբ, ապա առնուադն նման են քաղաքական կառուցուածքով: Կոմունիստներին մօտ, օրինակ, արտաքուստ չի անհետանում նոյնիսկ ժողովրդավարական ճամարտակցութիւնը, ինչ որ վար-

մանավորված միանշանակ է բունատերական իրականություն, պետություն տնտեսական իշխանություն, բնակչության քաղաքացիական իրաւունքների փաստական բացակայութեան, դարձագրււող քաղաքական եւ բարոյական անարեւելիութեան հետ: Միակ կուսակցութեան մենաշնորհ, իր հանրապետադիր ու «անխախտ» զաղափարութեամբ, հարկադրանքի ու համոզման միջոցների մենաշնորհ, եւայլն, — ահա՛ «այնպէս» ամենադժոկատական կարգի» պատկերը:

Լենինի հիմնած բոլշեւիկեան կուսակցութիւնը իր տեսական ու կազմակերպական առանձնատկութիւններով, որդէն կրում էր արդի կոմունիստական, «համաժողովրդական» ամբողջատիրութեան կական տարբերը: «Բանուոր դասակարգի առաջնորդ» հռչակուած Լենինը իրականում վստահութիւն չունէր այդ դասակարգի յեղափոխական տրամադրութիւնների նկատմամբ, ուղղակի փոխենում էր նրա՝ արհեստակցական միութիւններին ու ժողովրդավարական դանապան կազմակերպութիւններին տարբարութիւն կապուելուց, ուստի՝ սոյնպիսի կուսակցութեամբ առաջ քաշեց նրա մէջ ամէն զեւով յեղափոխական ոգի հրահրող անձանց հաւաքադրելու ծրագիրը: Յեղափոխութիւն տեղի ունենալուց յետոյ նրա հետեւորդները շարունակեցին չվստահել ամբողջ ժողովրդին հիշող նոյն ձեւով եւ անհատ մարդկանց ու ժողովուրդների բախտի տնօրէնութիւնը պահել իշխանաւորների ձեռքում, գանազան լիազօրութիւններ վերաբաշխելով իրենց իրենց:

Սկզբից եւեթ ըստ էութեան մերժելով ժողովրդավարութեան սկզբունքները, կոմունիստները ստեղծեցին բունատիրութեան աւելի զարդացած, առաջնեւում ու մի տեղ զոյնութիւն չունեցած մի ձեւ՝ ամբողջատիրութիւնը: Դա ամբողջական, համընդհանուր եւ ամէն տեղ թափանցող բունատիրութիւն է, որը չի սահմանափակուած քաղաքացիների քաղաքական ազատութեան ճնշումով, այլ

ձգտում է իր վերահսկողութեանը ենթարկել նրանց կեանքի բոլոր բնագաւառները՝ տնտեսական, աղպային, նոյնիսկ բնատնեկոն, իսկ զլիաւորապէս մըշակութային ու զաղափարական: Այդ վարչակարգի օրօք ըստ էութեան չկան իրաւաւոր քաղաքացիներ, այլ կան միայն հպատակներ, որոնք ապրում են իշխանութեան օղորմածութեամբ թոյլատրուած սահմաններում, լիակատար կախման մէջ:

Այդ բոլորը տեսնելուց յետոյ մի պահ թոււմ է, թէ դարերի ընթացքում դուր է եղել ու անցել մարդկային յաջորդական սերունդները պայքարը, որպէսզի ամէն զեւով աղատուեն անհատական կախումից, կոմսակցանութիւններից եւ ոտնոյնին իրաւական հասարակարգ ու դառնան լիարժէք քաղաքացիներ: Բայց պատմութիւնից յայտնի է, որ ղեւուս 11-12րդ դարերում արեւմտեան քրիստոնէական աշխարհում այլեւայլ ուղիներ են ուղենել, որպէսզի իրական ու իրաւական նախադրեալներ ստեղծուեն՝ մարդկային անհատի հիմնական իրաւունքների հանաքման եւ պաշտպանութեան համար: Վաղերում ու համալսարաններում եւ նոյնիսկ եկեղեցական ու պալատական շրջաններում դառուել են որոշ թուով լուսամիտ մարդիկ, որոնք իրենց խօսքով ու գործով նախապատրաստել են հետագայ դարերի առաւել ծաւալուն մարդկայնական շարժումները, որպէսզի հասարակութեան մէջ շանտեսուեն մարդկային թանձրացեալ անհատները եւ դո՛ւ իդառնան «ստատուծային կամքի» անուկով կամ այլ պատրուակներով հրապարակ եկող այլեւայլ յաղթականներին: Եւ այժմ դիտենք, որ այդ պայքարները եթէ իդէալական տրդիւնքներ չեն տուել, ապա, յամենայնդէպ, բոլորովին ապարդին չեն անցել: Արեւմտեան ժողովրդավարութիւնը, իր թերութիւններով ու վէրքերով հանդերձ, ներկայումս գոնէ սկզբունքօրէն ազատ է թողնում անհատ մարդուն եւ որպէս կանխակալ կաղապար ու վարդապետութիւն չի պարտադրում ոեւէ մէկին: Իսկ դա այն անհրա-

ժեշտ նուազագույնն է, որի կարիքն ունի իւրաքանչիւր խելահաս անհատ եւ որը նախադրեալ է հանդիսանում կենսունակ հասարակութեան մէջ օր աւուր ծագող խնդիրները առաւել նպատակաշարժաբութեամբ լուծելու համար:

Մասնակիւն, մասնաւորը կենսական միաւոր հանդիսացող մարդ անհատն է: Նա է արժէքների շարահիւլը, թէկուզ եւ յարարերական, արժէքներ արտադրողն ու սպառողը: Նա է բարիքներ վայելողը եւ շարիքներից տառապողը: Նա է իր արարքների պատասխանատուն եւ նըրանց հետեւանքները կրողը: Մի խօսքով՝ մարդն է այն թանձրացեալ գոյը, որը ի վիճակի է իր կարողութիւններէ չըջանալու միաժամանակ ստեղծել եւ քանդել: Ընդհանրական պատկերացումները եւ ձգտումները եւս ապրող մարդուց են բըխում, նրա տեսողաւոր ընդլայնելու եւ մեծ իրադրութումներ հետապնդելու համար: Հետեւապէս, այդ պատկերացումները եւ ձգտումների բնոյթը պէտք է համապատասխան լինի ակունքներին: Այն ակունքներին, որոնցից բխում են: Սա նշանակում է, որ չպէտք է լինեն մենաշնորհաւ պատկերացումներ եւ ձգտումներ, մէկից բխած եւ միւսներին պարտադրուած: Գաղափարական անկաշկանդ ինքնահոսք բոլոր գէպքերում անպայման անխիստութիւն չէ, ոչ էլ նրա նախադրեալ, իսկ ամբողջատիրական իշխանութիւնը, իր հերթին, անպայման գողափարական միառնութիւն ու համախոհութեան նշան չէ: Բաղմաթիւ են մարդկային կացութիւնները եւ զաղափարական երանդները: Ըստ անհատների, խմբերի, հոսանքների եւ հասարակութիւնների: Կարելի է, ի հարկէ, անտեղեակ ձեւացնել այդ ամէնը, կափարիչ դր-

նել բոլոր բերանների վրայ, բայց անկարելի է վերացնել այն, ինչ որ վերացման ենթակայ չէ եւ անրոյհատ նորոգողը բնատուր հարստութիւն է, հոսուն աղբիւր:

Ընդհանրական որոնողը արժէքների փոխարէն ամբողջական ու միաժող հեղինակութեան պաշտամունք արժատաւորելը հակասում է մարդկային ինքնավար անհատի հիմնական հակումներին ու պահանջմունքներին: Բռնութեան պաշտամունք արժատաւորողները եւս, անշուշտ, մարդկային կերպարանք ունեն եւ մարդ անունն են կրում, երբեմն էլ թեւրեւս ուրիշների համար անկեղծօրէն զրաւազոյն վիճակը երազում ու հետապնդում: Բայց նրանք բոտ էութեան առաջնորդում են հասարակ պատրանքներով, ցերեպահաւորում իրենց խելքը, ուժերն ու հետաւորութիւնները, միաժամանակ անտեսում ուրիշների մէջ թաքնուած մարդկային իսկապէս ստեղծագործ ու առատաբերութիւնները, իրենք իրենց գոյութիւնը բացարձակացնում եւ պահանջում, որ ամբողջ հասարակութիւնը նոյն բանը մտածի եւ ինքն իրեն կատարեալ համարելով ամբողջութեան դատապարտուի: Նրանք շատ գէպքերում յարմար հող են գտնում իրենց գործունէութեան համար, թշուառութեան ու յետամնացութեան սերմեր ցանում իրենց անդաստանում, բայց դա՛ էլ սոսի ժամանակաւոր զբաղում է ու պատրանք: Մարդկային անհատները անկասելի կերպով հասունանում են եւ վաղ թէ ուշ գրլուխ բարձրացնում, իրենց բաժինը պահանջում ընդհանրական արժէքների առնունով ամբողջատիրական բռնութիւն հաստատանքներից:

Լ. ՄԿՐՏՁԵԱՆ



ԺԵՐԱՐ ՏԸ ՆԵՐՎԱԼ

Ն. ԶԱՐԻՈՒՏԵԱՆ

ԺԵՐԱՐ ՏԸ ՆԵՐՎԱԼ

1808 — 1855



Ես խաւարամածն եմ, այրին,
անմխիթարը,
Ափիթնի դուքսը՝ քանդուած
միջնաքերդով:
Մեկ հասիկ աստղս մեռած է, եւ
քնարս աստղագարդ
Կը կրէ սեւ արեւը մելամաղձաւու-
քեան:

Բու շարքին եւ անունը հազիւ կը յիշուէր
գրականութեան զասպարհերուն մէջ:
Մարդիկ կը նախընտրէին Պերանժէ մը,
Լըպրէօն մը: Այսօր, ան անցած է մե-
ծագոյններու շարքին եւ իր 14 հնչեակ-
ները ա՛յնքան կը կշռեն, որքան որեւէ
անուանի բանաստեղծի հատորները:

Այսպէս կը սկսի Ներվալի կախար-
դող ու խորախորհուրդ հնչեակներէն մէ-
կը, գրուած 1853ին, երբ արդէն հասած
էր իր մութ ճանապարհին ծայրը:

Եւ իսկապէս՝ մութ եւ ողբերգական
եղան այս քնարեալին կեանքն ու ճակա-
տագիրը, այս մաքրամաքուր բանաս-
տեղծին, որ յաջողեցաւ արուեստի երկ-
նակամարը զարդարել սեւ ու հմայող ա-
ղամանդներով:

Յիսուն տարի առաջ, Ներվալ կը
դասուէր երկրորդական բանաստեղծնե-

ԵՐԱԶԻ ՄԸ ՀԵՏԱՊՆՈՒՄԸ

Ժերար Լապրիւնի ծնուն 22 Մայիս
1808ին, Սէն Մարթէն փողոցին վրայ
գտնուող տուններէն մէկուն մէջ, Նոթր
Տամէն ոչ շատ հեռու: Հայրը՝ Էթիէն
Լապրիւնի, կայսերական բանակին մէջ
գինուորական վերաբոյժ էր, մայրը մե-
լամաղձոտ ու քաղցրազէմ մանկամար-
դուհի մըն էր, Վալուա նահանգի Մորթ-
ֆոնթէն գիւղէն, Փարիզի հիւսիսակող-
մը:

Արդէն գժբախտութեան սեւ հրեշտակը կը թռնէր մահուկին օրօրոցին շուրջը, Ժերարի ծնունդէն քանի մը շաբաթ ետք, հայրը կը ստիպուի մեկնել դէպի Ռուսիոյ սահմանները: Տիկին չապրիւնի կ'ընկերանայ ամուսինին: Մահուկը կը գրուի մօր հօրեղբօր հոգածութեան տակ եւ կը յանձնուի ստնտուի մը, Մորթֆօնթէնի մօտերը:

1810ին, Ժերար դեռ հագիւ երկու տարեկան էր, երբ մայրը կը մեռնի Լեհաստանի խորերը, Միլեզիա նահանգին մէջ եւ կը թաղուի օտար հողի մը մէջ: Ժերար երեք շտապ իր մօրը սիրելի դէմքը, ոչ իսկ գերեզմանը եւ, անմիջապէս որ խելահաս դարձաւ, սկսաւ զոյն փնտռել եւ տեսնել զոնց տնոր պատկերը՝ ուրիշ գեղեցիկ կնոջական դէմքերու վրայ:

«Մայրս քաղուեցաւ այս կողմերէն շատ հեռու, Կրոն-կոկալի լեռն կաթողիկէ գերեզմանոցին մէջ, Միլեզիոյ մէկ անկիւնը, — պիտի գրէր հետագային անմիջապէս բանաստեղծը, — ամ մեռաւ 25 տարեկան հասակին, պատերազմի յոգնութիւններէն եւ ջերմէ մը, որուն բռնաւեցաւ երբ կ'անցնէր դիակներով ծածկուած կամսաբէ մը, եւ քիչ մնաց, որ կառքը շրջելով իյնար սառած գետին մէջ: Հայրս, որ ստիպուեցաւ միանալ Մոսկուա գացող բանակին, հետագային կորսնցուց ամոր գեղարդները եւ մեռակները Պերեգինա գետին ջուրներուն մէջ:

«Երբեք չեմ տեսած մայրս, անոր նկարները կորսուեցան կամ գողցուեցան, միայն գիտեմ, թէ ամ կը նմանէր Փրաւտոնի կամ Ֆրանսուաի նկարներէն մէկուն, որ կը կոչուի Համեստութիւնը: Այն ջերմը, որմէ մեռաւ, զիս հիւսանդացուց երեք անգամ, կեանքիս գաւազան ժամանակաշրջաններուն: Եւ միշտ, այդ ժամանակաշրջաններուն, մտքիս մէջ կը բարձրանային սուգի եւ ամայութեան պատկերներ, որոնք շրջապատեցին իմ օրօրոցս: Ինծի յաճախ կարդացուեցան այն մամակները, զորս մայրս կը գրէր Պալթիկ ծովու կամ Դանուբ գետի ափե-

րէն: Այս սկզբնական տպաւորութիւնները իմ մէջս արթնցուցին երագի պացում մը եւ ճաշակը՝ հեռաւոր նախնային քիւններու: ... Այս տուեալներով կըրնայի լաւ բանաստեղծ մը ըլլալ, քայց միշտ մնացի արձակով երագող մը»:

Իսկ 1812ին, հայրը կը վերադառնի Վիենայի ճակատամարտին, գերի կ'իջնայ թշնամիին ձեռքը ու երեք տարի բանտ կը մնայ:

«Եօթը տարեկան էի: Օր մը, երբ կը խաղայի մօրեղբօրս դրամ առջեւ, յաճախ արծ երեւցան երեք սպաններ: Իրենց համագցեստներուն սեւցած ոսկին հագիւ կը փայլէր իրենց հաստ վերարկներուն տակ: Անոնցմէ մէկը ձիւն վար իջաւ ու զիս բազուկներուն մէջ առնելով՝ սեղմեց կարծիքին վրայ. — Հայրի՛կ, կը ցաւքընե՛ս, — պառացի: Երեքն ալ կը վերադառնային Սթրասպուրկի պաշարումէն: Ամէնէն տարիքոտը, որ մագապարծ ազատած էր Պերեգինայի սառույցներէն, զիս հետը տարաւ ու ինծի սօրվեցուց պարտականութիւններս...»:

Ինչպէս ըսինք, Ժերար իր ամբողջ մանկութիւնը անցուց Վալուա նահանգին խաղաղ ու կախարդող բնութեան մէջ: Ունենալով հեղ ու ընկերային բնաւորութիւն մը, ան շուտով բարեկամութիւն հաստատեց շրջանի տղոց եւ մանուկներու հետ:

«Գիւղին գանգալատունը կը ծառանար կապուտակ բլուրներուն վերերը: Գետակը կը կարկաչէր աւազին եւ խիստ բռնաւեցաւ վրայ, կը նկատուի իր ակին մօտերը եւ մարգագետիններուն կամային մէջ կը կազմէր լեակ մը՝ շրջապատուած շուշաններով եւ հիւրկներով: Շուտով հասանք գիւղի առաջին տուներուն: ... Մտադրեցի պոստ մը ընել միմէն էրմենովի: Մեծ կաղնիներուն միատարր կամային կը յաջողէին ցարաւիներու ճերմակ բունները իրենց տարաւացող տերեւներով: Թռչունները կը լռէին: Երբ ուռնիներու տերեւներուն մէջէն տեսայ լինի ջուրերուն փայլիլը, ճանչցայ այն վայրը, ուր կը գտնուէի: ... Անաւախիկ

կղզիին բարտիները եւ Ռուսոյին գերեզմանը, ուր սակայն չկան իր անիւնները...»։

Եւ այս գեղեցիկ բնութեան մէջ մասնակները կը սարքէին իրենց անմեղ խաղերը, կը շրջէին գիւղէ գիւղ, աշխարհի կը խաղային՝ ծառերուն բունին նտեւը պահուրտելով։

Ժերար մասնաւոր համակրանք ունէր Սիլվի անունով ազնակի մը հանդէպ, զտեսչեայ ու շարածնի ժպտով։ Սիլվի կը ներկայացնէր առողջ, շօշափելի եւ համեստ իրականութիւնը, կեանքի հասանելի հաճոյքները, սակայն Ժերարի հոգիին մէջ կը սաւառնէին երազային գեղեցկութիւնը, բնակիչ անիրական աշխարհներու։

«Եւ Սիլվին, — կը գրէր Ներվալ տարիներ ետք, — զոր այնքան կը սիրէի, ինչո՞ւ չեմ յիշեր զինք երեք տարիէ ի վեր։ Շատ շնորհալի աղջիկ մըմ էր եւ իր գիւղին ամէնէն գեղեցիկը։ Գիտեմ ո՛րք է հիմա այդ քարի ու մաքուր աղջիկը։ Կը յիշեմ իր պատանահը, ուր սարսիման կը փաթարի վարդենիին, կը լսեմ իր շարժուցած իլիկներուն ձայնը եւ իր սիրտը երգը... Ան միշտ ինծի կը պատէ... Ո՞վ պիտի ամուսնանար հետը, այնքան ազգատ էր»։

Բայց վերադառնալով մանկութեան աշխարհը եւ հասնիքն այն օրուան, երբ պիտի պատահէր Հրաշքը։

«Կը տեսնէի Համրի Դ-ի ժամանակէն մնացած դռնակ մը, ուր կտուրներով եւ հերձաքայներով ծածկուած։ Կարմրորակ ճակատին առջեւ կը տարածուէր ընդարձակ բացութիւն մը, շրջանակուած կնճիկներով եւ քմբիկներով, որոնց տնտեսներուն մէջէն կ'անցնէին արեւին բացալատ սլաքները։ Խուսմը մը աղջիկներ շուրջպար մը կը դառնային մարգագետին վրայ, երգելով իրենց մայրերէն մնացած երգերը...»

«Եւ միակ մանջմ էի այդ խուսմին մէջ եւ հետս բերած էի Սիլվին։ Միայն զինք կը սիրէի, միայն զինք կը տեսնէի։ Հագին նշարած էի պարախումբին մէջ քարձրահասակ ու գեղեցիկ խարտեալ աղջիկ մը,

որ Ատրիէն կը կոչուէր։ Յանկարծ պարին ձեռակերպութիւններուն բերմամբ, Ատրիէն կանգնեցաւ դէմս, շրջանակին նիշդ մէջտեղը։ Մեր հասակները հաւասար էին. համարաբար համեմատելի պարախումբը երգելով կը դառնար մեր շուրջը աւելի եւ աւելի արագ։ Համարաբար փոխանակելու տեսն, չկրցայ դիմադրել անոր ձեռքը զննելու փափաքին։ Երկուքս մագնիսաբար ձգտեցին հիսկները կը շոյէին այնտեղ։ Այդ վայրկեանին տարօրինակ յալճում մը համակեց էութիւնս ամբողջ։

«Եւ Ատրիէն սկսաւ երգել... Եւ մինչ ան կ'երգէր, աղջամուտքը կ'իջնէր ծառերու տնքներէն եւ մար ծագող լուսնին լոյսը կ'աղղկէր զինք եւ կ'անցատէր մեր ուշադիր շրջանակէն։ ... Վազեցի մինչեւ զոգնակին պարտեզը եւ կտրելով զսփնիի երկու նիւղեր, կազմեցի պսակ մը ու դրի Ատրիէնի գլխուն վրայ...»։

Աւելցնենք, որ Ժերար յամառ ընթերցող էր եւ կը լսէր որեւէ գիրք, որ ձեռքը իյնար։ Մեծ մօրեղբորը դրադարանը կը պարունակէր բազմաթիւ կախարհական եւ մոգական գրքեր։ Անոնց ընթերցումը իր մէջը զօրացուց խորհուրդին եւ գերբնականին ճաշակը եւ այնպէսով սկսաւ հաղորդակից ըլլալ անտեսանելի աշխարհին, ուր իր երեւակայութիւնը կը ճամբորդէր յաճախ եւ ուր պիտի կորսուէր իր խելքը։

Երբ հայրը վերադարձաւ Ռուսիայէն, հեռը առաւ պատանին ու դաշին Փարիզի իրենց տունը։ Նախորդէն ինքնուրուի էիքէն Լապրիւնի եւ իրեն պէս հաղարատոր սպաներ հանգստեան կոչուեցան։ Հայրը՝ տղուն հակապատկերն էր։ Քիչ մը նեղմիտ, անձնասէր ու զինուորական տիրիփիլինս սիրող մարդ մըն էր, մինչ տղան զգայուն էր ու երազկոտ։ Այդպէս թացին, ծեր սպասաւորը մը կ'արթնցնէր Ժերարը ու միասին կ'երթային քաղաքէն դուրս, կը շրջէին գիւղէ գիւղ, ազարակէ ազարակ ու կը նախաճաչէին պատի մը տուկ, հացը թաթխելով թարմ կաթին մէջ։ Այս սովորութիւնը այնքան սպիտակ տուրքուէր, որ մինչեւ կեանքին վերջը, յանկարծ կը լքէր քաղաքը եւ իր Ժերարը



ժէնի ԳԱՆՆ

ու կ'երթար թափառել Փարիզի շրջա-
կայքը:

Իր երկրորդական ուսումը առնելու
համար՝ ժերարը կը յաճախէ Լիսէ Շար-
լըմանը, որ իրենց թաղին ժողովրդը կը
գտնուէր եւ հոն իւր դասընկեր կ'ունե-
նայ Թէոֆիլ Կոթիէն, որուն կը կապուի
եղբայրական բարեկամութեամբ մը: Երբ
դեռ կը գտնուէր աւարտական դասարա-
նին նստարաններուն վրայ, ժերար
թարգմանեց Կէօթիլի Ֆաուստը եւ անմի-
ջապէս նշանաւոր դարձաւ գրական շրջա-
նակներէն ներս: Օր մը, էփեման, Կէօ-
թիլ քարտուղարը, վարպետին ձեռքին
մէջ նշմարեց զիւրք մը, զոր ան կը կար-
դար մեծ յափշտակութեամբ: Փարաու-
զարը Կէօթիլին հարցուց.

— Տէ՛ր, ի՞նչ է ձեր կարգացած դիր-
քը:

— «Ֆաուստ»-իս ֆրանսերէն թարգ-
մութիւնն է:

— Ա՛հ, — կ'ըսէ էփեման քմիծա-
ղով մը, — լսեցի այդ մասին. թարգ-
մանիւր 18 տարեկան աշակերտ մըն է ե-
ղեր. անպայման գոչէ՞ն կը հոտի այդ
գործը:

— 18 տարեկա՛ն, — կը բացազանչէ
Կէօթի տեղէն ցատկելով, — այս թարգ-

մանութիւնը ե՛ւ լեզուի, ե՛ւ ոճի հրաշալիք
մըն է: Եւ կրնամ անվարան ըսել, որ այդ
երիտասարդը պիտի բլլայ Ֆրանսայի
նորագոյն գրողներէն մէկը:

Եւ մեծ գրագէտը կ'աւելցնէ.

— Ես ալլելոս համ շեմ առնեմ դե-
մաներէն «Ֆաուստ»-ն կարգաւոր: Երբ
կարգամ այս թարգմանութիւնը աւելի
կը հասկնամ անոր կենսունակութիւնը եւ
թարմութիւնը: Հոգարտ կը զգամ երբ
կը տեսնեմ, որ զործս ինքզինքը կ'որ-
ժեցնէ Քորնէյի, Ռասինի եւ Պոսիւէի
լեզուով: Նորէն կ'ըսեմ, այս երիտասար-
դը շատ հեռունեքը պիտի հասնի...

Տարիներ ետք, իմանալով այս խոս-
քերը, ժերար տխուր ժպիտով մը կ'ըսէր.
«Ճակատագիրը իրաւունք տուաւ Կէօ-
թիլն, այո՛, շատ հեռունեքը ցացի, այ-
սիմէն՝ հեռաւոր երկիրներ այցելեցի»:

Երբ ժերար աւարտեց իր երկրորդա-
կան ուսումը, ստացաւ իր մօրենական
ժառանգը, որ բաւական մեծ դուստր մըն
էր եւ, ինքզինքը հարուստ կարծելով՝
սկսաւ մսինէլ: Խուսք մը նկատելներ եւ
բանաստեղծներ վարձած էին հին ապա-
րանքի մը յարկարաժինները: Ժերար
միացաւ անոնց: Ամէն գիշեր, տեղի կ'ու-
նենային ճաշերոյթներ եւ պարահաւո-
ղէտներ: Եւ որովհետեւ օղմո՛ւ կը կրնար
անհանդուարեանէ միւս վարձակալները,
որոնք բնականապէս կառավարական
պաշտօնեաներ էին, զանոնք ալ կը հրա-
ւերէին խնճոյքի:

Այդ շրջանին է, որ ժերար հանդի-
պեցաւ իր երազներու գեղեցկուհիին, զոր
իւր գործերուն մէջ պիտի անուանէր Օրե-
լիս:

Ժերար թատրոնի սիրահար մըն էր:
Գիշեր մը երբ ներկայ կը գտնուէր Օֆե-
րա-Քոմիթի մէջ որուած ներկայացումի
մը, արարներէն մէկուն մէջ նշմարեց ե-
րիտասարդ երգչուհի մը, որ ունէր պղտիկ
դեր մը: Անմիջապէս յիշեց Ատրիէնը:
«Ուրեմն, — կ'ըսէ ինքն իրեն, — մայրա-
պետը երգչուհի դարձած է»: Յափշտա-
կութեամբ դիտեց իր կորսնցուցած երա-
դին այս կենդանի մարմնացումը: Եւ ա-
մէն գիշեր, կը հագուէր, կը շքուէր ու

տեղ կ'առնէր, իրեն յատկացուած օթեակին մէջ: Եւ երբ ներկայացուած վերջանար, կ'երթար դիմացի ծաղկավաճառին ու ծաղկեփունջ մը կը զրկէր դերասանուհիին, քորթով մը, որուն վրայ կար բառ մը միայն. ԱՆՄԱՆՕԹԸ:

«Նստած օթեակիս վէջ, անհամբերութեամբ կը սպասէի այդ երկրորդ կամ երրորդ արարներուն. երբ բնիմ վրայ կը յայտնուէր այն կերպարանքը, որ կը լուսաւորէր միջոցը ամբողջ... Կը վերադարձի իրմով եւ ամ կ'ապրէր ինծի հասարկութեան: Անոր ժպիտը գիտ կը համարէր անհուն երանութեամբ մը, իր քաղցր ու ելանգաւոր ձայնին քթոցացումները գիտ կը սարսափեցնէին ռաբիութեամբ և սիրով: Իմ աչքին՝ ամ կը զգենաւ բաշտը կատարելութիւնները, կը քաթմէր իմ բոլոր խանդավառութիւններս եւ քաշանայինքս. լուսնին պէտ գեղեցիկ՝ երբ կանթեղաշարք զինք կը լուսաւորէր վարդէն, գիշերուան պէտ տօգայն, երբ կանթեղաշարք կը մարէր եւ ձեռնադրանք միայն կը լուսաւորէր բնութեւնը, եւ ամ մուսթին վէջ կը փայլէր իր միակ գեղեցկութեամբ...»:

Ըստ Թէոֆիլ Կոթիէի, «Ժենի Գալան շատ քարեմէն կ'իմ մըն էր, սպիտակ, նուրբ ու մետաքսանման մորթով: Ձայնը բաւական համեղի էր...»:

Բարեկամները փորձեցին արթնցնել բանաստեղծին նախանձը, ըսելով, թէ իր պաշտած կնիք հետու էր հրեշտակ մը ըլլալէ: Ժերարը, սակայն, թաղուած իր երազին մէջ, ականջ չէր կախեր անոնց ըսածներուն: «Ի՞նչ փոյք, — կը պատասխանէր, — պատկեր մըն է, գոր կը եետապնդեմ, ուրիշ չշինջ»:

Այո՛, պատկեր մըն էր, գոր կը հետապնդէր Ժերարը: Ժենի պատկերն էր Ատրիէնին, իսկ Ատրիէն՝ պատկերն էր իր մանկամարդ մօրը:

Ինչի՞ր յոնգեցաւ այս յարատեւ պաշտամունքը: Արեւթիտ Մարի, որ իր ամբողջ կենսաւոր նուիրեց Ներվալի կենսութեան ուսումնասիրութեան, հետեւեալը կը պնդէ. «Ժերար, քանի մը ամիս ճանցաւ

սիրոյ մը յուսախաբող զինովութիւնը»: Հոկտեմբեր կարծիքներ ալ կան: Տարիներ հաջ, Թէոֆիլ Կոթիէ Ժենիին հանդիպեցաւ Պրիւսէի մէջ: Երգչուհին արդէն ամուսնացած էր Նուարդուարին սրբապաշտին հետ: Կոթիէ խստիւ յանդիմանեց Ժենին, այն վերաբերումին համար, զոր ունեցած էր Ժերարին հանդէպ, իր թեթեւութեամբ անոր պատճառելով անբուժելի տառապանք: Ժենի ինքզինքը արդարացոյց հետեւեալ խօսքերով. «Ժենի յարմար մէկ անգամ միայն, քառասունի խցիկիս վէջ: Ամէն գիշեր, ծագկեփունջներ կը ստանայի՝ առանց գիտնալու, թէ ուրիշ կու գային անմեղ: Ի գոր կը մեղադրէի գիտ, Ժերարը տառապեցողք ըլլալու համար: Եւր սիրահարը կամ է, սիրուած կինը կը դառնայ խուլ»:

Սիրուած կամ ո՛չ, Ներվալ Ժենիին դրկեց սիրատուր եւ բանաստեղծական նախնիներ, զբաղանդեալ մէկ-մէկ գոհարներ, որոնք հազիւ թէ հասկցուէին ստիւորական մահկանացուէ մը:

Օր մը, Ժերար եւ Ժենի Մորթֆոն-Թէնի կողմէրը պտոյտի դաշտէն: Երբ արեւը մարը կը մտնէր, հասան այն գոգնակին առջեւ, ուր պահ մը Ատրիէն երեւցած էր իրեն, երազային մթնոյտի մը մէջ: Ժերար՝ յուզուած, ոգեկոչեց անցեալը, խօսեցաւ Ատրիէնի մասին. «Ազդիւրը այն սիրոյ, որուն մասին երազած էր միշտ եւ որ պիտի իրականանար իրմով՝ Ժենիով...»: Ազդիւր բան մը չէ՝ հասկցաւ, նեղուեցաւ իսկ այս տարօրինակ յայտարարութիւններէն:

Յուսալքուած՝ Ներվալ մեկնեցաւ Գերմանիա, ուր կը տիրէր վիպապաշտական սանձարձակ մթնոլորտ մը: Այս ցիւց Ներվալի ամիսները, ուր կը սառնանէին անմիջական ոգիներ, աւերակ բերդեր, որոնց դեմաւորակներուն մէջէն կը լուսնին խորհրդաւոր ասպետներու զբաղանդեալ մայրը:

Յետոյ անցաւ Վիեննա: Իր ծանօթները կը վկայեն, թէ այդ օրերուն, «Ժենի» գեղեցիկ երիտասարդ մըն էր, վաճ

տիճեան շագանակագոյն մօրութեամբ մը, արեւախառն ու միտար դէմքով մը, հրա-
ւառ աչքեր եւ արդիւն ամուսնի գրող»։
Վիկտորիա գահաւորին մէկուն մէջ, հան-
դիպեցաւ զաշխարհարուհի Մարի Փլէ-
յէլի։ «Երկու աչքեր,— կը գրէ Ժերար,—
սրտմէ կը մնան զարեան իրիկուն մը, Ալիսապարայի վրայ իջնելով վերալու-
սին, դէմք մը՝ պայծառ, ինչպէս լուս-
նին տօգոյն ցոյժը, ժպիտ մը, որ ըլլար
սիրային բանաստեղծութեան մը երա-
զը»։ Այս նոր սէրը, ատեն մը, այլափո-
խեց Ժերարը։ Եւ սակայն այդ ալ մնաց
երազի սահմաններուն մէջ...

Յաջորդ սարի, Պրիւսէլի մէջ, Ժե-
րար վերադառաւ եւ երգչուհին, եւ զաշ-
խարհարուհին, Ժենին եւ Մարին, նոյն-
քան սիրուած, նոյնքան երազուած։ Եր-
կու հրէշտակներն ալ կորսնցուցած էր իր
ապրիկաբուժեամբ, իր իսկ յանցանքով եւ
յանկարծ վրան իրան տիրութեան սեւ ա-
րեւին ճառագայթները։ Ինքզինքը զգաց
յանցապարտ։ Մեղք մը գործած էր, զոր
ամէն գնով պէտք էր քաշէր։ Ուղեղը ըս-
տացած էր խելագարութեան տանող ա-
ռաջին ցնցումը։

Երբ Փարիզ վերադարձաւ, արդէն
յոգնած ու հիւանդ էր։ Կ'ուենեար յա-
ճախակի տեսիլներ, կ'ապրէր պատ-
րանքներու աշխարհին մէջ։ Անկարող էր
դանդաղանել կեանքը երազին։

Օր մը, հրապարակի մը վրայ, կը
սկսի երգել տարօրինակ երգ մը, եւ հա-
զուստները կը հանէ մէկիկ-մէկիկ։ Ու-
րիշ օր մը, պտուղի կ'ելլէ, ետեւէն քա-
շելով խելափառ մը, զոր կապած էր
ժապաւնիով մը։ Բարեկամները կը ըս-
տիպուէին զինք յանձնել հանգստեան
տան մը խնամքներուն։

1941-ի աշնան, հանգստարանէն դուրս
կ'ելլէ, մասամբ բուժուած։ «Ամբողջ-
վիմ շատրտած ու ապշած եմ՝ իջնելով եր-
կիմէն երկիր, ուր կ'ապրէի քանի մը
ամիս առաջ»։ Դարձած էր հանդարտա-
բարոյ, ծանրախոհ եւ հեղահամբոյր։
Քսապիկներուն հմայիչ էր։ Մահուն

կերպով կը խօսէր բաղմամբ լեզուներ
եւ ծանօթ էր անթիւ կրօններու։

1842 տարին, մեծ թուական մըն է
իր կեանքին մէջ։ Որոշած է այցելել Ա-
րեւելք, օրրանը գիտութեանց, կրօնե-
րու եւ քաղաքակրթութեան։ Թերեւս
գաղտնի յոյս մը կը սնուցանէ՝ հոն գրու-
նելու իր կորսնցուցած սիրելիներուն եւ
սէրերուն վերականգնացած պատկեր-
ները։ Նախ՝ կ'անցնի Եգիպտոս, կ'երթայ
Աղեքսանդրիայէն մինչեւ Ասուան։ Կը
գիտէ Սֆինքսը, բուրբերը, տաճարնե-
րը, փառաւորներու դամբարանները։ Ա-
միսներ կը մնայ Գահիրէ։ Կը վարձէ
տուն մը, կը հազուի արեւելքցիի պէս։
Կը խառնուի ժողովուրդի կեանքին, կը
ընթերցի փողոցներու եւ շուկաներու մէջ,
ներկայ կ'ըլլայ առնաթուրներուն, հարսանիքներու։ Կը հիւրասիրուի տե-
ղաքի ընտանիքներու կողմէ։ Ձրանայցի
հիւպատոսը իրեն կը յայտնէ, որ այս
երկրին մէջ լաւ աչքով չեն նայիր բոլոր
անոնց, որ կ'ապրին ամուրի։ Ներքով կը
գնէ Ձէյնէպ անունով ճաւացի աղջիկ մը,
որ իրեն կը պատճառէ հազար զժուարու-
թիւն։ Ատեն մը ետք, կը լքէ Եգիպտոսը,
եւ հետը առնելով Ձէյնէպը, կ'ելլէ նաւ։
Նաւուն մէջ կը ծանօթանայ հայ վաճա-
ռականի մը, որուն հետ բարեկամութիւն
կը հաստատէ։ Տաժանելի ճամբորդու-
թենէ մը ետք, վերջապէս ոտք կը դնէ
Պէլլուսի նաւահանդիսար։

Ներքովի առաջին գործը կ'ըլլայ
յարմար դպրոց մը գտնել Ձէյնէպին հա-
մար, որ ամբողջապէս անուս էր։ Պէլ-
լուս, այդ տարիներուն կը հաշուէր յի-
սուն հազար քնակիւ։ Բաւականաչափ օ-
տարներ հաստատուած էին հոն, մանա-
ւանդ խալցէդոնի, յոյներ եւ ֆրանսա-
ցիներ։ Ներքով կը գտնէ հայրենակցուհի
մը, մարսելիացի Տիկին Քառլէսը, որ
աղջիկներու յատուկ դպրոց մը բացած
էր։ Ձէյնէպը կը յանձնէ Տիկին Քառլէսի
խնամքին ու ինք կ'իյնայ ճամբաները։
Կ'այցելէ լիբանանի պատմական վայրե-
րը, գիւղերը, քաղաքները, կը հասնի
մինչեւ Դամասկոս։ Եւ իր յոտակ ու կեն-

դասի ոճով մեղի կը նկարագրէ այն անհուն կենցաղն ու սովորութիւնները:

Ահա լեռնանհետ Պէյթ Մերի գիւղին նկարագրութիւնը:

«Քանի մը քայլ անցելէ ետք, աղբիւրէն անցին, միշտ մնալով եղիւնին ետ շուքին տակ, հասանք Պէյթ Մերի գիւղի մաստէին: Պէյթ Մերի կը գտնուի սարահարթի մը վրայ, չորիկ նայածքը կը տարածուի մէկ կողմէն մինչեւ ծովածոցը եւ, միւս կողմէ՝ խորունկ գոգի մը վրայ, որմէ անցին կը բարձրանան մտք գագաթներ, որոնք կը կարծես մշուշներու մէջ: ... Քանի չափ տուններ ցրուած էին ծառերու տակ եւ կը ներկայացնէին մեր Հարաւի գիւղերէն մէկուն պատկերը: Մտանք գիւղի շէնքին տան մէջ: Անտիմը բացակայ ըլլալով, տանիքին մէջի երամացուց մածուն եւ պտուղ»:

Ժերար այցելեց նաեւ Ծուֆի շրջանը: Կարծես չեղնեալ բարձրութիւններուն վրայ կը փնտռէր իր երազներուն խորհրդաւոր իշխանութիւն: Թափառեցաւ գիւղէ գիւղ, զգեսկէ զգեսկ եւ, յուսահատ՝ վերադարձաւ Պէյթ Մերի: Եւ սակայն հոն է, որ սկսեց իր փնտրածը:

Այցելութեան զնայ Զէյնէպին: Մըտաւ դասարան, Տիկին Քալէսին հետ տեսակցելու համար եւ զարմանքէն ապշած մնաց զբան մէջ: Տիկին Քալէս բացօթեայ էր եւ անոր տեղը, սեղանին առջեւ, նստած էր իր տարիներով որոնած զեղեցիկներն, Ատրիէնի, Ժենիի եւ Մարիի մէկ նոր ու հմայիչ պատկերը: Գեղեցիկներն կը կոչուէր Սուլէյմա եւ աղջիկն էր տիւրզի շէյի մը: Կը նմանէր միջնադարեան իշխանութիւն մը, իր ցեղին աւանդական տարապիւն ծաղկերուն մէջ պարուրուած: Ներքին ալիւս ոչ մէկ տարակոյս ունէր, թէ այս է իրեն ստանունուած ընկերուհին, դարերէ ի վեր:

«Այլեւս առանձին չէի: Այագաս կը գծագրուէր այս տեսիլին լուսաւոր խորքին վրայ: Խտլալ կիներ, զարմեղէն իւ-

րաքանչիւրը կը հետապնդէ իր երազներուն մէջ, մարմին կ'առնէր ինծի ետեւը: Ներքին կ'ողկոյնէ իր իր տառապելը, էլէօգիս խորհուրդները եւ Գիւրք Մենդոցի հաստատումները: Սուլէյմա կը դառնայ զայն կոյսը, որ սահմանաւոր էր ինծի, ստեղծագործութեան առաջին օրն իսկ... Ինքզինքն կը տեսնէի եղբւրի ոսկի նիւթերուն տակ, նստած իր բովը, մինչ իմ ոգիներ կը սպասարկէին մեզի»:

Եւ ահա հիւսիսի աստղերը կը փութայ իր արեւելքի սիրունիկ օդնու-թեան: Սուլէյմայի հայրը բանտարկուած է Աքքայի կառավարչին հրամանով: Ներքին, որ բարեկամը եղած էր եզրապատի կահաժառանգ իւրաքանչիւր փաշային եւ անկէ առած էր յանձնարարողութիւն, կը փութայ Աքքա, կը միջամտէ կառավարչին մօտ եւ կ'ազատէ իր կալանաւոր աներհայրը: Երախտագրութ շէյի կը հասնի իր աղջիկը առանձնութեամբ: Քրտնոցի այս ամենակարող ասպետին: Կը նշանուի եւ նոյն օրը կը տնկեն նշանտուրի ծառը, որ խորհրդանշէ իրենց յաւիտեական սէրին...

Աւա՛ղ, Ներքինի ճակատագրին մէջ չէր զրուած, որ ան այս աշխարհի մէջ բախտ պիտի ունենայ իրականացնելու իր երազը եւ ապրի երկրի մը մէջ, ուր երազը ժողովուրդին առօրեայ սնունդն է: Ժերար կը բռնուի զօրաւոր ջերմէ, կը մնայ անկողին ու կը ստիպուի հեռանալ այս երկրաւոր գրախտէն: Սուլէյմա գիտէ՞ր արդեօք, թէ անունը անմահացած էր եւ դարձած էր քոյրը Ատրիէնի, Ժենիի, Մարիի, Սիւլիի, այդ կրակէ աղբիւրներուն, որոնք յաջորդաբար եկան շէյի եւ Ներքինի մենութիւնը:

Վերադարձի ճամբուն վրայ, Ժերար կ'այցելէ Մայթա կղզին: Նստուն մէջ կը ծանօթանայ Օքթաի անունով անգլիացի աղջկան մը: Միտին կ'իջնեն Նափուի կ'այցելեն Փոմփէյի աներաները ու կ'որոնեն իր իր խորհրդաւոր տաճարը:

Շեքարտեայ անգլուհին երեւցաւ փառքին ծայրը: Այցելեցինք Փոմփէյին եւ իր իր տաճարը... Վերադարձին, այն-

քան ազգուած էի տեսածներէս, որ չը-
համարձակեցայ սիրայ մասին խօսիլ Օք-
քապիին հետ... Այնքան պաղ էր վերա-
բերումնս, որ զիս յանդիմանեց... Այն
ատեն խռատովանեցաւ, որ իրեն արժանի
չէի եւ իրեն պատմեցի, քէ ինչպէս իւր
տեսքը մէջս արթնցուցած էր իմն սի-
րոյ մը յիշատակը...»:

Դեկտեմբերին, Ներսիսը կը հասնի
Մարտէշ, եւ յետո՛ր՝ Փարիզ, Բարեկամ-
ները կը զարմանան, տեսնելով այն
լուսաւոր ցոլքը, որ կ'ողեկանացնէր իր
դէմքը եւ, աչքերն ու ճակատը կը վերա-
ցնէր խորհրդաւոր փայլով մը: Այն ներ-
քին բոցը, որ կ'այրէր զինք, նոր սնունդ
ստացած էր: Եւ անմիջապէս, դէշ լու-
բերու տարափը կ'իշնայ վրան: Ատրիէն
մեռած է՝ իր երեւակայած վաճառքի կա-
մարններուն տակ: Ժենի Գոյոն, ութ ա-
միսներէ ի վեր կը ննջէ Մոնմարթրի իր
ճերմակ գերեզմանին մէջ: Սիլվի մոռա-
նացած է, Մարի՝ անհետացած: Բայց
Ներսիսը պէտք չունէր այնքան ալ անոնց
մարմնական ներկայութեան, ապրելու
համար իր երազը: Ինք զարմած էր տե-
սակ մը կախարդ եւ երբ փափագէր՝ կը
բարձրանար գերերկրային շրջանակնե-
րը, ուր ողբովսներու եւ եղեմներու
անմահութեան մէջ իրեն կը սպասեն ա-
նոնց հոգիները:

Ներսիսը, տառը տարի կ'ապրէ բե-
զուն ու քնակասուն կեանք մը: Կը հրա-
տարակէ իր անդերադանցելի «ձամբոր-
դութիւն դէպի Արեւելք», որուն գեղեց-
կութեան հապիւ կը հասնին Շաթուարի-
անի, Լամարթիին էջերը, զբոսած նոյն
առիթուով: Կ'ուսումնասիրէ կրօնքները,
խորհրդաւոր փիլիսոփայութիւնները,
անդենականին հետ շփում ունեցող մետ-
քերը եւ անոնց կը նուիրէ իր «Լուսաւոր-
եալներ» հատորը: Վերջիւ շիւկոյի
տուն մէջ, հիւրերէն մէկը զինք կը մե-
ղադրէր իրը անկրօն. «Ես՝ անկրօն», — կը
բացատրէ Ներսիսը, — ե՛ս, որ օրհնալիս
կը ծառայեմ 17 կրօններու»: Կը հրա-
տարակէ իր «Կրօնէ աղբիւններ» պատ-
մըածքներուն շարքը ու կը դրէ զանա-

զուն թատերգութիւններ, որոնք կը ներ-
կայացունին աւելի կամ նուազ յաջողու-
թեամբ:

Կրկին կը մեկնի Գերմանիա: Կ'ա-
ցելէ Շիլլէրի ծննդավայրը: Կը ծանօթա-
նայ Լիսթին: Կ'անցնի Հոլանտա: Ու կը
վերադառնայ Փարիզ, զրոյանները պա-
րապ: Սակայն զրամը իր հոգեբուն վեր-
ջինն է: Կ'ապրէ քիչով, աղքատ ու ժուժ-
կալ կեանք մը: Բանջարեղէններու շու-
կային մօտերը կը գտնուին աժան ճաշա-
բաններ: Օր մը կը խռտովանի, որ 50
Փրանք չէ ծախսած երկու ամսուան մէջ:

1851ի աշնան, անհաւաստարակաւու-
թեան նոր ապրանշաններ կը յայտնուին:
Ներսիսը կ'ուշեւայ տարօրինակ անօրէյ-
ներ եւ, ինչպէս կ'ըսէ ինք. «Երազը ըս-
կսած էր ծարիլ իրական կեանքէն ձեռք»:

Առաջին աղգանշանը՝ իրարու նմա-
նող ստուերներու երեւումն է: «Օր մը, —
կը գրէ ան,— կը ճաշէիմք արիշի մը տակ,
Փարիզի մօտակայ գիւղերէմ մէկուն մէջ:
Կիմ մը մօտեցաւ մեր սեղանին ու սկսաւ
եղգել: Ձայնին մէջ կար եամեկրեւի ու
յոգեմած երանգ մը, որ իմօի կը յիշեցնէր
Օրեւիս: Նայեցայ դէմքին, որուն գի-
ծերն իսկ սերտ մամուռներով մը ունէի
երբեմն սիրտած դէմքին հետ: Ձայն վը-
ռնեցի, չեամարձակեցայ պնդել, որ
մնայ, բայց իմքնիքնս կ'ըսէի.— Ո՞վ
գիտէ, քէ անոր հոգին այս կնոյ մէջ
չ'ապրիր»:

Ապրիլի դիւեր մը, Ներսիսը կ'ուզէ
ինքզինքը նետել Սէն գետին մէջ. բայց
հիշող այդ պահուն, աստղերը կը մարին
եւ սեւ արեւ մը կը բարձրանայ ամայի
երկնքին մէջ. կը կարծէ, որ Յովհաննու
Յայրնութեան մէջ եղած մարգարէու-
թիւնները իրականանալու վրայ են, թէ
հասած է աշխարհին վերջը: Ու կը մտա-
ծէ ինքն իրեն.

«Յուսկեանցիկ գիշերը սկսաւ եւ
պիտի բլլայ զարեւոյթի: Խօնչ պիտի
պատահի, երբ մարդիկ ճկատեն, քէ այ-
լիւս արեւ չկայ»:

Երբ Լուսը կը հասնի, ամպերու հո-
տեւէն կը նշմարէ բազմաթիւ լուսիններ,

որոնք կը թաւալէին ժեծ արագութեամբ: Կը կարծէ, որ երկրադունտը ելած է իր շրջանակէն եւ անդէկ նստու մը պէս կը թափառի անհունին մէջ: Սակայն առաւօտուն կը դարձանայ արեւը տեսնելով: Բայց կը խորհի, թէ ան սպառելու վրայ է իր պահանտի վերջին ճառագայթները: Կը վազէ իր բարեկամ հռչակաւոր քանաւանդը Հանրի Հայնէի տունը եւ կ'աղաղակէ. «Ասիւն քան վերջացած է. պէտք է պատրաստուիմք մեռնելու»:

Հայնէ եւ իր կէնր, գուշակելով Ներվալի մտային վիճակը, անմիջապէս կառք մը կը վարձեն ու գինք կը յանձնեն հոգեբոյժ Տոքթ. Տիւլպուային:

Ամիս մը խնամուելէ ետք, Ներվալ կը յայտարարէ. «Շատ լաւ կը զգամ, այլ լնու սեւ քիթեղնիկներ չեն քաշտիր աչքերուս առջեւ»: Կը վերակաշի իր թափառումներուն: Կարօտը ունի իր մանկութեան տեսարաններուն, Վալուտայի դիւղերուն, ուր ձգած է իր բարեկամները: Եւ այդ քաղցր օրերը վերալիւնու համար, կը դրէ իր «Սիւվի» վիպակը, որուն յետագի, լուսաւոր, մտերմիկ եւ յուզիչ էջերը կը հանդիսանան Ֆրանսական դրամատիկական ամէնէն յատկանշական դրուս-գործողներէն մէկը:

Հաղիւ գործը հրապարակ հանած, Ներվալ կրկին կը վերադառնայ ստուերներու աշխարհ: 24 Օգոստոս 1953ին, ժերար կը մտնէ Սէնթ Էսթիւան Եկեղեցին, ազօթելու համար: Կը ծնրագրէ Աստուածամօր արձանին առջեւ եւ կ'արտասուէ՝ յիշելով մայրը: Եկեղեցիէն կ'ելլէ, կը գնէ Ծաղկեփունջ մը, ու կ'երթայ հօրը տունը: Հայրը բացակայ ըլլալով, ժերար կ'իջնէ փողոց եւ կը բռնուի տեղատարափ անձրեւի մը: «Ձուրը կը խուժէր շրջակայ փողոցներէն. եւ կեցնելու համար այս մօր քրեկեղը, հասնէին մէջ մետեցի մատմի մը, զոր զընած էր Ալէք Էսթիւան մօտերը: Եւ փոքրիկը կանգ առաւ ամբիջապէս եւ արեւը երեւցաւ բացուածքէ մը»:

Յիշում զարձած՝ ժերար կը վազէ բարեկամի մը տունը, կը փոխէ հա-

դուստները ու կ'երկնայ տիւանի մը վըրայ: «Ունեցայ երաշալի տեսիլք մը: Աստուածունիմ ինծի երեւցաւ ու քսաւ ~ եւ եմ նաեւ Մարիամ Կոյսը, մայր եւ բոլոր այն գեղեցիկներն, զորս սիրեցիր գամագան կերպարամաներու տակ: Խրաճանչիւր փորձաքննէդ ետք, վերացուցի այն դիմակը, որուն ետեւը կը պահէի ինքնութիւնս եւ շուտով զիս պիտի տեսնես ինչպէս որ եմ»:

Իսկոյն այս խօսքերուն մէջ, պէտք է փնտռել ժերար տը Ներվալի զգացական կեանքին եւ գործին բանալին:

Ժերար տը Ներվալ անսովոր երեւոյթ մըն է զբաղեցնող եւ անհասկնալի մէջ: Մինչ անհամար է անոնց թիւը, որ դիւրիւ, հաշիւի, աֆիոնի եւ մորֆինի կը գիմէին, կամ կը դիմեն, արուեստական եղանակներ այցելելու համար, Ներվալ իր նպատակին կը հասնէր ինքնաբերաբար, իր մտքին կարողութեամբ:

Անկէ ետք, Ներվալ բազմաթիւ անգամներ հիւրը կ'ըլլայ հոգեբոյժ Տոքթ. Պլանչին: Եւ այդ պարտէզներով շրջապատուած ասպարեզին մէջ է, որ կը յօրինէ իր բանաստեղծական դրուս-գործողը «Լէ Եիւլի»-ի անգղաական 14 հրեշեակները, որոնք բանաստեղծութիւնը վերածեցին ուղիւղական կախարհութեան եւ գարձան խորհրդապաշտներու եւ գերիբազաններու ուղեցոյցը:

Ներվալ կը մեկնի միջին Սթրասպուրկ ու շուտով կը վերադառնայ Փարիզ: Կը զրադի իր գործերուն հրատարակութեամբ, բայց յոյնելով՝ կրկին կը տարուի Փասիի հանգստարանը: Քանի մը անգամ կը փորձէ դուրս գալ, սակայն բժիշկը անգրգուշի կը մնայ: Ժերար կը գիմէ Գրողներու Միութեան, որուն խնդրանքին տեղի տալով, Տոքթ. Պլանչի, ցաւ ի սիրտ կը ստիպուի ազատ արձակել իր հիւանդը:

Աւագ, սակայն, ժերար հեռու է ամբողջապէս բուժուած ըլլալէ: Կեանքը կը դառնայ ամբողջական թափառում մը, ո՛չ տուն կը ճանչնայ, ոչ տեղ: Գիշերները կ'անցընէ կապելաներու ազատ սե-

դտններուն առջեւ եւ լուսարացին կը հե-
սանայ քաղաքէն ու ապաստան կը գտնէ
Փարիզի մօտակոյ քարահանքերուն մէջ:
Երբեմն-երբեմն կը դարնէ իր բարեկամ-
ներէն մէկուն գուար, գիշերը կ'անցընէ
անոր յարկին տակ: Կը նախաճաշէ ու կը
մեկնի՝ խոստանալով իրիկունը վերա-
դառնալ: Սակայն կը ժողովայն վերադառ-
նալ: Հետաւոր եւ ուրիշներուն համար
անտեսանելի էակ մը ձեռք կ'ընէ ժերա-
րին: Ներվալ կախարդուած իր մշտնջե-
նական երազով, կ'ուզէ շուտով իրադրու-
ծումը տեսնել անոր ու միանալ իր մօր,
Ատրիէնի, Ժենիի եւ Սրելիայի քաղցր
ժպիտներուն:

Ինչի՞նչ ձմերուկ օյնքան սաստիկ է, որ
Սէն գետին ջուրերը կը ստոբին: Անկա-

րելի է թափառիլ փողոցները, ժերար
թաշուած գետնայարկ կապելայի մը կող-
սեղանին առջեւ, ապաստանած իր երե-
ւակայութեան մէջ, թուղթի կտորներու
վրայ կը շարադրէ իր գործերուն սեւ ա-
ղամանգը՝ «Սրելիայն, Երբեմն-երբեմն,
երբ ոտնաձայներ կը լսէ, կը դառնայ
դրան կողմը, կը դիտէ փողոցէն մտնող
կերպարանքը եւ յուսախաբ՝ կը հակի իր
թղթիկներուն վրայ ու կը շարունակէ իր
գործը:

Ինչ ժամադրութիւն մը տուած է
Մահուան, եւ մահը կը մերժէ դալ, ու-
րեմն ինք պէտք է երթայ անոր մօտ:
Ժերար գիտէ ինչպէ՞ս հասնիլ մինչեւ
Մահուան խորհրդաւոր ու սեւ ապարան-
քը:

(Շար. I)

Ե. ԶԱՐԽՈՒՏԵԱՆ



ԸՆԿԵՐԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Տ Ա Գ Ն Ա Պ Ա Հ Ա Ր

ԵՐԻՏԱՍԱՐԳՈՒԹԻՒՆԸ



Երիտասարդութեան մասին խօսելէ տասը՝ անհրաժեշտ է նշել, որ աշխարհի մէջ կան երկու տարբեր վարչակարգերու տակ ապրող երիտասարդներ: Այսպէս՝ կան ազատ աշխարհի երիտասարդները եւ կայ բռնատիրական վարչակարգի երիտասարդութիւնը:

Աորհրդային երիտասարդութիւնը կամ երիտասարդական այն բոլոր խաւերը, որոնք բռնատիրական պայմաններու տակ կ'ապրին, հիմնական տարբերութիւններ ունին իրենց ազատութեամբ բնորոշուած երիտասարդներէն: Ոչնչացած պայմաններու երիտասարդները, ինչպէս այդ ընկերութեան բոլոր անհատները, իրենց բոլոր կարելիութիւններով՝ կը պատկանին հաւաքականութեան, պետութեան: Իրենց ուրախութիւններն ու յաջողութիւնները կը բխին հաւաքականութենէն:

Եթէ ակնարկ մը նետենք այդ վարչակարգերու մէջ փթթող գրականութեան վրայ, կրնանք գաղափար մը կազմել այն անանձնական կեանքին եւ ապրումներուն մասին, որոնք պետութեան կողմէ կը մնան հակակշռուած:

Անհատաբար բռնատիրական բոլոր վարչակարգերու տակ, երիտասարդութիւնը իր հոգիին մէջ չէ, որովհետեւ իր անհատականութենէն չ'առնեն իր մղում-

ները, այլ պարտաւոր է իր պոռթկումները ենթարկել պետութեան նորմերուն, անոր ընդհանուր քաղաքական գործունէութեան, մինչեւ իսկ հնգամեայ ընկերային եւ մշակութային փլաններուն:

Համայնավար երիտասարդութիւնը ինքնին առանձին ուսումնասիրութեան արժանի նիւթ մըն է, բայց այս ուսումնասիրութիւնը առաւելաբար հիմնուած է ազատ աշխարհի դրամատիրական կարգերու ընկերութեանց մէջ աճող երիտասարդութեան վրայ:

Ազատ երիտասարդութեան մէջ կայ երկու տարբեր մէկը՝ հոգեբանական, միւսը՝ ֆիզիքական:

Իրրեւ կազմախօսութիւն ու աշխուժութիւն՝ մէկը կարելի է բառին իսկական իմաստով երիտասարդ կոչել մինչեւ 36 տարիքը: Մինչ այդ, ան կրնայ իրագործել նոյն ուժգնութեամբ այն պաշտօնները, որոնք ֆնունդ կ'առնեն իր մէջ, բայց խոր ապրումներու, խենթ ձգտումներու, խանգաժառ առաջադրութիւններու տարիքը հոգեբանական երիտասարդութիւնն է:

Ինչպէ՞ս կարելի է սահմանել երիտասարդութիւնը:

1.— Ամէն բանէ առաջ ազատութիւնը բնորոշում է իր եղանակով: Երիտասարդութեան առաջին եւ հիմնական

առանձնայատկութիւնն է առաւելագոյն ազատութեան ձգտումը: Ուսումնասիրեցէք Փրանսական յեղափոխութիւնէն ետք աշխարհի վրայ տեղի ունեցած ընկերային, քաղաքական ճարտարաբանական, մշակութային եւ այլ մարդերու փոփոխութիւնները եւ պիտի համոզուիք, որ այդ բոլորին մէկնակէտը ուրիշ բան չէ, եթէ ոչ երիտասարդութեան ազատ ապրելու ձգտումը:

2.— Երիտասարդական հիւանդութեան հակազդեցութեամբ:

Այս հիւանդութիւնը հոգեկան եւ բնականաբարական է: Հինէն ի վեր, մասնաւորապէս Վերջին 75 տարիներուն, եւրոպացի իմաստասէրներուն ճիշդ եղաւ մարդս փրկել այդ հիւանդութենէն, որ կը կոչուի ճանձրախոս: Երիտասարդը, մասնաւորապէս չափով մը ազատ, դարգացած, իր շրջապատին եւ ինքզինքին՝ դիտակից, իր էութիւնն ու գոյութիւնը ընկերային ձգտումներուն հետ համագործակցելու համար երիտասարդը յաճախ դժգոհանքի, ճանձրոյթի զգացումով կը համակուի:

Լաւ գործ ունի, բաւ եւ նոյնպէս իր ընտանեկան պայմանները, բայց միշտ կը արտոնայ, կը բողբոջէ մարդոց դէմ, կը մտածէ գործ փոխելու մասին, քաղաք ու միջավայր փոխելու մասին, նոյնիսկ նոր երկիր գաղթելու մասին:

Ասիկա բնական հիւանդութիւն մըն է, հիւանդութիւն մը, որուն գլխաւոր երեք պատճառներն են.— ազատութիւն, ուսում եւ տնտեսութիւն: Առանց ազատութեան, ուսման եւ տնտեսական կարելիութեան, երիտասարդը պիտի չկրնայ իր ետք ուսնացնել, մշակել եւ զայն բնկերութեան մէջ գետեղել: Ասոնցմէ մէկուն կամ միւսին պակասը՝ ենթական պիտի մղէ գլխիկոր աշխատանքի, առանց իր շրջապատին եւ իր ետին յարաբերութիւններով զբաղելու ժամանակ կամ կարելիութիւն ունենալու:

3.— Երիտասարդութիւնը պատանեկութենէն սկսեալ կը լցուի լարուող կարծախ մը նման, որ առաւելագոյն եւ լեկտրականացումին կը հասնի թարմ

տարիքին. անկէ ետք կը սկսի նուաղիլ, մեղմանալ:

Անսպառ կորով է ան եւ անսակարկ նուիրում:

Բայց ինչո՞ւ ժխտական է, ինչո՞ւ միշտ զոյճը պատրաստ է իր մօտ:

Բնկերային բոլոր օրէնքները դրուած են հիներու կողմէ, եւ դրուած են «խոհմութեամբ», վերապահութեամբ, չափաւոր ձեւով: Երիտասարդը չի կրնար մտածել այնպէս, ինչպէս կրնան մտածել փորձառու եւ չափահաս մարդիկ: Երիտասարդը կ'ըմբոստանայ, կ'արհամարհէ օրէնքը, ժխտական դիրք կը բռնէ պետութեան դէմ, երբ կը տեսնէ անօթութիւն, անհաւատարմութիւն, անիրաւութիւն:

Երիտասարդը աւելի ինքզինք բնկերութեան մէջ տեղեկու, անհատականութիւնը պահելով հանդերձ, անոր ետին խառնուելու ձգտումը ունի, առանց իր անձէն զիջելու, բայց իր անձը պաշտպանելու համար պատրաստ է պաշտպանելու բնկերութիւնը:

Ասկէ՞ հիներու եւ նորերու պայքարը:

Նորերը միշտ, բոլոր դարերու եւ բոլոր տղերքու մէջ պայքարած են հիներուն դէմ: Հիները, չափահասները, որոշ տարիքէ մը ետք կ'ըլլան նուաղ խանդավառ, յանձնապաստան, վերապահ, բղքաւ:

Այս յատկանիշներու հակազդեցութիւններն են երիտասարդական երեւոյթները: Բնական է, որ բախումը անխուսափելի դառնայ: Այս պայքարին մէջ, հիները երկու կողմն ունին.— արեւմտեւորը եւ օրէնքը:

Պայքարը պիտի ըլլար ի նպաստ երիտասարդութեան, եթէ հիները արեւմտեւորներուն տիրապետած եւ իրենց ձեռքերուն կեդրոնացուցած շրջային դժբախտութիւնը:

Ո՛չ միայն դժբախտութիւնը, այլեւ օրէնքը: Ամէն անգամ, որ երիտասարդները հասնին յողովանակի սեմին, հիները կը դիմեն օրէնքին, իշխանութեան օժանդակութեան:

Երիտասարդները չեն կրնար մտածել

չափահասի մը նման, բայց չափահասներ անցած ըլլալով այդ հանդրառանքն, կըբռնան եւ պէ՛տք է, որ փորձեն մտածել երբեմն երիտասարդի մը նման: Այս ճիղը մէծ բան պիտի փոխէ երկու սերունդներու պայքարին մէջ:

Երիտասարդները փոփոխութիւն կ'ուզեն:

Նոր չափանիշներ կը պահանջեն եւ իրենց պահանջներուն մէջ չափով մը արքար են: Արդար՝ որովհետեւ մեր արդի քաղաքակրթութիւնը նորութիւններ մը ցուցած էր ամէնօրեայ կեանքէն ներս: Նորութիւններ կեանքի բոլոր մարդերէն ներս: Հետեւաբար նոր կեանքը անհրաժեշտ է, որ ունենայ փոփոխութիւններ: Այս փոփոխութիւնները սոցիալական կըբռնուին, արդարութեան, քաղաքականութեան, ճարտարարուեստական եւ առհասարակ քաղաքակրթութեան բոլոր տարիքներուն մէջ: Փոփոխութեան ենթարկուող կեանքին հետ երիտասարդութիւնը արդարօրէն կը պահանջէ նաեւ սխալմաներու փոփոխութիւն:

Այսպէս, ճարտարարուեստէն սկսած նորութիւնները կը խուժեն ու իրենց տիրապետութեան տակ կ'առնեն մեր ամէնօրեայ գործունէութիւնը: Եւ ասիկա՝ հինները ուզեն թէ չուզեն: Բոլոր նոր շարժումները, ամբողջ պատմութեան ընթացքին կատարուած են երիտասարդներուն կողմէ: Երիտասարդութիւնը եղած է պոթիկութի, պահանջի, նորարարութեան եւ արդարութեան հեղինակը: Եթէ երիտասարդութեան կողմէ եղած են սխալները, անոնք հետեւանք են այն ծայրայեղութեանց, որոնց մէջ անոնք մխրճուած են՝ հիններու դէմ իրենց պայքարին մէջ կարծրանալով կամ երբեմն խօլարչաւ փոփոխութիւններու մէջ սոյթաքելով:

ՖԻԺՅՏՏԵԱՆ ՎԵՐԱՆԻՍՈՒՄ

Եթէ փորձենք երիտասարդութեան մօտենալ մեծ հողերան Սիկմընտ Ֆրէճյա-տի սահմանած անհատականութեան սկզբունքով, հաւանաբար աւելի ճշգրիտ

եւ գիտական ըլլանք մեր սահմանումին մէջ:

Ֆրէճյոս կ'առաջարկէ երեք հանդրառաններ մեր անհատականութիւնը կազմող: Իտ, Իկօ եւ Սիւփըրիկօ:

Իտ գումարն է մեր ընդոժին բնողդոնեան, կրթւորուն, պահանջներուն, բրնախօսական եւ հոգեբանական մեր զգացումներուն: Անոնք մարդուն մէջ կը ներկայացնեն Ֆրիդրիխեան եւ քնախօսական ամբողջութիւնը: Անոնց անմիջական պահանջումի մղումը ժարդա կը պահէ կենդանական մակարդակի վրայ:

Իկոն մարդկային են է, որ կը մեծնայ մարդ անհատին հետ, գիտակից եսը: Այս եսն է, որ կը կանգնի իտին եւ սիւփըրիկոյին դէմ, կը հաւատարմակէ անոնց պահանջները: Երբեմն կը մեղմացնէ իտին պահանջները, յաճախ տեղի կու տայ սիւփըրիկոյի ճշմարտութեան առջեւ: Մեր անհատականութիւնը կազմուած է եւ մեր անհատական արբերութիւնները չափով մը հիմնուած են իկոյի գիրքէն, թէ ան ո՞ր աստիճանի կրնայ զոտել կամ տեղի տուլ երկու համարիչը ուժերու աղդեցութիւններուն:

Սիւփըրիկոն հանրային են է, բարոյականութիւնը, ընկերային չափանիշները, որոնք մարդ անհատին մօտ կը ստեղծեն հանրային օրէնքը, անանձնական կեանք մը, կը պարտադրեն բնկերային կեանքը, կը ճշնեն իտին վրայ: Տեսակ մը ներքին պայքարի զաշտ մըն է մարդկային հողին, արտաքին աշխարհի օրէնքներու պարտադրանքներու եւ ներքին պահանջներու միջեւ:

Պատահութեան նոր ելած երիտասարդը կը սկսի գիտակից դառնալ իր եսին, իր իկոյի անկախութեան ու կարելիութեան: Երիտասարդը, որ իր անձնականութեան ճայնին ունկնդիր է ընդհանրապէս, բնականօրէն ընկերային պարտադրանքէն աւելի պիտի անսայ իր կարելիութիւններուն եւ ներքին գործութիւններու խառնուրդին, իտին: Ահա թէ ինչու երիտասարդը լեցուն է ուժակա-նութեամբ, կը համարձակի ընկերային չափանիշներու դէմ կենալ, երբեմն նոյ-

ներս կը մերժէ ենթարկուիլ սիւփրափիլոսոֆի պարտադրանքներուն: Մանուկին եւ պատանիին մօտ իսն է, որ միայն զօրաւոր է, տակաւին իկօն կազմուած չէ: Երիտասարդին մօտ երեքն ալ չափով մը զարգացած են եւ ասոր կամ անոր ի ներպատ իր կեցութեամբը առաւելարար գիտակից կեցութեամբ մըն է: Չափահասին եւ ծերին մօտ աւելի զօրաւոր է սիւփրափիլոսոֆի:

Այս իրականութիւնն է, որ կը մղէ երիտասարդը իրազործելու իր ուժերը:

ԵՐԻՏԱՍԱՐԳԻՆԻՔԻՆԷՆ, ՍԵՐՆ ՈՒ ՍԵՌԸ

Սեռային իրականութիւնը եւս դեր կատարէ երիտասարդութեան մօտ: Մեծ քննադատ Շարլ Ծուրիէ ըսած է. — Առէք քրիւժ մը եւ զայն պահեցէ՛ք հողին տակ. կանչեցէ՛ք աշխարհի 30 մեծագոյն բնկերաբան-հոգեբանները, անոնք իրենց զգացողական եւ ներքինացական թեքնիքներով պիտի չկարենան գտնել այդ քրիւժը, մինչ անդին, խող մը իր բնագոյնէն կարողութեամբ անմիջապէս պիտի գտնէ զայն:

Մարդ էակը, իր կարգին, որքան հողեկան-իմացական, նոյնքան եւ ֆիզիքական եւ կենդանական է, բնագոյնէր ունի, ձգտումներ ունի:

Մինչեւ 1940ական թուականները մանաւանդ, մարդ անհատը ուսումնասիրուած կամ նկատուած էր բանաւոր գոյութիւն մը, որոշ հոգեկան արժէքներով: Ամօթ էր անոր մէջ մատնանել սեռային ու բնագոյնէն: Կրկնուած եկաւ առաջին անգամ արար-աշխարհին զգացնելու սեռային իրականութեան կարեւորութիւնը եւ անոր անսկսումով ստեղծուած բարդութիւնները:

Արդի հոգեբանութիւնը աւելի առարկայական եւ իրապաշտ ըլլալով ապացուցանեց, որ մարդս ընկերային կենդանի մըն է, անոր մէջ կենդանականի գոյութիւնը անուրանալի է եւ համազօր իմացական-հոգեւոր գոյութեան: Ժա-

մանակն է, որ ընկերութիւնը իր արժէքներն ու շափանիչները պահպանելու ճիգին մէջ՝ իմացական եւ հոգեկան գերադասութեան տակ չճշմէ երիտասարդին բնագոյնէն ապրումները:

Պէտք է սեռային իրականութիւնը բնորոշուի եւ անջատուի ամօթէն:

Այս ուղղութեամբ անհրաժեշտ է սեռային դաստիարակութիւն մը, հարցը մարդկան տգիտի եւ չափաւոր հիմերու վրայ դնելու համար:

Մտերմութիւնը երկու սեռերու միջեւ քաջալերելի է այսօր: Այս մտերմութենէն խոյս տուողները երէկ համբաւ ունէին իրենաւ տոկուն բարոյականի եւ ուժեղ նկարագրի տէր անհատներ, մինչ այսօր անոնք կը նկատուին բարդութիւն տէր եւ դարձանումի կարօտ:

Ահա թէ ինչու երիտասարդական բոլոր հարցերը կը սկսին սեռային հարցի քննութեամբ, որովհետեւ սեռային հարցը երիտասարդութեան ամէնէն բնորոշիչ հարցերէն մէկն է: Հարց մը, որուն քննութիւնն ու վերլուծումը կը պահանջեն անկեղծութիւն, գիտականութիւն եւ քաջութիւն:

Ձեռք կարծիք, որ անցեալին մէջ մարդ անհատը այս հարցին կարեւորութեան գիտակցութենէն զուրկ եղած է, բայց զոհը դառած է միւս կրօնական եւ իմաստասիրական ճնշումներով կերտուած բարոյական չափանիւններուն:

Այսօր, այս նոյն հարցը մեղի կը ներկայանայ շափազանցեալ շրջանութեամբ: Շուէտի մէջ, աշխարհադրութեան, պատմութեան եւ բնական ալլ զիտութիւններու կողքին՝ կանոնաւոր կերպով կը դասաւանդուի սեռային գիտութիւնը:

Սեռային կեանքը կար. «ի սկզբանէ էր սեռը եւ սեռը ծնունդ տուաւ սիրոյ»:

Ընկերութիւնը ուզէ կամ ոչ, իր կամքով թէ ի հեճուկս իրեն՝ երիտասարդները ազատ հանդիպումներ կ'ունենան եւ պիտի ունենան, պիտի սիրեն զիրար, պիտի երջանկանան եւ պիտի բաժնուին:

Այս հարցերուն կապակցութեամբ,

կահելու: Ան էր, որ առաջին անգամ հնչեցրտ Կապանից, թէ չափահասու-
միւրն Ծրէշտան է, որ պէտք է օգնութեան
թան ղրջնաին շատ ժը հոգեթան խոն-
գարումներ իրենց յետադարձ խոր պատ-
ճառները ունին, որոնք յաճախ խաբար-
խըւած են սեղանին խնդրի մը փայլ: Ըն-
կերային բարոյական մարտադրանքներն
են, որ տարիներով պարզուան սեղանին
զգացուցմանը կապանքներու տակ առած,
հնչած ու ճշմիտ փորձած են, բայց իրենց
հնչուած իմաստին մէջ իսկ անոնք մնա-
նած են միջը ենթագիտակցութեան մէջ եւ
դարձած են մօթերէրներու տակ անթիշ-
ուած կրակ: Այսօր, բարեբախտաբար,
հոգեբանութիւնը գիտական եւ առար-
կայական տառա փաստագրութիւններով
կու գայ ապացոյցանելու, թէ հմաձորի-
նակ պատճառներէ եկած ամէն խաղա-
րած ենթական կրնայ տանի ստալին
գանաղան թիքումներու եւ պատճառ
դառնալ լուրջ բարդութիւններու: Պնա-
գարուած ենթական կրնայ նորիսիկ ա-
տոլնորդել ոճբարային կամ ալլ անպատա-
խանաուու ռաբրըներու:

Մանուկը իր բնական եւ հոգեբանական ընթացքով պէտք է աճի, բարեւերը չրսի: Այս ամբողջ առումներով պէտք չէ խանգարել ընթացիկ ծնողների անհրաժեշտ եւ անհրաժեշտական ազդեցություններով, որոնք բարոյական չափանիշներու ամուր-նով երկրորդ աստի են պարտադրուած են սե-
նակներին:

Այսօրուան երիտասարդական դեր-
քուղուան մէջ պէտք է նկատի ունենալ
նաեւ, որ երիտասարդը հաստատու
վրայ կ'ուզէ անոնիւ եւ յարգել իրեն
բախտակից երիտասարդուն: Մասն-
աւորի այս նորարարութիւնը բոլորովին
նոր գոյգոյմանի մը կը ստեղծէ նոր սե-
րունդի բարոյական ըմբռնման մէջ. ուս-
տի՝ երիտասարդական նոր ասլիքակերտ-
այլ պէտք է փնտռել հաստատութեան
այս ձգտումին մէջ, արդարութեան այս
տենչին եւ կրկու սեռերու համար մէկ
բարոյական յայտարարել հաստատման
այս ճիշդին մէջ:

Միևեւ երէկ, ամուսնութիւնը միտ-

կողմանի ընտրությունն հարց ծրն էր: Արական սեռն էր այդ ճակատագրական հանդիսանիսն զվառադ գերակատար: Իր որդւնն էր միակ ընդունելին եւ նկատուելին: Ամուսնութիւնը զ շշտակեր Խորհրդացուրը կնոջ: Կացութիւնը փոխւած էր տշտը: Արդի երիտասարդը ամուսնութեան սկսած է մօտենալ իբրեւ երկու սեռեանս փոխադարձ ազատուելանքի եւ հաստատարադ որդւման մէջ յապանանդութիւն:

Իդական սեպը իր կարելին կ'ընէ Ե-
րիտասարդական աշտ տաշտուպին մէջ ոչ ո-
թէ անպիտան երկրորդական սեռ ըլլա-
նալ իր ընտիրականին իրականութենէն
զուրս գալու, այլ իր տեսակէտները
յարդու տալու, ընտրութիւն կատարելու
ագտուութիւն իր իրաւունքը պարտադրե-
լալու ։

ՊՈՐԹԿՈՒՄ ԵՒ ՀԱԿԱԶԴԵՑՈՒԹԻՒՆ

«Զղագարութիւնը, այսօր, երկուսարդութեան մօտ կը ներկայացնէ այն վտանգը, ինչ որ էր պատերազմներէն առաջ թմբախօր»:

Հոգեկան անդորրուժիւնը պահպանելու համար՝ ընկերութիւնը առաջնութեամբ պարտականուի թիւն պէտք է նկատուի մեայուն հասարակչութիւնը ստեղծելու մեր հաճութեամբ ձգտումներուն եւ ընկերային պարտաւորութիւններուն միջեւ: Այլ խօսքով՝ մեր եւ հաւաքականութիւնը եթէ այս հասարակչութիւնը պահպանել կարելի չըլլայ, այն աստի է, որ կը ստեղծուի անընկերայնութեան հիւսնաքարք: Այս հիւսնաքարքի վրայ աւելի կը շէտտուի, երբ քոկեւրութիւնը կարեւորութիւն չունայ երկուստեայ քարտէսներ եւ երկուստեայ քարտէսներ մէջ ստեղծուած դիւր հեղուկութիւնը խորանայ եւ առաջացնէ քաղաքակրթութեան տարածումը մը:

Ընկերութեան եւ իշխանութեանց
դէմ երկտասարդութիւնը զօրութիւն մը
է, պաթուշիկ զօրութիւն մը:

Երիտասարդութիւնը ճշմարիտ յե-
ղափոխութեան ձեռնարկած է բոլոր յա-

առջադէմ ընկերութեանց մէջ: Հսկաքննիչներուն բարոյականութիւնն էր:

Այնքան բուռն է ընկերութեանն եւ բիւսնէսային շահերը անհատականութիւնը, որ վերջինը միայն «նշ» կ'ըսէր ամէն առաջարկի, «նշ»՝ դրական թէ թաւական նախաձեռնութիւններու:

Երիտասարդ զօգնչներու այս մեծ միութիւնը հետզհետէ կը զօրանայ, բանակ կը դառնայ, կը ծառանայ ընկերային ծառայական իւրաքանչիւր տնկ՝ զէմ, կը ծառանայ նոյնիսկ հայրենիքի սրբութիւններուն դէմ:

Ընկերային իրենց թուաբանական հաշիւներով եկած են այն եզրակացութեան, թէ առողջ ընկերութիւնն էր ինքնաբերաբար ծնունդ կու տայ առողջ երիտասարդութեան, առողջ անհատներու: Բայց մեր դարու երիտասարդութեան վատագոյնութեան պատճառները միայն ընկերութեան անարդարութիւնն ծնունդ չեն առներ, այլ նաեւ այն որպէս փոփոխութիւններէն, որոնք գլխաւորապէս պատճառող թափով կու գան հազիւ կեանքին քաջութեամբ մատուցող սերունդները իրենց անպնայան յարձանքին մէջ առնելու: Եւ ստեղծուած այս թեքութիւններով իսկ երիտասարդութիւնը կը հասնի տեղ մը, ուրկէ միայն խէթ աճքով կըրնայ դիմել զինք ծնած, բայց իրեն խորթ թողող ընկերութիւնը:

Ընկերութիւնը սակայն երիտասարդական հարցերուն պատասխանելու իր անդորութիւնը խոստովանելու քաջութիւնը չունենալով՝ դանդաղ կը թաքցնէ իր փոխ վրէժի հակադրեցութեան մէջ: Միւս կողմէն երիտասարդը ոչ մէկ պիտի մ'ուզէ ընել եւ իր այս կարուկ կեցածքը կը բախի ընկերութեան քարայրած աւանդապահութեան:

Կարելի չէ դատապարտել երիտասարդութիւնը: Աւելի ճիշդ պիտի ըլլար մտածել արտաճանաչման մասին, իսկ

հիւանդութեամբ տառապողը, այս պարագային, երիտասարդութենէն աւելի ընկերութիւնն է: Ընկերութիւնը հիւանդ է ո՛չ թէ անոր համար, որ հիմնուած է սխալ արժէքներու վրայ, այլ որովհետեւ դատապարտութեան հիմը դրուած չէ անկեղծութեան վրայ: Ինք՝ ընկերութիւնը, առաջին դատապարտելի ու դատապարտութեան մարմնացումը առաջին ուրացողն ու հակասողն է ա՛յն դատապարտութեան, որով կ'ուզէ հոգեկան անբարեկեցիկ պատրաստել: Երիտասարդը կը տեսնէ, կը հաստատէ այն հսկայ կեղծիքը, որուն վրայ բարձրացնել կը փորձեն ընկերային, բարոյական կրօնական եւ մարդկայնական այլ չափանիշներ, կանոններ:

Այս կեղծիքին պիտակից, այս դատաբար խաբէութեան իրադեպ եւ քաղաքակրթութեան քողարկուած չարիքներուն դէմ ծառայող երիտասարդը կ'ուզէ վերադառնալ իր հաւաքական ենթապատկերութեան, նախամարդու կեանքին, ուր ազատ շարժում կար, որ աւելի անկեղծ էր եւ աւելի արտայայտիչ իր բնականութեան մէջ, քան լեզու: Այդ ճիշն ու ազատ շարժումները, որոնք մարդկային կեանքի գլխաւոր յատկանիշները հանդիսացած են դարեր շարունակ, դրսուրեցան քաղաքակրթութեամբ, զսպուեցան իմաստասիրութեան մարդանքներով: Այս մարդանքները ա՛յնքան հեռացողին մարդը մարդկութենէն, որ արհամարհեցին, մոռցան անոր մէջ կենդանականը եւ նոյնիսկ դայն հոգեկեցիկ միայն բանականութեամբ երաշխաւորեալ պոյութիւն: Այս սխալով օրորուեցաւ մարդկութիւնը քանի մը դար, մինչեւ որ վրայ հասան բնապաշտական ժրջատուները, որոնցմէ ծնունդ առին բոլոր յեղափոխութիւններն ու բոլոր հոգեբանական թէ ընկերային, անհատական թէ հաւաքական հակադրեցութիւնները:

(Շար. 1)

Ա. ՏՕՆՈՅԵԱՆ



ԺԱՆ ԺԸՆԷ

ՄԱՐԹԻՆ ԷՍԼԻՆ

ԺԱՆ ԺԸՆԷ

ՀԱՅԵԼԻՆԵՐՈՒ ՍՐԱՀ ՄԸ



ՀԱՅԱՍՏԱՆ

ԷԼՕ ՍԱՐԱՃԵԱՆ

Իր ամենին անձնական գիրքերին մէկ-կուն՝ «Գոռլին օրագիրը» (Journal du Voleur) անուն ինքնակենսագրական գործին մէջ, Ժան Ժընէ կը նկարագրէ, թէ ինչպէս առիթով մը հանդիպած է բարձրորակասակ, անձնեայ, միաձեռանի, կաւատ, գող եւ դեղահատերու փերեզակ Սթիլիթանօ անունով սերպին, որ իր երիտասարդութեան շրջանին հերոսներէն մէկը եղած էր, կորուսած հայելիապատ սրահի մը տախտակամածին։ Ասիկա այն լարերինթոսներէն մէկն էր, որ կառուցւած է մասամբ հայելիապատ, մասամբ թափանցիկ ապակիէ շերտերով, որոնք դասաւորուած են այնպիսի՝ ձեւով մը, որ դուրսի ամբոխը կրնայ հետեւիլ ներսի բոլոր դռներուն, որոնք կը փորձեն գտնել այդ անելին դուրս գալու ելք մը։ Այսպէսով է, որ Ժընէ կրնար հետեւիլ անասունի մը երեւոյթի պարզող թակարդի մէջ բռնուած Սթիլիթանային, կրնար զայն տեսնել, բայց բնաւ չլսել անոր մօնչացող ու կատաղի անէծքները, մինչ դուրսը խոնուած հանդիսատեսներու հակայ ամբոխը խնդալէն կը պայթէր։

1949ին, կայիմարի լոյս ընծայած «Գոռլին օրագիրը» գործին մէջ, Ժան Ժընէ կը գրէ․

«Սթիլիթանան առանձին էր։ Իրմէ գաւտ ամէն ոք գտած էր ելքի նամբան։ Զարմանալիօրէն տիեզերքը մթազնեցաւ ինծի համար։ Ստուերը, որ յանկարծօրէն իջաւ նիւթերու եւ ամանքու վրայ, իմ առանձնութեան ստուերն էր, հակադրւած՝ յուսախարութեան, քրովիտուր, այլիւս անկարող պոռալու, գործելով իմ գիւնի ապակիէ պատերուն, հաշտուած երախարաց ամբոխին համար ծաղրածու մը ըլլալու զաղափարին հետ, Սթիլիթանօ երկնցած էր տախտակամածին վրայ, մերժելով շարունակել այս խաղը․․․»։

Այս պատկերը կը բացատրէ Ժընէի թատրոնին էութիւնը, հայելիներու անելին մէջ ինչպէ՞ս մարդուն պատկերը, թակարդի մէջ բռնուած իր սեփական անձին խեղաթիւրուած անդրադարձներով։ Ան կը փորձէ հաղորդակցութեան միջոց մը գտնել անո՛նց հետ, որոնք զինք չըմպաւորած ըլլալով հանդերձ, կողմաօրէն ապակիին միւս կողմը կը մնան։

(Ժրնէ անձնայէս օգտադործած է Հայե-
լիները՝ իր «Ատամ Միրուար» անուն պոե-
լէի սեմաքիոյն մէջ)։ Իր թատերախո-
ղերը կ'արտայայտեն յուսաբեկութեան
եւ աւանանջութեան իր զգացումները, հա-
կադրարար յուսախաբութեան ու մինա-
կութեան մէջ եղող ա՛յն մարդուն, որ ին-
կած է մարդկային կացութիւնը դրսեւո-
րող Հայելիներու սրահին մէջ, անողո-
քելիօրէն թակարդուած պատկերներու
անփերջանալի յաջորդականութեան մը
մէջ, որ իր անձին խեղաթիւրուած անդ-
րադարձներն են, ուր սուտերը կը թո-
ղարկէն սուտերը, երեւակայական պատ-
կերները ծնունդ կու տան երեւակայա-
կան այլ պատկերներու, մղձաւանջային
կացութեան մը մէջ՝ մղձաւանջները կը
սնուցանեն այլ մղձաւանջներ։

Անիծեալ քանաստեղծներու (poètes
maudits) սմբողը շարքին մէջ, որ Ֆրանս-
ական դրահանութեան մէջէն կ'անցնի
կարծիք թելի մը նման, Վիլյոնէն մինչեւ
Սառ եւ Վերլէն, մինչեւ Րեմպօ, եւ
Լոթրէամոն, Ժան Ժրնէ վստահարար
ամէնէն տարօրինակն է։ «Ուրամուս մո-
լորակիմ վրայ» ան կը գրէ։ «Մթնոլորտը
այնքան ճնշիչ կը քաշի... որ անասուն-
ները կը քաշկաւառուին ճնշուած կազերու
ծանրութեամբ տակ ճգմուած զգալով ի-
րենց գիրենց։ Իրենց փոքրիմ վրայ առա-
ջող այս նուաշտ արարածներուն մէջ է,
որ խառնուի կ'ուզեն։ Եթէ հագիններու
աշակերպումն մէջ ինձի առաջարկուի
քնակութեան նաք վայր մը, առանց վա-
րանումի եւ պիտի ըմտրեմ այդ անիծեալ
մոլորակը՝ գայն լեցնելու համար իմ ցե-
ղիս դատապարտութեանը»։

Ժան Ժրնէ ծնած է Փարիզ, 19 Դեկ-
տեմբեր 1910ին։ Ան լքուած էր մօրմէն
եւ գիւղացի իր խորթ տղակահներուն
կողմէ բերուած էր Մորվան, Մասիֆ
Սանթրուի հիւսիսը։ Երբ 21 տարեկան
եղաւ, իրեն յանձնեցին իր ծննդեան վը-
կայադէրը։ Այդ վկայագրին շնորհիւ է,
որ ան գիտցաւ, թէ մայրը կը կոչուէր
Կառլին Ժրնէ, եւ թէ՛ ինք ծնած էր Ա-
սաս փողոցին թիւ 22 տան մէջ, Լիւք-
սէնպուրկի Պարտէզին ետին։ Երբ քնաց

դռնելու այդ տունը, անկէս արդէն վե-
րածուած էր մայրանոցի մը։

Ժան Ժրնէի նուիրած իր կոթողական
ուսումնասիրութեան մէջ, որ մեր դա-
րուն ամէնէն աւելի ապշեցուցիչ գիրքե-
րէն մէկն է, Ժան-Փօլ Սարթրը կը նկա-
րագրէ, թէ ինչպէս տասը տարեկան այս
պատանին, որ մինչ այդ կը նկատուէր
բարեպաշտ եւ հյուս, կ'ամբաստանուի
զոդութեամբ, եւ որովհետեւ զինք կը
ներկայացնեն իրրեւ զաւ, ան կը մեծ
ըլլալ իրական գող մը։ Սարթրի համար
ստիկա զոյապաշտ ընտրութեան մեծա-
զոյն արարքն էր։ Ժրնէ ինք եւս կը մո-
տենայ այս հարցին, բայց նուազ իմաս-
տասիրական եղանակով մը։ «Իմ կեան-
քիս արեւէ մէկ մասնաւոր շրջանին չէր,
որ այդպէս գող մը ըլլալ։ Իմ ծաղու-
քիս եւ ցերեկային երազանքներս ա-
ռաջնորդեցին զիս Միքթի ուղղիչ տու-
նը, ուր պիտի մնայի մինչեւ 21 տարե-
կան հասակս։ Այդ տարիքիս խոյր տուի
ուղղիչ տունէն, եւ սքովեստեւ ճոյն գոր-
ծին մէջ կրկին փորձեցի քաշտու, երկգ
տարի եւս դատապարտուեցայ ուղղիչ
տունը մնալու պատիժին։ Օտար Լեգէո-
նին (Foreign Legion) մէջ քանի մը օր
մնալէ ետք, դասալիք եղայ՝ եետս տա-
նելով նեկրօ պաշտօնակիցի մը պայու-
սակները։ Ատենի մը համար սիրեցի գա-
ղութիւնը, բայց պոռնկութիւնը անլի
քիւրացուց կեանքի իմ ձեւս։ Ես քան
տարեկան էի...»։

Բայց զոյապաշտ ընտրութեան հիմ-
նական կէտին մէջ, Ժրնէի հաշիւը կը
համապատասխանէ Սարթրի հաշիւնե-
րուն։ «Լէֆուս իմ ընտանիքէս, եւ քնա-
կան գտայ արաններու համդէպ իմ ունե-
ցած սէրով, առաւել՝ զազաքեան հան-
դէպ մասնաւոր հակումով մը ծանրացնել
այս դէպքը. եւ զուգակ՝ ռեթրով, կամ՝
ռեթրին մեղսակից դառնալով։ Այսպէ-
սով վնասակարէն մերթեմի աշխարհ մը,
որ մերժած էր զիս»։

1930էն 1940 երկարող ժամանա-
կամեջոցին, Ժրնէ վարեց վերկապած դա-
տարկապարտի մը կեանքը։ Պարչեղոյնայի
Պարիս Զինոյի մէջ, չլքան մը մուրաց-

կանններու եւ փերեզակներու հետ ապրեալ է ետք, փերադարձաւ Թրանսա եւ Ֆրանսական բանտին հետ ունեցաւ իր առաջին փորձառութիւնը. ապա՝ զնաց Իտալիա, անցնելով Հռոմէն, Նափոլիէն եւ Պրիմաօլիէն, հասաւ Ալպանիա: Քորֆու մտնելու արտօնութիւն մերժուած ըլլալով իրեն, անցաւ Եուկոսլաւիա, Աւրուսրիա եւ Չեխոսլովաքիա: Լեհաստանի մէջ կեդծ գրամանիչեր շրջապատութեան զնեղ փորձեց, բայց անմիջապէս ձերբաւարուեցաւ եւ արտաքսուեցաւ: Հիթլէրական Գերմանիայ մէջ ինքզինք խորթ զգաց: «Նալմիսկ Անթըր տէն Լիմտրեի մէջ աւազակներու կողմէ կազմակերպուած ճամբարէ մը ներս գտնուած ըլլալու զգացումը ունեցայ... Ասիկա գողերու ցեղ մըն է, զանէ՛լ ալը եղաւ իմ տպաւորութիւնս: Եթէ ես գողութիւն ընեմ, մասնաւոր ալարք մը գործած չեմ ըլլար՝ ինքզինքս իրագործելու եամար: Պարզապէս հնազանդած կ'ըլլամ իրերու տաւորանքն ըմբոսցիմ: Ես չեմ քանակեր ալը կարգը»: Եւ այդպէս, ան փութաց քաղաք մը, ուր մարդիկ դեռ կը հետեւէին բարոյական օրինաբար մը եւ, ուրեմն, ապօրէն կեանք մը վարողին համար դժուար պիտի ըլլար հաստատուած կարգի մը մէջ ապրիլ: Գնաց Անթրոպոլ, ուր մնաց ասեմ մը՝ Թրանսա փերադարձալէ առաջ:

Գերմանական դրաման ասեմ, Ժընէ փոխ առ փոխ կը մտնէր ու կ'ըլլէր բանա: Բանան էր, որ Ժընէի մէջ կերտեց բանաստեղծ մը: Անդամ մը, երբ դեռ դուրս կը դառնէր, ան Սարթրին ըսած է, թէ իրեն սխալմամբ տուած էին բանտարկեալի հազուատներ եւ բռնօրէն նետած խուց մը, ուր բոլոր բանտարկեալները դատաւարտուած չէին դեռ, որովհետեւ կը կրէին իրենց սովորական հազուատները: Այսպէսով, ինք կ'ենթարկուէր հեղինակի ու արհամարհանքի: Այս բանտարկեալներուն մէջ կար «մէկը, որ բանաստեղծութիւններ կը սօցէր իր քրոջ, յիմարակամ եւ ինքնախոնարհութեամբ տարբեր քովանդակող բանաստեղծութիւններ, որոնք մեծ իրացումի ն'արժա-

նամային: Հետագային... յայտարարեցի, որ ինքս նաեւ կրնայի նայմամ լաւ բանաստեղծութիւններ յօրինել: Անոնք փորձեցին գիտ եւ գրեցի իմ «Մահապարտը» (Condamné à mort) բանաստեղծութիւնը, երկարաշունչ եւ հանգիստեւոր ողբ մը՝ ձօնուած Մօրիս Փիլիպի յիշատակին, որ իր ընկերը սպաննած ըլլալու յանցանքով՝ 17 Մարտ 1939ին, Սէն Պրիէօ բանտին մէջ մահուան դատաւարտուած էր:

Այս բանաստեղծութիւնը ունի տարօրէն ծխական ու թովիչ որակ մը: Անիկա ունի կրօնական արարքի մը մթին շեղութիւնը, անոր յանգեցրը կարծես ունին մոգական ուժ մը, որով մեռած անձ մը կրնայ կեանքին վերադառնալ: Նոյն յատկութիւնը ներկայ է միւս չորս երկարաշունչ արձակ բանաստեղծութիւններուն մէջ (որովհետեւ անոնք աւելի արձակ բանաստեղծութիւններ են, քան վիպականը, ինչպէս յաճախ կը կոչուին) զորս Ժընէ գրած է 1940-48ի միջև: «Մալիկներու Տիրամայրը» (Notre-Dame-des-Flours), գրուած՝ Թրենէի բանտը, 1942ին, «Վարդիկն հրաշքը» (Miracle de la Rose), գրուած՝ Լա Սանթէի եւ Թուրէի բանտերուն մէջ, 1943ին, «Յուդաքիաւարական գործակալութիւն» (Pompes Funébres) եւ «Պրեսի վեճը» (Querelle de Brest): Այս բոլոր գիրքերը ունին պոստուածքներու ձեւ եւ իրենց նիւթերը քաղած են օրէնքէ դուրս հռչակուած միաստեղծութիւններու աշխարհէ մը: Եւ դեռ, վիպականը ալ չեն անոնք, որովհետեւ, ինչպէս Ժընէ անձնապէս խոստովանած է Սարթրին՝ «Եւ տիպարներու յետէ մէկը առանձինն որոշում մը չ'առնիր», ուրիշ խոսքով՝ տիպարները զիրենք ստեղծողին քմահաճութիւն պարզ դրսեւորումներն են: Իրականութեան մէջ, այս հատորները բանտարկեալի մը էքսպրիկ հրեակայութիւններն են, ընկերութեան գուրս չ'արտուած մենակեացի մը ցնորքները, ա՛յն մենակեացին, որ դատաւարտուած է ապրիլ ընկերութեան կողմէ իրեն պարտադրուած կեանք մը: Կասկած չ'կայ, թէ այս

գիրքերուն մէջ կայ փարսկան գեղեցկութեան եւ չափազանց դճնիկ իրապատումներն մը Հետաքրքրական խոսքեր: «Եւ ամբաստանաւած եմ, — կը գրէ Ժընէ «Գոգիմ օրագիրը» գործին մէջ, — ա՛յն մեղքով, որ շահագործած եմ ստացումները մշակի մը, նաեւ բանտերը, ծաղիկները, սրբապղծութեան ատարը, կայարաններ, սահմանադրութեան, ափսոս, նաւատիրներ, մաւանդակներ, անմարայիմ լոգարաններ, յուղարկարարութիւններ, կասկածելի սեմեակներ, արայէսգի ռեննաւ եղերագրութեան միջոցով անգիտութիւններ եւ դիրքիմ ստացումներ անարագութեանը պատճառով անմարայիմ մը: Ի՞նչ կրնամ պատասխանել: Արդէն ըսած եմ, թէ որքան կը սիրեմ անօրէնները, որոնք քաղի իրենց մարմիններէն արիշ գեղեցկութիւն չունին: Վերայիշեալ ստացումները յիշեմ մարդոց բոլորութեամբ եւ կաշտութիւններով...»:

Ժընէի Էրոթիկ, կուտ, աղտեղի արձակը նոյն առէն Բարձրօրէն բանաստեղծական է, Հակագրութեան կրօնական հանդիսաւոր միջոցով մը: Բառ մը չըլլաւ իմաստով կը գործածուի, որուն մէջ նպատակադրուած տնարդ թիւաբար կը հետապնդուի սրբազան գոհաբերումով: Ճիշդ այդ պատճառով, «Սուրբ Ժընէ» (Saint Genet) խորագրեալ վերլուծական իր ուսումնասիրութեան մէջ, Սարթր այնքան առաջ դրած է, որ բաղդատութիւն մը բրած է Ավելլայի Սէն Թէրէզի եւ Ժընէի միջեւ, Հասնելով ա՛յն եղբայրականութեան, որ, եթէ սրբութիւնը կը կայանայ մարդկային կացութեան մեղաւորութեան ամբողջական ընկալման եւ բացարձակին առջեւ Հպարտութեան առնչման մէջ, ապա ուրեմն սրբութեան դէմ Ժընէի բողոքը նախընտրելի է:

Թող այդպէս ըլլայ: Գրի առնելով իր Էրոթիկ երեսակայութիւնները, այլակերպելով ցնորքները իրենց սեփական կրօնով, գոյնով, եւ պահանջուած ներքին աւարկականութեամբ գրուած նախադասութիւններով, Ժընէ գիտէ տի-

բապետել երազներու իր աշխարհին, ինչպէս կը Հաստատէ Սարթր:

«Վարակելով մեզ իր մեքէին սատանայով՝ Ժընէ ինքզինք կ'ազատագրէ ամէն: Իր գիրքներէն իւրաքանչիւրը սեփականութիւններ լուծող տագնապ մըն է, այնպէս կը թուի, թէ իւրաքանչիւր գիրքը պարզապէս նախորդին կրկնութիւնն է, ճիշդ այնպէս, ինչպէս ամբար սիրային այնպիսի լուծողութիւններուն կրկնութիւններն են պարզապէս: Բայց իւրաքանչիւր գիրքին մէջ արիշ իմ պատկանող այս մարդը աստիճանաբար սատանայիմ տէրը կը դառնայ եւ սատանան իր տրամադրութեան տակ կը մնայ: Տաք տարուամ գրականութիւն մը կը հասնապատասխանէ հոգեվերլուծական դարմանումի մը»:

Նշանակալից է յիշել, թէ իր վրայ իշխող նախապաշարումներէն ազատագրուելու աստիճանական ընթացքին, Ժընէ բանաստեղծութենէն անցած է արձակին, ի վերջոյ յանդիմաւ Համար Թատերգութեան:

Այս երեսոյթին իբր արդիւնք՝ ամէնէն ենթակայական ձեւէն գէշի աւելի աւարկական ձեւերու վարդապետ մը կ'ունենանք: Իր «Գոգիմ օրագիրը» աւարտելու շրջանին (չուրջ 1947ին), Ժընէ կրցաւ ըսել Հետեւեալը. «Վերջին հիմք տարիներու ընթացքին, եւ գիրքեր կը գրէի, կրնամ ըսել, թէ համոզեալ բոլոր այդ բոլորը, բայց յետոյ հրաժարեցայ: Գրելով ստացայ ա՛յն, ինչ որ կը փրկուէի...»: Ատկէ ի վեր Ժընէ արձակ չէ գրած: Սակայն կը շարունակէ գրել Թատերգութիւններ: Իւ միայն իր Թատերգութիւններուն մէջ է, որ ինքզինք կըրցած է անպատգմելի դուտ ինքնակենսագրական նկարագրէ՝ բանտերու եւ միասեռական տնօրէններու աշխարհէն:

Ժընէի առաջին Թատերգութեանը՝ «Մահապարտիմ պահապան» (Haute Surveillance) գեո խարսխուած կը մնայ այդ աշխարհին մէջ: Միայն, երկար Թատերգութիւն մըն է, որուն գործողութիւնը տեղի կ'ունենայ բանտի մը խո-

ցին մէջ: Անոր թեման ժընէի արձակէն մեզի ծանօթ ոճերի նուիրապետութիւնն է զարձեւել, ոճերի զանազան մեւերը: Ժընէի ցնորքներուն մէջ, բանալը կը համապատասխանէ արքայական պալատի մը: Քառասորկեային համար քանտը կը ներկայացնէ ապահովութեան այն գագաթունը, որ արքայական պալատ մը կ'ընծայէ արքայի մը հիւրին... Օրէնքներու անբեկանելիութիւնը, ամենց նեղմտութիւնը, ամենց նշարաւորութիւնը ունին արքայական դատարանի մը մէջ գործադրւող էթիքէթին կենսական որակը, քրտն բացարձակ, բայց բնաստիական քաղաքականութեան եմքալայ է արքունի հիւրը:

Ժընէի համար կայ նաեւ կայուն օրէնք մը բանտարկեալներու նախադրութեան մէջ: «Մահապարտին պահապանը զործին մէջ բարձրագոյն աստիճանի դրաւորը դուրս կը մնայ տեսողութենէ: Այս մէկը Զիւնազնդակն է, ամբաստանած ոճրագործը, սեւամորթ մը: Ուսցը, ուր տեղի կ'ունենայ զործողութիւնը, ունի բնակիչներ, որոնք կը լողան Զիւնազնդակն անտեսով այս կուռքէն ցոլացած փառքին մէջ: Երեք հոգի են: Կոնաչ Աշքերը ինք եւս ոճրագործ մըն է, բայց աւելի ցած դասակարգի մը վրայ, քան Զիւնազնդակն, որ շահու համար կը սպաննէ, մինչ՝ Կոնաչ Աշքերը ինքնամոռացութեան վայրկեանի մը մէջ պարզապէս սպաննած է պոռնիկ մը: Լէֆրանը զոգ մըն է, եւ Մօրիսը միայն 17 տարեկան վրիպած պատանի մը: (Ֆրանսական հրատարակութեան մէջ՝ Կոնաչ Աշքերը նկարագրուած է իբրեւ շատ գեղեցիկ մէկը, Մօրիսը՝ իբրեւ փոքր, գեղադէմ. եւ Լէֆրանը՝ իբրեւ քարճրանասակ, գեղեցիկ: Այս ցուցմունքները, որոնք բարձրօրէն յատկանշական են ժընէի քով, ամօթաւորօրէն զանց առնուած են ամերիկեան հրատարակութեան մէջ):

«Մահապարտին պահապաններն նիւթը երեք բանտարկեալներու միջեւ գոյութիւն ունեցող կապին շուրջ կը դառնայ: Մօրիսը կը պաշտէ Կոնաչ Աշքերը, որ զիւնէ, թէ ինք մահուան պիտի դա-

տապարտուի եւ նոյնպէս պիտի գլխատուի: Եւ որովհետեւ Կոնաչ Աշքերը անդրադէտ է, Լէֆրանը, որ նամակներ գըրած է անոր կնոջ՝ կը նախանձի Մօրիսին: Լէֆրանը ոգտադրած է Կոնաչ Աշքերուն կնոջ ուղղուած նամակները, փորձելով հմայել զայն, բայց չէ փորձած տյնքուն տուջ երթալ, որ քանդէ առնոց ամուսնական կապերը: Երբ Կոնաչ Աշքերը իրազեկ կ'ըլլայ եղբւորեան, կը թելադրէ, որ կամ Մօրիսը եւ կամ Լէֆրանը պէտք է, որ սպաննեն իր կինը՝ իրենց ազատ արձակումէն ետք, որ քանի մը օրերու խնդիր էր:

Երկուքէն, որ մէկը քաջութիւնը պիտի ունենայ դառնալու ոճրագործ մը իրենց կուռքին սիրոյն եւ յանձն առնելու կառաքինատի հաւանական վտանգը, ինչպէս կ'ընէ անոր ամուսինը: Բայց յետոյ Կոնաչ Աշքերը կը հրաժարի այդ մտքէն: Ան կը պատմէ իր գործած ոճիւրին պատմութիւնը — ինք սպաննած է պոռնիկ մը կատաղութեան ախպիսի սաստիկ վայրկեանի մը մէջ, որմէ չէր կրնար խուսափիլ: Երբ պահակը կը բերէ իրեն սիկարէթներ վաւերական ոճրագործէ մը՝ Զիւնազնդակն, Կոնաչ Աշքերը իր կինը կը կտակէ պահակին: Հերոսապաշտ պատանին՝ Մօրիս, խորապէս յուսախաբւած է իր հերոսին ինքնաքանդումէն: Յոյց տալու համար, թէ ինք եւս իսկական, չոր եւ կարծրասիրտ ոճրագործ մըն է, Լէֆրանը, որուն Մօրիս հաւատացուցած է այն իրողութեամբ, որ ինք երբեք անոնցմէ մէկը պիտի չըլլայ («Դուն մեզիս պիտի չես: Դուն բնաւ պիտի չըլլաս: Եթէ նոյնիսկ դուն մէկը սպաննած ես»), պաղտիւնութեամբ հեղձամահ կ'ընէ տղան: Կոնաչ Աշքերը դեռ կը մերժէ վաւերական ոճրագործ մը համարել Լէֆրանը: «Ես չուզեցի (իմ սիրը), — կ'ըսէ ան, — անիկա, տնիւրը ընտրեց զիւն: Միւս կողմէ Լէֆրանը կը պնդէ. «Իմ գրծախտութիւնն աւելի խաբուցի քան մը կու գայ: Անիկա կու գայ իմ տնակէ»: Կոնաչ Աշքերը ոչինչ կ'ուզէ ընել հետք. թատերախաղը կը վերջանայ Լէֆրանի իրականութեամբ.

— Ես իրապէս բոլորովին առանձին եմ:

Այսպէսով, Ժրնէի առաջին թատերախաղը ամբողջովին թատերականացւած ձեւն է պատմուածքին, զոր ինք կը պատմէ ոճրագործներու եւ դատասարտեալներու մասին՝ իր քնարական արձակով: Մակերեսային մօտեցումով մը թատերախաղը կը նմանի բարձրորակ եւ ուճաւորուած քանտային դիւցազններպուծեան մը. ասիկա կրնար բլլալ Հոյիփուտի բանաստեղծ ֆիլոսոֆին մէկուն Վեմարիմ, էթէ անշուշտ նկատի չունենանք այն հանգամանքը, ըստ որում՝ անիկա բացորոշօրէն անբարոյական բնոյթ ունի, թէեւ հեղինակին մտադրութիւնը հեռու է բնապաշտական բլլալէ: Բեմի ուղեցոյցները կ'ըսեն. «Ամբողջ քառերախաղը կը քակուի երազի մը պէս... դերակատարներուն շարժումները պէտք է ըլլան կ'ամ դանդաղ եւ կամ ալ ծայրայեղօրէն եւ անասկնալիօրէն արագ, նման կայծակի շողորմակութիւն»: Ուրիշ խօսքով՝ Ժրնէ կ'ուզէ յստակացնել այն պարագան, որ թատերախաղը իրական պատահարներ ներկայացնելու ձգտում չունի, այլ անիկա պարզապէս ցնորք մըն է, բանասիրկեալի մը կեանքի եկած

երազն է, տեղուտ երեւակայութեան մը տրդիւնքը:


Եւ իր արտակարգութեամբ, հակադարձութիւններով եւ տակնուվրայութեամբ՝ Ժրնէի ցնորքին նիւթը կը նմանի Թովմաս Մաննի եւ Գաֆֆայի պատմուածքներուն: Լէֆֆրանը թափառական մըն է, որ կը փորձէ հետապնդել վաւերականին, բնագոյային զեղեցկութեան եւ միտայեցողականիմ (intuitive) պատկանելիութիւնները, մարդկային ոչ-բարձր եւ պարզացուած էութիւններու հետ, որոնք գոյութիւն ունին այնպէս, ինչպէս որ են: Բայց Նոյնիսկ այն ատեն, երբ Լէֆֆրան կը փորձէ յաղթահարել իր տկարութիւնը եւ կը կատարէ արարքը, որ պիտի հաւանարեցնէր զինք միւսներուն, անոնք կը մերժեն զինք: Իր ընել կրցածներէն ոչ մէկը ընդունելի կը դարձնեն զինք: Կանաչ Ալքերը անզրապէտ է — իր զօրախտութիւնը ընտրած է զինք: Լէֆֆրան կրնայ կարգաւ եւ զրեւ — ան կ'ընտրէ՝ իր զօրախտութիւնը. բայց այս դիտակցութիւնն է, որ զինք հեռու կը սրահէ անելէն: Ինքնաճանաչման պատճառով է, որ մռնուած է, ինչպէս հայելիներու սրահին մէջ փակուած մարդը կորուսած է իր սեփական պատկերին անդրադարձներուն մէջ:

(Շար. 1)

ՄԱՐԹԻՆ ԷՍԼԻՆ



Կ Ո Չ



Վեց միութեններու կողմէ ստորագրուած ու վեցապատիկ անդամ յազիչ այս կուլը անշուշտ պիտի գտնէ համապատասխան արձագանգ մը ևւ, ամերիկացի մեր զազութիւն օրինակով, արժանաւորին արժանի՝ հանդիսութեններ պիտի կազմակերպուին ամէնուրեք։

Հանդիսութեններու կողքին, բնական է, որ մամուլը, ու մամուլին ա՛յս անդամը, ճիշդից յայտնէ պիտի անդրադառնայ Երևանիին։

Ան այդ, Յորելիական Յանձնախումբի կոչին հետ, կոչ կ'ընենք մեր մասնաւորականներուն ու զբոյժներուն, որ ձեռակերպին իրենց խոհերը Արամ Հայկազի գրականութեան մասին եւ գրութիւնները փութացնեն մեզի ամէնէն ուշը մինչեւ 15 Դեկտեմբեր, որպէսզի ճիշդից ժԲ. տարուան առաջին համարին մէջ կարենանք հաւաքաբար բնծայել մեր տուրքը կէս դարէ ի վեր ընթերցողին հոգին ճիշդից ծայններով ողորդող աշխուհական այս խառնուրդին, Արամ Հայկազին...

Ուրախութեամբ կը յայտնենք հայ հասարակութեան, որ ստորագրեալ միութիւններս որոշած ենք յոբելիական հանդիսութիւններով մեծարել տաղանդաւոր գրագէտ եւ հայ գրականութեան խնկարկու սերունդին իբրեւ կէսդարեայ ներկայացուցիչ, մեր բոլորին սիրելի՝ ԱՐԱՄ ՀԱՅԿԱԶԸ։

Սփիւռքի մերօրեայ իրականութեան մէջ հայ գրականութիւն մշակել, առանց ընկրկումի եւ յուսահատութեան յայտնու ծառայել հայ մշակութիւն, հերոսութեան սահմաններէն անցնող քացատիկ երեւոյթ մըն է։ Յիսուն տարի անվարան վտա պահել հայ գրի հանդէպ սէրն ու յարգանքը, անտեսելով մեր կեանքի դժուարութիւնները, խիզախութեամբ չափանիշները փշրող հայկական գիւցազներուն մըն է։ Ա՛յս եղած է Արամ Հայկազի կեանքը։

Յոբելիական այս հանդիսությունները կու գան վկայելու, թե մե՞նք՝ հայ զրի ու դպրութեան հանդէպ նախանախնդիր երիտասարդներ, որդեգրած ենք մեր արժէքները իրենց կենդանութեան յարգելու գաղափարը: Եւ այս, վստահ ենք, հարազատութեամբ կը մարմնաւորէ մեր ժողովուրդի զգացումը եւ յարգելու գիտակցութիւնը իր մէկ գաւկի՝ ԱՐԱՄ ՀԱՅԿԱԶԻ հանդէպ, հայ գրականութեան վերելքին վերջինիս բերած սքանչելի նպաստին համար:

Այս առիթով, յոբելիական ձեռնարկներուն իբրեւ դառախօս, Պէյրուսէն յատկապէս հրաւիրած ենք երիտասարդ գրագէտ Պօղոս Սնապեանը, ներկայացնելու եւ վերլուծելու համար Արամ Հայկազի կեանքն ու գործը:

Ամէն ընթերցող թող կռչ սեպէ այս գրութիւնը՝ իր մէջ արթուն մնացած հայուն ուղղուած, ա՛յն հայուն, որ հպարտանալ գիտէ իր արժէքներով, եւ յարգել՝ այդ արժէքներուն մշակները:

Կը յուսանք, որ այս՝ առիթ պիտի ստեղծէ Սփիւռքի տարածքին գտնուող հայահոծ այլ շրջաններու մէջ եւս պատշաճ ծրագիրներով մեծարել գրագէտ ԱՐԱՄ ՀԱՅԿԱԶԸ:

Սփիւռքի եւ Հայաստանի բերքերէն կը խնդրենք արտատպել սոյն կռչը:

Կազմակերպող Միութիւններ՝

ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ, Նիւ Եորք

ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ, Նիւ Ճըքվի

ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ, Պոսթըն

ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ, Տիբոյթ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ, Թորոնթօ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ, Մոնրէալ



ՇՆՈՐՀԱԿԱՆՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱՆՔ

ՅՈՒՇԵՐ ԵՒ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ, Կ. Սասունի, Պէյ-
րութ, 1972

ԻՐԻԿԱՄՈՒՏ (քանաստեղծութիւններ եւ պոեմներ)
Ա. Գասունի, Թեհրան, 1972

پاکین

مجلة شهرية ، أدبية وفنية علمية
مدير المسؤول
السيد آرئين كارنيك قزائجيان

PAKINE

REVUE MENSUELLE

LITTÉRAIRE & ARTISTIQUE

Propriétaire

Dr. A. KAZANDJIAN

բւգիւն

ԱՄՍԱԳԻՐ

ԴՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ԵՒ ԱՐՈՒՆԾՅՈՒ

ՎԱՐՈՋ ԽՄԲԱԳԻՐ

Կ. ՍԱՍՈՒՆԻ

ԽՄԲԱԳԻՐ

Գ. ՄԱԳԵՐԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ԱՆԴԱՄԵՐ

Յ. ԳԵՂԱՐԳ

Տ. ՊՄԿՈՒՆԻ

Բ. ՓԱՓԱԳԵԱՆ

Ն. ՊԱՐԹԵՆԵԱՆ

Ժ. ԱԹԱՐԵԱՆ

ՀԻՄՆԱԳԻՐ ԱՆԴԱՄԵՐԵԱՆ

† ԵՂ. ՊՕՅԱՋԵԱՆ

Խմբագրութեամբ հասցէ

G. SASSOUNI

Rue Sélim Boustani,
Beyrouth-Liban

Հեռաձայնի թիւ 296898

ՏԳ. ՀԱՄԱԳԻՐԵԱՆ

ՏԱՐԵԿԱՆ ԲԱՃՆԵԳԻՆ

ԼԻՐԱՆԱՆ	25 Լ. ՈՍԿԻ
I ՏԱՄԱՀՄԱՆ	10 ՏՈԼԱՐ
II ՏԱՎԱՅԱՌ	2-50 Լ. ՈՍԿԻ



Վարդապետ Խաչատրյան

G. SASSOUNI

Rue Sélim Boustani

Beyrouth - Liban